1900

ԹԻՒ Ջ. ՅՈՒՆԻՍ

ՀԱՅԿ



ՏՊԱՐԱՆ Մ. ԱԹՈՌՈՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ·

ՊԱՏՑՈՅՆԱԿԱՆ

1· Քաղուածք ի կոնդակաց Վեհ.Հայրապետի 275
2· Քաղուածք Սինոդի օրագրութիւններից 267

ԿՐՕՆԱԿԱՆ

3· Քրիստոնէական սիրոյ մասին· Բենիկ Վ· 277
4· Ծաղկաքաղ ընտիր մտքեր (Հարանց վարքից) Ն· աբեղայ Տ· Աւետիքեան 280

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

5· Օրթոդոքս, Կաթոլիկ և Բող· եկեղ· 281

7· Մայր աթոռ · · · · 285
8· Գ· Ճեմարան · · · · 287
9· ՏԱՃԿԱՀԱՑՔ · · · · 289
10· Աւստրիոյ կաթոլիկ Հայք ·Գ Վ· 291

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

11· Անգլիական մինչեւ կրթութեան ընորոշ գծերը (Շարունակելի) Ս· Ճ· 295
12· Նախակիլիկեան—Հաթեան նոր արձանագրութիւն մը ի Կեսարիա· Տրդատ եպիսկոպոս Պալեան 298
13· Դանիական նամականիք · Ս· Մ· 300
14· Հայ ժողովրդական առասպելները (Շարունակելի)· Մ· Աբեղեան 302
15· Երկրագործական անհրաժեշտ գիտելիքները (Շարունակելի) Գ· Ղ· 308

ԱՁԼԵՒԱՁԼՔ

16· Ի՞նչպէս պահպանուիլ ծաղիկ հիւանդութիւնից (Թարգմ·) Բժշկապետ Ա· Բաբայեան 312
17· Մանրալուրք · · · · · 315

18· ՑԱՒԵԼՈՒԱԾ·—Երկու վաւերագրեր Տ· Խաչիկ վ·ի ձեռագիրներէն ժողովածուից Խ· Ծ· Վ· Գ· 317

Հայագիտական տեղեկութիւններ·

ՑԱՑՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ·

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ·

Համառօտ պատմութիւն Ներսիսեան Հոգևոր Դպրոցի 75 ամեայ դոյութեան· Սե· Մալխասեանցի· Թիֆլիս· 1900 թ·

Ուայց—Խղճով դատաստան· Թարգ· ռուսերէնից, Թիֆլիս· 1900·

Հայկական նշանագրեր հարթակարի համար· Օր· եղ· Պատկանեանի·

Բժշկ· Վահան Արծրունի—Թիֆլիս, կակուղ Շանկր, Սուսուննակ· Թիֆլիս, 1900:

Վերջին երեքը տպուած են Հրատարակչական ընկերութեան ծախսով:



ԱՐԱՐԱՏ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

ԾԱԽՐ. Լ.Գ. ՏԱՐԻ | ՀԱՄԱՐ ՎԵՑԵՐՈՐԳ | ՅՈՒՆԻՍ. 1900 Թ.

ՀՐԱՄԱՆԱՒԵՔ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՄԲՌԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՄՐՐՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ
1900

Дозволено цензурою 23 Іюня 1900 г. г. Тифлисъ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

ՔՂՂՈՒԹՔ Ի ԿՈՆՏԱԿՈՍ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնդակ յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով պատուիրի մատուցանել ի հաստատուԹիւն Նորին ՍրբուԹեան զօրագիրս սինոդի. Թ. 494։

— Ծանուն Թեմակալին Վրաստանի և Իմերեթի յաղագս վարձելոյ զմի մանուկ անտառապետ վանն կալուածոցն Մարցայ և անտառին Հաղարծնի. Թ. 503։

— Ծանուն Թեմակալին Բեսարաբիոյ Գեր. Նեբսէս Արքեպիսկոպոսի, յաղագս մատուցանելոյ զծրագիրը պայմանի վարձակալին ամենատպատական կալուածոց Քիշնեւի և տես Նորին ՍրբուԹեան. Թ. 504։

— Ծանուն Հոգևոր կառավարուԹեան Հին Նախիջևանի, որով կարգի Տ. Ծովէլ վարդապետն ի վանահայր Կարմիր վանուց. Թ. 516։

— Ծանուն Եկեղեցական Խորհրդոյ եկեղեցեայ Ս. Պետերբուրգի, որով պատուիրի տալ 150,000 ր. փոխարինաբար եկեղեցական Խորհրդոյն Մոսկուայի, վանն շինուԹեան կալուածոց եկեղեցւոյ տեղւոյն. Թ. 522։

— Ծանուն Իշխան Հոգաբարձուի եկեղեցեայ Ս. Պետերբուրգի և Մոսկուայի, որով յայտնի նմա վերադրեալ անօրէնուԹենէ վանն 150,000 րուբլեաց. Թ. 523։

— Ծանուն կոնսիստորիային Երևանայ, որով Թոյլատրի Ծովհաննէս քահ.-ին կալչուանի կրել փիլոն և ատանալ բաժին ի հասոյԹից ծխոց իւրոց, առանց քահանայագործելոյ. Թ. 532։

— Ծանուն Փոխ Թեմակալին Երևանայ Գեր. Սուքիաս Արքեպիսկոպոսի, յաղագս արձակելոյ գուսուցիչս Թեմական դպրանոցի և կատարելոյ նոր ընտրուԹիւն ՀոգաբարձուԹեան. Թ. 576։

— Ծանուն գործակալին Բագուայ Տ. Արսէն վարդ.-ի, յաղագս գնալոյ ի Շուշի և կատարելոյ նոր ընտրուԹիւն հոգաբարձուացն Թեմակ. դպրանոցի տեղւոյն. Թ. 580։

— Ծանուն կոնսիստորիային Արցախայ վան տալոյ ձանապարհածախս Տ. Արսէն վարդապետի և տեղի բնակուԹեան յԱռաջնորդարանի Շուշւոյ. Թ. 571։

— Ծանուն Տեսչի Թեմակ. դպրանոցի Շուշւոյ, որով պատուիրի արձակել զխուժմն ուսուցչաց դպրանոցին և ինքեան գալ ի ս. Էջմիածին. Թ. 582։

— Ծանուն Թեմակալին Վրաստանի և Իմերեթի Գեր. Գէորգ Արքեպիսկոպոսի, յաղագս կատարելոյ նոր ընտրուԹիւն հոգաբարձուԹեան Ներսիսեան Հոգևոր դպրանոցի. Թ. 584։

— Ծանուն վանահօր Տաթևու, որով յայտնեցաւ նմա զկարգմանէ Շիրեմ Աբեղայի Աղայեանց ի վանահայր անտապատին Տաթևու Թ. 586։

— Ծանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով պատուիրի յեկամտից ուխտատեղեաց Տփխեաց տալ զորոշեալ կենսաԹոշական պ. Պալեանի և որբոց Վ. Արովեան ի գումար 700 ր. Թ. 595։

— Ծանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով պատուիրի անօրինել առնել փոխարինաբար յեկամտից եկեղեցական կալուածոց Ախալցխայի զպակասորդ գումարն վանն շինուԹեան ամենատպատական տան Տփխեաց որ յԱբաստապատեան հրատարակի. Թ. 597։

Պարգեւ Հայրապետական.

Կոնդակ յանուն կոյս Հռիփսիմէի Թայիրեան, որով շնորհի նմա լանջախաչ արծաԹեայ ոսկեզօծ. Թ. 535։

Կանոնակը շնորհակալութեանց, օրհնութեանց եւ ցաւակցութեանց.

Կոնդակ օրհնութեան յանուն Բարձրութիւն ք.-ի Բարձրութիւնեան Ամենաբաւան գեղջ Նուխեայ վասն 100 ր. նուիրաբերութեան. թ. 467։

— Մխիթարական յանուն եղբարց Բուդաղեանց ի Բագու վասն մահուան եղբօր նոցա. թ. 480։

— Օրհնութեան յանուն հոգաբարձուաց Ներսիսեան դպրանոցի ի պատճառս 75 ամեայ յոբելինի դպրանոցին. թ. 495։

— Օրհնութեան յանուն եղբարց Թորոսեանց Նուխեայ վիճակի վասն բարեգործութեանց նոցա յազգային և յեկեղեցական գործս. թ. 563։

— Օրհնութեան յանուն Անտոնի Թամբեան Աստրախանցւոյ վասն 100 ր. նուիրաբերութեան. թ. 566։

— Օրհնութեան յանուն Ժողովրդեան Երևան քաղաքի վասն նորակառոյց եկեղեցւոյ տեղւոյն, որ յանուն ս. Գրիգորի Լուսաւորչին. թ. 577։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Տիկին Կատարինէի Բակովբեան Կաչկովեանց, յաղագս նուիրաբերութեան նորա մի դիպակ շապկի, մի ուրարի և մի գօտւոյ ի Մայր Տաճարն. թ. 602։

— Օրհնութեան և գոհունակութեան ընդ ձեռն Թեմակալին Քիշնևի Գեր. Ներսէս Արքեպիսկոպոսի առ բարեպաշտօն Տիկնայս մոսկովաբնակս՝ Տիկին Հեղինէ Մխանսարեանց, Տիկին Հռիփսիմէ Մալբով և Տիկին Թուստեանէ Շորշորեանց յաղագս նուիրաբերութեան նոցա՝ առաջնոյն վեց ուրարի, երկրորդին երեք և երրորդին երկու, ի պէտս Մայր Տաճարի։

— Օրհնութեան և գոհունակութեան առ բարեգործ պարոնայս Բագուեցիս, որք առատ նուիրատուութեամբք օժանդակ եղեն ի բարեկարգութիւն վանուցն Սևանայ՝ ընդ ձեռն վանահօր նորին Տ. Սարգիս վարդապետի, և են այսոքիկ՝

Եղբարք Բուդաղեանք ի յիշատակ հանգուցեալ եղբօր իւրեանց երկու հազար (2000) ր.
Եղբարք Թումայեանք երեք հարիւր (300) ր.
Համբարձում Մելիքեան երեք հարիւր (300) ր.
Միքայէլ Արամեան երեք հարիւր (300) ր.
Կարապետ Լալայեան մի հարիւր (100) ր.
Պօղոս Ղուկասեան երեք հարիւր (300) ր.
Արշակ Ղուկասեան երկու հարիւր (200) ր.
Պարոնայք ոմանք Լմբոյնի երկու հարիւր յիսուն (250) ր.

Ընդամենայն երեք հազար եօթ հարիւր յիսուն (3750) րուբլի։

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Մայիսի 3. Սինօդը պատուիրեց Գանձակի Հոգևոր կառավարութեան Մայր Աթոռի քարվանսարայի վարձակալից սահնակ 1899 թ. յունիսի 1-ից մինչև 1900 թ. յուլիս վարձը՝ 1803 ր. և անյապաղ ուղարկել ս. Սինօդին։

Մայիս 15. Վրաստանի և Իմերէթի Հայոց կոնսիստորիայի յայտարարութեան համաձայն Սինօդը թոյլտուութիւն է խնդրում Կովկասի Տ. Կառավարչապետից Արշակ քահ. Մինասեանի համար, որ արտասահման դնայ բժշկուելու և համալսարանում աստուածաբանութիւն լսելու։

Մայիսի 15. Լուծուում է, Քերչ դիւղացի (Տփղիսի թեմում) Յովհաննէս Բեսեանցի պսակը իւր կին Սոնա Սարգսեանի հետ և վերջինս թոյլ է արուում ուրիշի հետ ամուսնանալ։

Մայիս 15. Լուծուում է Ղարաբաղի թեմի Քարագլուխ դիւղացի Կարապետ Դաւթեանի պսակը իւր կին Աննա Յովհաննիսեանի հետ և թոյլ է արուում վերջինս նորից ամուսնանալու։

Մայիս 15. Անվաւեր է, համարուում մահտեսի Համբարձում Քարամեանի և Եղոս Գրիգորեանի պսակը, իսկ այդ ամուսնութիւնից ծնուած զաւակները ապօրինի։ Պսակիչը Բակովը քահ. Մատթէոսեանց՝ Բաշքիանդ գիւղացի (Երևանի թեմ), պսակուածները և նոցա խաչեղբայրը Յովսէփ Հասրաթեանցը յանձնուում են մարմնաւոր իշխանութեան դատին։

Մայիս 17. Սբբոյն Սինոդը ատուա-ծաբանութեան մաղխատրոս պսիր Պերճ Պռօշեանցին, Թոյլատրում է չորս ամիս ժամանակով գնալ արտասահման, Փարիզի ցուցահանդէսը:

Մայիս 17. Սինոդը Թոյլատրում է Տըփլիսի կոնսիստորիային Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցուց փոխադրիներաբար 4000 ր. վերցնել և տալ Բաքուում քաղաքի եկեղեցու շինութիւնը վերջացնելու համար: Շինութեան աւարտուելիս յետոյ Բաքուի եկեղեցու եկամուտներից պիտի տարեկան 1000 ր. յետ տանել ս. Փրկիչ եկեղեցուց վերցրած պարտքը ծածկելու համար:

Մայիս 17. Լուծուում է, Երևանցի Վասն Տարիվերդեանի պսակը Սրբուհի Յովակիմեանի հետ, վերջինիս Թոյլ է արուում կրկին ամուսնանալ:

Մայիս 19. Ընդունուում է հոգևոր կոչման մէջ Գրիգոր (որ և Պատուական) Տէր Անտոնեանը, Մոզես գիւղի համար քահանայ ձեռնադրուելու:

Մայիս 19. Լուծուում է, Մովսէս Յովաաբեանցի (Մովսէս գիւղից, Տփխիսի թեմ) պսակը իւր կին Սուլթան Յովաաբեանցի հետ և Թոյլ է արուում մարդուն ամուսնանալ ուրիշի հետ:

Մայիս 22. Լուծուում է, Շուշեցի Մ՚ելքա-յէլ Յովաաբեանցի պսակը իւր կնոջ Աննա Աբրահամեանի հետ և Թոյլ է արուում վերջինիս՝ զօրութեամբ օրինայ 2-դ կէտի 45-դ յօդ. 10-դ հատոր մասն Ա., նորից ամուսնանալ:

Մայիս 24. Լուծուում է, Գանձակեցի Վասիլիկայի պսակը իւր ամուսին Տրդատ Նազարեանցի հետ և Թոյլ է, արուում կնոջը նորից ամուսնանալու վերոյիշեալ յօդուածի զօրութեամբ:

Մայիս 24. Լուծուում է Շամիր Մ՚ելքա-յէլեանցի (Ասորեանի թեմ) պսակը իւր կին Թամամի հետ և Թոյլ չէ արուում ոչ մէկին նոցանից նորից ամուսնանալու:

Մայիս 31. Լուծուում է Շուղակաթ Մանուկեանի պսակը իւր ամուսին Բարութիւն Մաամիկոնեանի հետ և վերջինիս Թոյլ է արուում նորից ամուսնանալ (Երևանի թեմի Սարի Բաշ գիւղ):

ԿՐՕՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԱՆ ՍԻՐՈՑ ՄԱՍԻՆ

ՀԱՐՑՆՈՒՄ եմ ձեզ, քրիստոնեայ հայ եղբայրներս, երբ ապաշխարութեան օրերու մաքրիչ հովը թափմտութիւն տուաւ ձեր թըմբրած աչքերին ու ձեր ծանրացած արտևանունքները վեր բարձրացան, ի՞նչ տեսաք առաւել հսկայական առաքինութիւնների շարքում: սէրը չէ՞ր արդեօք: Եթէ ո՛չ, վա՛յ մեզ, վասն զի առաքինութեանց պարտէզը մնայել կարող չէք առանց սիրոյ, որ հրաշալեաց ղրախտի միակ դուռն է, միակ մուտքը:

Ո՞ւր էր թէ կարող լինէի սէրը սահմանել, որ մի անհունութիւն է, սէրը պատմել, որ անճառելի է: Դա մի զգացմունք է, որ Աստուած մարդու կրծքի մէջն է դրել նորա ստեղծագործութեան օրից, որպէս զի կեանքը շարունակուի, կեանքը քաղցրանայ և կեանքը կատարելագործուի ու հրաշանայ: Այս խօսքերն ես ի զուր չեմ շեշտում՝ «շարունակուի, քաղցրանայ, կատարելագործուի կամ հրաշանայ», վասն զի սէրը երեք համապատասխան արտայայտութիւն ունի: Ամուսնական սէր, որ երկու անձնաւորութեանց կըրծքումն է, խօսում: նորա գրկումն է պահուում կեանքի շարունակութիւնը: Որդիական և ծնողական սէր. նախորդին և յետնորդին իրար հետ կապող սէրն է այս և հինց այդ կապը կեանքին քաղցրութիւն է տալիս: Որքան և սկզբնական է սիրոյ այս երկու տեսակը, այնուամենայնիւ դրա շատ նեղ են, դոցա մէջ լոկ մերձաւորների երջանկութիւնը կայ, որոնցից դուրս միայն անտարբերութիւն և ատելութիւն ու նախանձն են թագաւորում, եսականութեան այս հարուստ բերքերը: Եթէ այս տեսակի սէրը սիրոյ ծառի արմատն է՝ չէ՛ սակայն ամբողջ ծառը, չէ՛ հազարաւոր ճիւղ, ծաղիկ ու պտուղով պսակուած համաստաւած բարձունքը սիրոյ: Ես լռում եմ սիրոյ այս

տեսակների մասին և կանգ եմ առնում այն սիրոյ վերայ, որ կեանքն է, կատարելագործում որ հրաշացնում է կեանքը. այդ տեսակը «Քրիստոնէական սէր» անունն է կրում։

Այն սրտակոտոր վայրկենին, երբ Գողգոթայի բլռնունքում «Ամենայն ինչ կատարեալ է» վերջին հառաչանքը ցամքեցաւ անարատ լոհի շրթունքների վերայ, նոյն հառաչանքից մի ծաղիկ բուսաւ ու բոլորեց արիւնոտ խաչը։ Ծաղիկը ու խաչապաշտ քրիստոնեան չէ քրիստոնեայ, երբ պաշտէ խաչն ու մերժէ այն ծաղիկը, որ խաչի զօրութիւնն է, խորհուրդն է, հոգին է, ամրողջ մեռնող խաչեցեալից միշտ անբաժան ու անմահ խաչեցեալն է։ Այդ ծաղիկը «բիւզանդական» սէրն է։

Քրիստոնէական սէրը մի անհունութիւն է, որ բարութեամբ է լցրած. նա ամիսում է իւր մէջ ոչ միայն որոշ անհատների բարեկամութիւնը, այլ ամբողջ մարդը. նա տարածում է նոյն իսկ մարդկանցից դուրս, կենդանիների ցերայ։ Քրիստոնէական սէրը հաւաքում բերում է բոլոր մարդոց ու լեցնում սիրողի սիրտը. կապուում են սիրուողները սիրողի հետ և բոլորը միասին միանում Աստուծոյ հետ, որ կատարեալ Սէրն է։ Հէնց այդ ներդաշնակ միաւորութեան մէջն է կատարելութիւնը, հրաշքը կեանքի։

Ճշմարիտ քրիստոնէի համար մէկ առաքինութիւն կայ միայն, և այն սէրն է. մնացեալ առաքինութիւնները լոկ սիրոյ ճիւղաւորութիւններն են։ Սիրողը զթոտ է, որովհետև սէրն անգութ լինել չի կարող. համբերող է՝ որովհետև երկայնամիտ է, վեհանձն է՝ որովհետև սէրը նախանձ չունի, հեղ է՝ որովհետև սէրը նախանձ չունի, հեղ է՝ որովհետև սէրը հպարտ լինել չի կարող, բարի է՝ որովհետև սիրողը չարիք հասցնել չի կարող, ներողամիտ է՝ որովհետև սէրը խաւսասիրտ չէ ևլն։ Այս իսկ պատճառով ես չեմ հաւատում՝ որևէ յանցանք կարող է ջրկել մարդուն Աստուծոյ արքայութիւնից, եթէ մարդ խնացել է քրիստոնէական սիրով սիրել։

Ո՞ւր է քրիստոնէական սէրը։ Քրիստոնէական սէրն ամենուրեք է. նա խօսում է սառուցեալ բևեռներում, այրեցեալ երկրներում, արեան դաշտերում, մոխի բանտերում։ Նա նահատակների շիրիմների վերայ ծաղկող աբընդդէմ վարդն է։ Այս սիրուց էլ աւելի ամէն ինչ ընդդէմկող հրաշք չի եղել. սէրն երկրագունդից ընդարձակ է, վասն զի ամրողջ երկրագունդն է, պարունակում։ սէրը և սիեզերքից մեծ է, վասն զի նա ծաւալուում է սիեզերքից մեծ Աստուծոյ շուրջը։

Գուցէ, կուզէք քրիստոնէական սիրոյ պատկերներ տեսնել, բարի. դնանք այդ սիրով ապրողներից մէկի խղճուկ բնակարանը, մի քարայր, որ մշտական Հիւսնապատ լեռների գագաթումն է գտնուում։ Մռայլ գիշեր է, մռընչում է բուքը, ձեան հոսանքով բաղխում մատուռը։ Մատրան մէջ խաչուած սիրոյ առաջ մի կանթեղ է վառուում։ Նորա ազօտ լուսի տակ երկու հոգի ծունկ իջած բոցոտ մրմունջներ են տարածում խաչի պատուանդանի շուրջը։ Ալեզարդ ծերուկը դարձաւ դէպի մռայլ պատանին, որի ընչացքները հպիւ էին սևացել. «Որդեակ իմ կարող ես հաւատարիմ մնալ ուխտիդ, կարող ես այս սառցապատ միայնութեան մէջ, այս սոսկալի բուքերու տակ ճանապարհների վերայ շրջել ու մոլորուած ճանապարհորդներին մնհուան ձեռքից խլելով մեր մատուռը բերել»։ — Այո, Հայր, պատասխանում է երիտասարդը, մնաք բարով աստւմ անձնական երջանկութեան, երկու կաթիլ գլորում աչքերից խաչի առաջ ու սև քողը գլուխը քաշելով դուրս է սողում բուքերու տակ մոլորուած ճամրորդներուն օգնութիւն հասցնելու համար։

Աչք ածեցէք այս դաշտի վերայ ու եռացող կեանքը տեսէք. խելագուրկ ու ապականուած ժողովուրդը մէկ տեղ խունկ է ծխում մամոնայի արձանին, միւս տեղ չարաթոյն լեզուով խայթում մերձաւորին. այստեղ կեղծիք է, ճաուում կեղծ բարեպաշտը, այնտեղ այրնաց և սրբոց առնն ուտում կեղծ բարեգործը. այստեղ խարեբայութեան նուրբ մակարդներ, այնտեղ ոգիտութեան անվերջ խաւար. այստեղ օտարամոլութեան ախտն է եռում, այնտեղ սուրբ յիշատակաց մնացորդք անարդուում։ այստեղ բռնութիւն, այնտեղ անհնազանդութիւն. մէկ խօսքով ամենեքեան խոտորեալ, ամենեքեան անպիտանացեալ, ամենեքեան կոյր և մոտակայ անկումն տեսնելու անզօր։ Այս տխուր պատկերի առաջ զեղ-

նում դալկանում է և նախնեաց սուրբ շիրիմների վերայ դառնիարակուած մկկը: Նորա հոգու մէջ անմիա ժողովրդի դլխին դալիք թշուառութիւնն է պատկերանում: խռովում է նորա հոգին: Նա շրջում է առեւտրութեամբ փրփրացող հրապարակի վրայ, նախատում յանդիմանում դարձ քարոզում իսկ կառաղի ամբոխը նորա վերայ է բարձում իւր ախտերը, ապտակով ձագիում և անժամանակ երկրի անդոյս ծոցը դրկում սիրոյ առաքեալին, որի շիրմի շուրջը միայն ծաղիում ու պաղաբերում է սերմանուած սէրը:

Ահա ձեզ մի ամնուական օրիորդ, փափկութեամբ սնուած, ծնողների սիրովը ցօղուած մի աչառէզ ալջիկ, որի վերայ շատ ընտիր երիտասարդների յուսալի աչքերն էին սևեռուած: Բայց ահա նա մերկանում է, իւր գուքան ու զարդը, մետաքան ու կերպաս, հագնում կամաւոր այրիութեան սև շորը, կրծքի վերայ մի կարմիր խաչ կարում, թևն առնում հայրական ժառանգութիւնից մի կողովիկ միայն և անձնական բազդի պերեզմանի վերայ հոգոց ասելով հեռանում է: Ուզում ես տեսնել նորան. մտիր ձանապարհին վերայի հիւանդանոցը. ահա նա լուանում է, անտէր հիւանդի վէրքը, հանում իւր կողովից սպեղանի ու փաթեթ և ամրում թշուառի ցաւը: Մ՛տիր լերան լանջում այրի պէս մենակ ցցուած կեցած վանքը. ահա նա իւր կողովով հոգին ուրախ, դէմքը տխուր գնում է, շրջակայ գիւղերը, որբերի, այրիների արցունքը սրբելու: Նա ժողովում նա կերակրում է, քաղցածին. այրու քոյրը, որբի մայրը նա է, վշտերի մէջ մխիթարիչ, մահուան անկողնում յուսադրող, դառն վհատութիւնը քաղցրացնող այս քոյրն է, ողորմած քոյրը, քրիստոնէական սիրոյ այս ընտիր առաքեալը: Շատ են այսպիսիները:

Ա՛րդ, տեսա՞ք ուր է քրիստոնէական սէրը, տեսա՞ք քրիստոնէական սիրոյ յուսաշատ պատկերը:

Սէրն ոյժ է, մի ոյժ, որ հզօր է ատելանքից, հզօր աշխարհի բոլոր ոյժերից, հզօր է մահից. մահու սարսափը սոսկալով փախչում է սիրոյ առջևից: Սէրը մի վշտաւէտ խարոյկ է, որ արեան ոչ մի հեղղով չի հանդչի: «Քրիստոնէական սէրը, ասում է մի իմաստասէր, ձեռքերից շղթան խորտակող, ոտքերից կապանքներն արձակող և մարդուն ազատութիւն տուող ոյժն է»: Ու իրաւունք ունինք պնդելու. տուէք քրիստոնէական սէր, և կջնջուի աշխարհից ամենայն չարիք ու բռնութիւն:

Քրիստոնէական այս մեծ ոյժին էք պարտական, կանա՛յք, որ երբեմն մութ կամարների տակ կխաւսափիք Աստուծոյ արևից ու անձրևից զուրկ ծաղկի նման՝ խարոյ հեթանոսութեան, հեթանոս անհաւասարութեան ենթեսէն. իսկ այժմ Աստուծոյ արևն ու անձրևը և ձեզ վերայ կաղայ ու ազատութիւն կշնչէք:

Այս ոյժին ես պարտական, երբեմն աշխարհի հզօրին սորուկ, սիրոջդ ձեռքով վաճառատներում անասունի պէս վաճառուող հէգ մա՛րդ՝ քեզ համար յաւաջ դնալու յոյս չկար. սորուկ էիր ծնուած, սորուկ պիտի ապրէիր, սորուկ մեռնէիր. իսկ այժմ՝ քրիստոնէական սէրը քանդել է կապանքներդ, սիրիր, աշխատիր, զօրացուր հոգիդ և վաղը իշխանական ամօռ նստելու իրաւունք էլ կունենաս:

Այդ սիրուն ես պարտական, մանո՛ւկ աշակերտութիւն, երբեմն սրունքներդ կոճղի մէջ դամուած, բրածեծ ու հոգիդ բռնութեամբ դաստիարակուող աշակերտութիւն, հասակաւորներից արհամարհուած պատանեկութիւն: Իսկ այ՛ժմ՝ այժմ՝ քո հասակդ, քո կեանքդ և հասակաւորներին է ցանկալի դարձել: Ճիշմ՛ում ես թէ ինչպէս քո հասակակիցներդ արհամարհողներուն նախատեց սիրոյ վարդապետն ու ձայն տուաւ. «Թոյլ տուք մանուտոյդ գալ առ իս»:

Վերջապէս ո՞րը թուում քրիստոնէական սիրոյ արդիւնքներից. բարձր իգլուխ պանծացող աստուածահաճոյ հասատատութիւններըն, հաւասարութեան ուղի՞ն, ազատութիւնը. անվերջ են այդ աննման ոյժի արդիւնքները: Այս արդիւնքի առաջին էր խոնարհուում սըրտերի մեծ աշխարհակալ Պօղոս ասելով. «Ձեզոնները կլռեն, մարգարէութիւնները կխափանուին, իմաստութիւնը կխափանուի, բայց երկք բան ընդ միշտ կմնայ՝ հաւատ, յոյս, սէր,

և սոցանից ամենամեծը սէրն է»: Դա մի հաճախարհային լեզու է, որ խօսում է կրթեալի և անկիրթի հետ, տգէտի և գիտնոյ հետ, մի անժամանակ անցագիր մարդկանց սրտերի աշխարհը շրջելու:

Արդ, քրիստոնէական սիրով վկրտուած իմ ունկնդիրնե՛ր, քրիստոնէական կրօնը սիրոյ կրօն է, իսկ սէրն ամենուրեք պիտի լինի, ուստի քրիստոնէական կրօնը ոչ վանքերի կամարներում պիտի քարանայ և ոչ կրօնաւորների կրծքում պիտի կաշկանդուի. նա ամէն տեղ պիտի մտնի, գերդաստան, դատարան, առեան, ապարանք ու խրճիթ, ամէն տեղ պիտի թափանցէ: Մի վայրկեան հանեցէք կրօնից սէրը, և դուք մի անհուն դատարկութիւն կունենաք, արեան գետերի մի անվերջ հոսանք՝ հրեշտակ մարդուն արիւնըռուշտ գայլ դարձած, առելութեան խաւարը ձեր հոգու վրայ լինած:

Քրիստոնէական սէրն առ մարդ և առ Աստուած՝ անխզելի շղթայով են կապուած. չկայ ճշմարիտ սէր առ Աստուած առանց սիրոյ առ մարդ: Փրկիչն Յիսուս մարդկային գերազանց կողմերի մարմնացումն է. կարելի չէ Յիսուս սիրել, երբ մարդն ես առում, և ընդհակառակն:

Այս ամենից յետոյ յորդորում եմ ձեզ. վառ պահեցէք ձեր հոգու մէջ սէրն իբրև սրբազան զոհի նուիրական հուր, վարժուեցէք այդ սիրուն ու կհամոզուիք թէ՝ եթէ ձեր կեանց դրքում կայ մի փայլուն երես, որ սիրան անհուն հրճուանքով է լցնում, այդ այն վայրկեաններն են, երբ դուք Յիսուսի սիրովն էք սիրուած:

Մայրե՛ր, երբ ձեր գլուխը ծռի ձեր հոգու հատոր վաւակի օրօրոցի վերայ և ժպիտն ու համբոյր կսթին մանկան վարդ երեսն ի վար, հետն էլ «սէր» շշնջացէք մատաղ ականջին:

Երիտասարդ, երբ սրտիդ ու մաքիդ ընկերին հանդիպես ու կարօտագին կերպով գրգռուիք պիրար, շշնջիր «սէրն է այս»:

Հայ մարդ, երբ ապագիդիդ խոցերի վերայ ճակտիդ քրտունքն ու աչքիդ ցօղը թափուի ու լուանայ, մխիթարուիր ու կարդա՝ «սէրն է այս»:

Հայ ծերուկ, երբ լայնաբերան գերեզմանի քովը կանգնած աչքդ յառած դէպի սրբազան խաչն Յիսուսի, որից յոյսերի մի առատ ցօղ է իջնում կուրծքդ ու հանդչնում այնտեղ մահու տագնապը, շշնջա՛ դերեզմանից հեռու կանգնած սերնդին «սէրն է այս»:

Ցրբ ապաշխարութեան օրերում ձեր աչքերը սևեռուեց կարմիր խաչափայտին, թող ձեր մրմունջն ու ապօթքն այս լինի՝ Տէր իմ Յիսուս, Տէր իմ Յիսուս, է՛ի, է՛ կ սիրովդ անհուն սիրէ, Հոգուս *:

Բենիկ վարդապետ

ԾԱՂԿԱՓԱՂ ԸՆՏԻՐ ՄՏՔԵՐ

(ՀԱՐԱՆՑ ՎԱՐՔԻՑ)

Մարտիրոսութեան ասպարէզ միշտ կայ: Քրիստոսի սուրբ վկաները կռապաշտութիւնը յաղթահարելու, տապալելու համար պատերազմում էին բռնաւորների հետ: Որկրամոլութիւնը, քղջախոհութիւնը մեղքի բռնակալներն են, որոնց դէմ պէտք է մարտնչել, և ով նրանց յաղթէ միևնոյն է թէ մեհեանները է կործանում, կռապաշտութիւն ջնջում ու դասակից լինում Քրիստոսի բարւոք, կատարելապէս խոստովանող նահատակներին:

— Մենք երկնաւոր թագաւորի զինուորներն ենք. երբէք մեր մարմնին չպէտք է հանդստութիւն տանք, այլ քանի այս աշխարհումն ենք, միշտ պիտի պատերազմենք արդարութեան համար: Ով սիրում է մարմնի հանդստութիւն և փափկութիւն, նորանից հեռու է Աստծու երկիւղը:

— Քրիստոնեան պարտաւոր է խաչել իւր անձը հոգևոր կատարելութեան համար, անձնատուր չլինելով նիւթապաշտութեան և մարմնի կորըստեան նպաստող մեղկացուցիչ վայելքների. չպիտի վախենալ սովից, ծարաւից, ցրտից, ցաւերից, բամբասանքից. պէտք է տոկալ, պէտք է վարժուել ճգնելու հոգւով, մտքով, սրտով. եռանդով և արիութեամբ մղել պատերազմ սրբութիւնը պաշտպանելու համար:

— Երանելի Յովհան Ոսկեբերանն առաց. սուրբ

---

* Խօսուած է Երևանի ս. Պօղոս—Պետրոս եկեղեցում 1900 թուի պահոց երկրորդ կիւրակէին:

գերքը կարդալով, պէտք է նաև հատարենք ըմբռնածները։

— Աչքերդ ուղիղ պահի՛ր, լեզուդ զգաստ, խոյս տուր դատարկ բաները լսելուց, մտդ միշտ աչքի առաջ ունեցի՛ր. մի՛ բարկանար, հրաժարուիր նիւթապաշտութիւնից և մարմնական հեշտութիւնից, ամեն ժամ աղօթիր և քո ամեն գործերդ և մտածութիւններդ ուղղուած լինեն դէպի Աստուած. ով այսպէս անէ, նա հատարեալ կը լինի։

— Եթէ մէկը կամենում է տուն շինել, նախ ժողովում է ամեն տեսակ հարկաւոր նիւթեր. այսպէս և մենք եթէ կամենում ենք հատարեալ լինել, պարտաւոր ենք ամեն տեսակ առաքինութեանց տիրանալ։

— Ամենայն զգուշութեամբ աշխատիր չմոռանալ, որ քո մէջ բնակած Աստծուն չանարգես և չհեռացնես քեզանից։

— Մի հողագործ մշակ շատ հարստացաւ. նա կամենալով, որ իւր որդիներն էլ շարունակեն իւր մշակութիւնը, ասաց նրանց. դիտէք, որդիներս, ինչպէս ես հարստացայ. նրանք առանցին. «աղաչում ենք, սովրեցրու»։ Հայրն ասաց. «տարուայ մէջ մի օր կայ, ով որ այն օրը գործի մէջ լինի, շատ կհարստանայ. միայն ծերութիւնից մոռացել եմ չեմ կարող ասել, թէ այդ որ օրն է. ուստի դուք մի ծուլանաք, ամեն օր աշխատեցէք, որ այն օրհնեալ օրը ձեր ձեռից չանցնի»։ Այսպէս ամեն բանի մէջ միշտ աշխատելով միայն մենք կը գտնենք վերկութեան ճանապարհը։

— Հին հռոմայեցիք երբեմն տաճարների ճակատներին գրում էին. momento mori! յիշի՛ր մահը. իսկ եգիպտացիք երբեմն նշանաւոր խնջոյքներում առաջին տեղը բազմեցնում էին մի ննջեցեալի մումիա—զմռսուած դիակ, ինքնամոռացութեան մէջ չընկնելու համար։ Աբրահամը երբ գնաց Աւետեաց երկիրը, նախ իւր համար գերեզման գնեց։

— Մեր սիրտը տեղ ծառած է Աստծու բնակարանը լինելու համար։

— Դատարկութիւնը մահ է բերում. դատարկ մարդու աղօթքն անընդունելի է. մարդ պէտք է կարողանայ իւր ձեռքի աշխատանքով դոնէ մէկ ուրիշ կարօտ մարդու կերակրել։

— Մի անգամ հայր Մակարի համար խաղող բերին. թէպէտ շատ կարօտում էր ուտել, բայց երեն զոպեց, ուղարկեց խաղողը մի այլ հիւանդ եղբօր. սա էլ ստանալով շատ ուրախացաւ, բայց չը ճաշակեց, այլ ուղարկեց մի ուրիշ տկար եղբօր համար։ Բանն այնպէս եղաւ, որ սա էլ բարւոք համարեց ուղարկել խաղողը մի այլ տկար միաբանի. սա էլ ուղարկեց մնացածներու համար մի ծեր միաբանի. սա էլ ընդունելով՝ խղճահարուեց ճաշակել, այլ լաւ դատեց երեն մեծին՝ հայր Մակարին նուիրաբերել։ Հայր Մակարը վերստին ստանալով վերոյիշեալ խաղողը, որ բոլոր եղբայրների խօսքը պատել և ոչ ոք չէր ճաշակել, վերջն էլի եկել էր իւր մօտ, դոհութիւն ու փառք տուաւ Աստծու, որ այսպիսի եղբայրասիրութիւն է թագաւորում միաբանների մէջ, ու մեռ օրը խաղողը տարաւ եկեղեցի և որպէս օրհնութիւն բաժանեց բոլորին։

— Պաղատերութեան սկիզբն է ծաղիկը և առաքինութեան սկիզբը համբերութիւնը.

— Կրօնաւորի առաքինութիւնները վարձութիւնների մէջ պիտի վայելեն և փառաւորուեն։

— Առաքինութիւնը ամօթխած է. քողարկեալ կամ ծածկեալ առաքինութիւնը մեծ գեղեցկութիւն ունի։

— Մարդահաճութիւնը թուլացնում է կրօնաւորի զօրութիւնը և դարձնում է մի ցամաք իր։

— Անախտաւորութիւնը նման է բաղեղի, որ ծառի ծայրը հասնելով չորացնում է նորան։

Ն. արեղայ Տ. Աւետիքեան

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ

Մեր ընթերցողներին յայտնի է ռուսաց եկեղեցւոյ հանրածանօթ սպասաւորը հ. Յովհան Սերգիև Կռոնշտատցու արքեպիսկոպոս վարքն և առատաձեռն բարեգործութեանց հռչակը։ Կռոնշտատը բառիս իսկական նշանակութեամբ ուխտատեղի է դարձել ռուս հաւատացեալների համար, որոնք հազարներով գիմում են ամեն օր Ռուսաստանի նոյն իսկ ամենահեռաւոր կողմերից տեսնելու, լսելու հ. Յովհաննին, խոստովանուելու և հաղորդուելու նորա ձեռքով։

Ամենայն օր հազարաւորներն են ցանկանում խոստովանուել նորա մօտ և հաղորդուել. բնական է, որ միանգամայն անհնարին պիտի լինէը մի մարդու համար այդքան հոգուն առանձին առանձին խոստովանեցնել։ Այս պատճառով հ. Յովհաննը ստիմանել է իւր ծխական եկեղեցում ընդհանուր, հասարակաց խոստովանութեան օրեր. այդ օրերում, ինչպէս և առ հասարակ, երբ հ. Սերգիևը պաշտօն է մատուցանում, ժողովուրդն այնպէս է խռնուում եկեղեցում, որ ինչպէս ասում են տեղ քցելու տեղ չէ լինում։

Մայիսի 17-ին, ընդհանուր խոստովանութեան միջոցին, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագրները, այնպիսի խուռն բազմութիւն է ժողովուած լինում եկեղեցում, որ չնայելով բազմաթիւ ոստիկանների ջանքին հնար չէ լինում կարգ պահելու եկեղեցու մէջ, երբ հաղորդութիւնն է սկսւում. ամէն մարդ շտապում է առաջ ընկնել աւելի շուտ հաղորդ ընդունելու արքեպիսկոպոս քահանայի ձեռքից: Այդ իրարանցման մէջ շատերը ոտի տակ են դնում, ու վիրաւորւում, իսկ մի կին տեղնուտեղը մահանում է:

— Վլադիմիրի նահանգի Շույեա քաղաքում, ինչպէս հաղորդում է Нов. Вр. լրագիրը, վերջերս մի հետաքրքրական և հազուադէպ դործ է քննուել Վլադիմիրի դատաստանական պալատի սեսիայում: Մի աւանի եկեղեցու ծխականներից մի քանիսը մեղադրուած են եղել իրենց քահանային եկեղեցու մէջ, պաշտօն կատարելու ժամանակ, «դործողութեամբ» անպատուելում և բռնութեամբ ժամադոցութիւնը դադարեցնելում: Դատարանի նիստը դռնփակ է եղել, այնպէս որ դործի մանրամասնութիւնները յայտնի լինել չեն կարող, բայց մայրաքաղաքի լրագիրը դատաւորների վճռից որոշ եղրակացութիւն է անում դործի էութեան մասին:

Բանն այն է, որ նահանգական դատարանը բոլոր մեղադրեալներին էլ արդարացրել է. պրոկուրորը բողոքել է այդ վճռի դէմ. դործն անցել է պալատը, որ ահա հաստատում է նահանգական դատարանի վճիռը և անհեթեանք թողնում պրոկուրորի բողոքը:

Դատարանի երկու լնտանցիայում ևս իրենց քահանային այդպիսի բացառիկ հանդամանքներում անպատուելու համար մեղադրուող դիւղացոց արդարացնելը, Нов. Вр. ասելով, ապացոյց պէտք է համարել, որ յիշեալ քահանան մինչ այն աստիճան վիրաւորել է իւր հօտի կրօնական զգացմունքները որ և է անվայել արարքով, նոյն իսկ եկեղեցում և ժամ ասելիս, որ աղօթողներն այլ ևս չեն կարողացել համբերել և բռնութեան են դիմել:

— Մայրաքաղաքի լրագիրներում կարդում ենք, որ Վրաստանի էքզարքոս սրբ. Պլատոնը դիմել է ուր հարկն է և միջնորդել, որ Պետերբուրգի հոգևոր ճեմարանում հաստատուի վրաց եկեղեցու պատմութեան յատուկ ամբիոն: С.-Пет. Вѣд. համակրութեամբ է վերաբերում այդ մասին և վրաց հնագիտական եկեղեցու պատմութեանն այդպիսի պատուաւոր տեղ տալը մայրաքաղաքի հոգևոր ճեմարանում թէ արդարացի է համարում և թէ խոհեմ քաղաքականութեան մի նշան դէպի վրացիները, որոնց վստահութիւնը վաստակելու միջոցներից մէկը կարող է լինել այդ քայլը: Լրագիրն ի դէպ նկատում է, որ սրբ. Պլատոնի էքզարքոսը յարգանքով է վերաբերում դէպի վրաց ազգային եկեղեցին և նորա հնութեան յիշատակարանները:

— Ամսոյս 7-ին վախճանուեցաւ Կիեւի մետրոպոլիտ սրբազան Իոաննիկիոյ: Հանգուցեալ մետրոպոլիտը Ռուսաստանի ամենանշանաւոր եկեղեցականներից մէկին էր իւր արդիւնաւոր դործունէութեամբ: Մի ժամանակ Վրաստանի էկզարխոս էր: Անցեալ տարի նոյեմբերի 7-ին մեծ շքով Կիեւում յօբելեանը: Հանգուցեալի 50 ամեայ քահանայութեան յոբելեանը: Հանդիսի նկարագրութիւններն ու կենսագրական համառօտ տեղեկութիւնները տես Արարատ 1899, դեկտ.

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ.

Ասուէմպլոնիտներ եւ Քրանսիական կառավարութիւնը. Ֆրանսիական ներկայ կառավարութիւնը թէև կաթոլիկութեան բարեկամ չէ, բայց սահպատած է նորա զօրութիւնից ակնածել. Այդ շատ լաւ երևում է դէպի Ասումպսիոնիստները բռնած դիրքից: Մեր ընթերցողները կարդացին արդէն «Օտար եկեղեցիներ»-ի բաժնում այս միաբանութեան մասին, բայց դուցէ որոշ դաղափար չունենան նորա կոչման և ծագման վերաբերութեամբ:

Այս միաբանութիւնը հաստատուած է 1857 թուին Ֆրանսիացի Ալյան անունով մի քահանայի ձեռքով: Իւր ձգտումներով Ցիսուսեան կարգի նման մի միաբանութիւն է. նորա նպատակն է վերականգնել պատանիների քրիստ. կրթութեան երաւունքը, մարտաւել յեղափոխութեան և հերձուածների դէմ:

Ասումպսիոնիստների կարգը պապական աթոռից հաստատուած չէ, իսկ Ֆրանսիական կառավարութեան կողմից 1880 թ. միւս միաբանութիւնների հետ արգելուած է: Բայց և այնպէս միաբանութիւնը տարէցտարի հարստանում և մեծ ազդեցութիւն է ձեռք բերում պետութեան մէջ. Ասումպսիոնիստների դործունէութիւնը շատ ընդարձակ է, և ճիւղաւորուած երկրի ամեն կողմերում. նոցա դործունէութիւնը երեք ուղղութեամբ է ընթանում՝ կրօնական, գրական և բաղաքական, բայց երեք ուղղութեամբ էլ մի և նոյն նպատակի համար են աշխատում: Նոցա գրական դործունէութեան կենդրոնը „la Bonne Presse“ տպարանն է, ուր հրատարակում են բազմաթիւ ամսագրեր և քաղաքական թերթեր: Նոցա թերթերի բոլոր օրինակների թիւը մինչև 130 միլիոն է հասնում. Թերթերից ամենանշանաւորը La Croix թերթն է, որ առանձին տեսակ հրատարակութիւններ ունի նաև գաւառների համար: Միաբանութիւնն իւր առանձին յանձնախումբն ունի—

Justice Egalité—անունով, որ ղեկավարում է քաղաքական ընտրութիւնները, ընտրութեան դաշինք է կապում այս կամ այն կուսակցութեան հետ և հսկում է իւր ձեռնտուութեամբ ընտրուած պատգամաւորների գործունէութեան և մինչև իսկ ոտքս մանտուոը կեանքի վերայ։

Կառավարութեան և միաբանութեան ընդհարումը յառաջ է եկել վերջնոյս քաղաքական գործունէութեան պատճառով։ Ասումպսիոնիստների և արքայականների դաշնակցութեան պատճառով խուզարկութեան ենթարկուեցան և միաբանութեան շատ անդամներ, երբ կառավարութիւնը դատ սկսեց արքայականների դէմ, որպէս կառավարութեան դատաճանների։ Խուզարկութեան ժամանակ գրաւուեցան հակակառավարչական բազմաթիւ ձեռագիրը և տպուած գրութիւնները և մի պատերի մօտ գտնուած 1,800,000 ֆրանկ դրամը։ Այս խուզարկութեան հետևանքն այն էր, որ կառավարութիւնը դատ բաց արաւ միաբանութեան 12 անդամների դէմ, արգելուած ընկերութիւններ կազմելու համար։ Դատապարտուածները 16-ական ֆրանկ տուգանքի ենթարկուեցան։ Բարձրագոյն դատարանը հակառակ դատապարտուածների բողոքներին փետր. 19-ին հաստատեց նոյն վճիռը։

Բայց կառավարութիւնն էլ իւր կողմից այս գործողութիւնը հեշտ մարսել չկարողացաւ։ Բազմաթիւ եպիսկոպոսները և քահանաները Croix թերթի մէջ բողոքեցին կառավարութեան դէմ՝ պաշտպանելով Ասումպսիոնիստներին։ Բողոքողների մէջ ամենից աչքի էր ընկնում Գուէթ—Սուլպը Արքեպիսկոպոսը։ Կառավարութիւնը իւր կողմից աւելի խիստ միջոցների դիմեց, կտրելով ապըստամբ եկեղեցականների ռոճիկը։ Վալդէկ—Ռուսոն մի գրութեամբ յիշեալ Արքեպիսկոպոսին յայտնում էր նախարարութեան վճիռը՝ պատճառաբանելով որ ոչ մի կառավարութիւն չէ կարող տանել այն դիրքը, որ արքեպիսկոպոսը բռնել է պետութեան դէմ։ Արքեպիսկոպոսը իւր կողմից մի գրութեամբ ամենախիստ պատասխան է ուղղում մինստրին Croix թերթի մէջ, «անամօթ» անուանելով նորա գրութիւնը և «դողութիւն» նորա ոճիկի պահելը։ Մի ուրիշ գրութիւն ևս ուղղում է պապին, որի մէջ ֆրանսիական օրէնսդրութիւնը «աղանդաւոր» և «սաւազակային» է անուանում։ Ասումպսիոնիստների մասին Արքեպիսկոպոսի պապին ուղղած նամակի մէջ խօսում է մեծ յարգանքով և աւելացնում է. «մենք մահուան ենք դատապարտուած, բայց կպաշտպանենք մեզ»։

Կաթոլիկ հոգևորականութեան բռնած այս դիրքը աչքի առաջ ունենալով, կառավարութիւնը կամեցաւ խաթացնել օրէնքը այդպիսի դէպքերի համար։ Կառավարութիւնը պալատին և հաստատութիւն մի նոր օրէնք առաջարկեց, որով եկեղեցականները 3 ամսից մինչև 2 տարի բանտ պիտի նստէին, եթէ իրենց հովուական թղթերի կամ առանձին գրութիւնների մէջ կառավարութեան կարգադրութիւնները քննադատութեան կենթարկեն։ Բայց այս օրէնքը դեռ չէ հաստատուած և հաւանական է, որ մերժուի, որպէս Ֆրանսիայում ակտող ազատութեան հակառակ մի օրէնք։

— Վալդէկ Ռուսոյի նախարարութիւնը անյաջողութիւն ունեցաւ նաև Վատիկանում Ֆրանսիական դեսպանութեան վերացման խնդրում։ Կառավարութիւնն ոտիպուած է քաղաքական դժուարութիւնների առթիվ հրաժարուել Վատիկանում ֆրանսիական դեսպանութիւնը ոչնչացնելու մտքից։

— Նապոլէոն Ա-ի ժամանակից պետութեան և պապական աթոռի մէջ հաստատուած համաձայնութեամբ (concordat) Ֆրանսիայի եպիսկոպոսների և քահանաների ռոճիկը պետութիւնն է հոգում։ Սակայն այժմ 35 եպիսկոպոս և 7000 քահանայ աւելի են Ֆրանսիայում, քան նախատեսուած է կոնկորդատում։ Կառավարութիւնը շատ կկամենար կրճատել այս ծախսերը, բայց ստիպուած է լռել, ակնածելով քաղաքական դժուարութիւններից։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

ԳԵՐՄԱՆԻԱ

Եկեղեցական—սոցիալական ազատ ժողովի Ե-րդ Նիստը։—Այս ժողովը բաժանուեցաւ քրիստոնէական—հայրենական ժողովից, որ Գերմանիայում մեծ հեղինակութիւն ունի և որին մասնակցում են գիւղական բարձր դասին պատկանող նշանաւոր անձնաւորութիւններ, յատկապէս աստուածաբանութեան ուսուցչապետներ և քահանաներ։ Բաժանման առիթին եղան նոյն ժողովի անգամ երկու նշանաւոր անձինք՝ ուսուցչապետ Ֆոն Նաթուսիուս և նախկին պալատական քարոզիչ Շտեոկկեր։ Ժողովից դժգոհներն և վերջիններիս կուսակիցները հետզհետէ հաւաքուեցան իրենց պարագլուխների շուրջը և մի առանձին ժողով գումարեցին Kirchlich—sociale Conferenz անունով, որի հինգերորդ ժողովը գումարուեցաւ ներկայ թուի ապրիլ 18—20-ին Էրֆուրտ քաղաքում, 1000 հոգու մասնակցութեամբ։ Ժողովը երկու մասից էր բաղկացած. գլխաւորը և երկրորդական կամ մասնաւոր։ Մասնաւոր ժողովների պարագլուխները եօթ խմբի են բաժանուած. իւրաքանչիւր խմբին յանձնուած էր որոշ խնդիրների մասին հարցեր մշակել և ժողովի քննադա-

տութեան նիւթ դարձնել։ Մենք չենք միայն իւրաքանչիւր համքի մշակութեան խնդիրը մեր ընթերցողներին դերմանական պատմութեան մասնաւոր հատուածութեան և հասարակական դործունէութեան մասին գաղափար տալու համար։ Առաջին համքի նախագահը յայտնի քարոզիչ, Բերլինի քրիստոնէական բարեդործութեան ղեկավար և անուանի քաղաքագէտ պատմութ Շտեոկկերն էր։ Այս խումբը պէտք է ղբաղուէր դաւանաբանական, եկեղեցական— իրաւագիտական և եկեղեցական—քաղաքագիտական խնդիրներով։ Երկրորդին նպատակն էր մշակել աւետարանի քարոզութեան և համայնական կեանք զարդացնելու հարցեր։ Երրորդը պիտի պարզէր սոցիալական խնդիրներ քրիստոնէական տեսակէտով, չորրորդը մարմուլ, արուեստ և գրականութիւն, հինդերորդը քրիստոնէական կրօնի ջատագովութիւն՝ յատկապէս բնական դիտութիւններն աչքի առաջ ունենալով, վեցերորդը դաստիարակութիւն և դպրոց, վերջապէս եօթներորդ՝ կանանց հարցը։

Գլխաւոր ժողովների մէջ դաստիարակութեան և քննութեան նիւթ են եղել հետևեալ հարցերը. ա) Անհատի և ընդհանրութեան մեղքի պարարքի դատաստանը, անհատի և ընդհանրութեան դործունէութիւնը. բ) կոնֆիրմացիայի (առաջին հաղորդութիւն ընդունելու կարգը) դործածութիւնը. դ) քահանան և համայնքի անդամները, դ) քաղաքացիական նոր օրէնսդրքի սոցիալական մաքերը. ե) քրիստոնեայի աշխատութիւնը աներում աշխատող բանուորուհիների համար. զ) բժիշկ կանայք պէտք է համալսարանում պատրաստուին իրենց մասնագիտութեան համար, թէ կանանց առանձին բարձրագոյն դպրոցներում։

— Գեոթինգէնի համալսարանի աստուածաբանութեան մասնաւոր ուսուցչապետ Օստոն մայիս ամսուայ ընթացքում Հանովերում մի շարք հանրամատչելի դասախօսութիւններ է կարդացել ս. Գրքի քննադատական դիտութեան նորադոյն եղրահայացութիւնները իւր ունկնդիրներին ծանօթացնելու համար։ Երկու տեսակէտով օգտակար են այսպիսի դասախօսութիւնները. նախ պահպանողական և հին պատմութիւնին ծանօթացնելու աստուածաբանական ներկայ դիտութեան վիճակի հետ և միւս կողմից աստուածաբանութեան հակառակորդներին ցոյց տալու, թէ յառաջադիմութեան որպիսի մեծ քայլեր է արել վերջին տասնեակ տարիներում այդ դիտութիւնը։

— Նոյն նպատակով Սաքսոնիայի Խեմնից քաղաքում 200 ունկնդիրների համար, որոնց մեծ մասը պատմութիւն էին, Հայդելբերգի ուսուցչապետ Տրեոլտչ մի դասախօսութիւն է կարդացել աստուածաբանական ներկայ դիտութեան վիճակի մասին։

— Ընդհանուր աւետարանական—բողոքական քարոզչական ընկերութիւնը Ճափոնիայում իւր քարոզիչների ձեռքով հրատարակում էր Ճափոներէն լեզուով մի ամսագիր «Ճշմարտութիւն» անունով։ Այս ամսագիրը մեծ յաջողութիւն էր դտել Ճափոնիայում։ Ներկայ թուականի սկզբից Հատ պատառի համբագրութեամբ հրատարակուում է մի ուրիշ թերթ նոյն վերնագրով, գերմաներէն։ Բնիկ մի ուսուցչապետի վիճակութեամբ Ճափոնիայում այնքան դերմաներէն դիտեն, որ թերթը բաւականացնի բաժանորդները կունենայ իւր դոյութիւնը պահելու համար։ Այս մի նշան է, թէ քրիստոնէական—գերմանական քաղաքակրթութիւնը օրքան է տարածուած այնտեղ։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ։

Անգլիայի պետական եկեղեցու մէջ վարուց, ինչպէս յայտնի է, շարժում է նկատուում նորոդել ծէսերն ու արարողութիւնները, որ կրօնական հին եկեղեցու վերափոխութիւնը (րեֆորմացիան) ոչնչացրել էր։ Այս շարժման կողմնակիցները միւս բողոքականներից ծիսապաշտ անունն են ստացել։ Վերջին տարիներս վիճաբանութեան նիւթ էր խնկարկութեան և ս. հաղորդութիւնը (մասը) պահելու խնդիրը։ Րեֆորմացիայից յետոյ անգլիական եկեղեցու մէջ վերացել էր ս. մասը պահելու սովորութիւնը, որ մեր եկեղեցու մէջ մինչև այժմ էլ մնացած է։ Այդ սովորութիւնը յառաջ է եկել հիւանդներին հաղորդելու անհրաժեշտ կարիքից։

Մայիսի 1-ին անգլիական եկեղեցու երկու արքեպիսկոպոսները յայտնել են իրենց վճիռը այդ մասին։ «Անկասկած հին եկեղեցին սովորութիւն է ունեցել հիւանդների և նման դէպքերի համար պահել ս. մասը։ Բայց անկասկած է նոյնպէս, որ այս սովորութիւնը, մանաւանդ փոխարկութեան (transsubstation) դաւանութիւնը ընդհանրանալուց յետոյ այլ և այլ հաւատալիքների ծագման պատճառ է դարձել։ Ուստի և անգլիական եկեղեցին իւր 28-րդ կանոնով (րեֆորմացիայի 39 կանոնները) արդելել է այս սովորութիւնը։ Հատ 34-րդ կանոնի իրաւասնչիւր մասնաւոր կամ ազգային եկեղեցի իրաւունք ունի փոխել կամ վերջացնել մարդկանց ձեռքով հաստատուած ծէսեր ու պաշտամունքներ։ Քանի դոյութիւն ունին եկեղեցական ներկայ օրէնքները, պէտք չէ պահել ս. մասը մինչ ձևով էլ լինի։ Այլ խնդիրը է, երբ եկեղեցին իրաւասնական ճանապարհներով փոխէ իւր օրէնքները այս կէտի վերաբերութեամբ»։

Հակառակորդները սակայն դժգոհ են այս վճռից և մինչև իսկ լուրջ քննադատութեան արժան չեն համարում այն։ Նոքա գողոքում են, թէ արքեպիսկոպոսները իրաւունք չունին արդե-

եւ երկրպագելու Տիրոջ։ «Քանի դժուարին ուն ու. հալոցդուրեան խորհուրդը, չպէտք է նուազի և քրիստոնեայն երկրպագութիւնն ու դժուրիւնը Տիրոջ։ Մենք կապուած չենք այն բոլոր կարգադրութիւնների հետ, որ 16 դարում մի քանի մարդիկ ռեֆորմացիա անուան տակ մատուցեցին և մնատուցին վատ՝ հաստատեցին։ Մենք կողմնակից ենք լաւին, և հրաժարուում ենք վատից։ Ռեֆորմացիան պատմական մի շրջան էր եկեղեցու մէջ, ուստի և ռեֆորմացիայի մարդիկ առանձին առաւելութիւն չունին, քան եկեղեցու այլ շրջանի մարդիկ»։

ԱՄԵՐԻԿԱ

Տիեզերական բառոչական ժողով Նիւեորկում. Այս անունն է կրում միսիոնարների այն մեծ ժողովը, որ սկսուել 21-ից մինչև մայիսի 3-ը գումարուեցաւ Նիւեորկում։ Տիեզերական է կոչւում այս ժողովը այն պատճառով, որ 2400 պատգամաւորները և միսիոնարները աշխարհի զանազան կողմերից մասնակցում էին ժողովին։ Բայց տիեզերական անունը մասամբ անյարմար է, որովհետև ժողովին մասնակից չէին կաթոլիկ և արևելեան եկեղեցիների ներկայացուցիչները։ Ժողովը բաց արաւ Միացեալ Նահանգների նախկին նախագահ Հարրիսըն մի վերին աստիճանի լուրջ և խորը կրօնական ճառով։ Նրեկոյեան ժողովականներին անձամբ ողջունեցին Միացեալ Նահանգների ներկայ նախագահը և Նիւեորկի պետութեան (նահանգի) կառավարիչը։ Ժողովն սկսուելուց յետոյ՝ առաջին կիւրակէն՝ Նիւեորկի 300 եկեղեցիներում քարոզում էին հիւր միսիոնարներն ու պատասխանները։ Chronik der Christ. Welt-ի ասելով՝ մի յոգնածով անկարելի է նկարագրել այն բազմաթիւ դատախօսութիւնները ու հարցերը, որ շոշափուեցան այս ժողովի մէջ։ Քրիստոնէութեան տարածման ներկայ վիճակին, միսիոնի և պետութեան յարաբերութեան, միսիոնի պահպանութեան և կառավարութեան, միսիոնի և միւս կրօնների մէջ եղած յարաբերութեան, միսիոնի և ընկերավարական յառաջադիմութեան, միսիոնի և դատիարակութեան, միսիոնի և բժշկականութեան և այլ բազմաթիւ հարցերի մասին դատախօսութիւնները կարգացուեցան, որ պէտք է երկու հատորով հատորի մէջ շուտով լոյս տեսնեն։ Ժողովը գումարուած էր երկու նպատակով. նախ աշխարհի զանազան կողմերը ցրուած բազմաթիւ քարոզչական ընկերութիւնները ու նոցա աշխատաւորներին կապել միմեանց հետ և երկրորդ՝ պարզել քարոզչութեան ընդհանուր շահերը։

Քաղաքակրթուած աշխարհի յատկապէս Ամերիկայի աչքը այդ օրերը ժողովին էր դարձած։ Ամերիկայի օրաթերթերը ամենայն մանրամասնութեամբ հաղորդում էին ժողովի մէջ արծածուած խնդիրները և ժողովրդի համակրութիւնը վառում այս մեծ գործի համար։ Նոյն իսկ կրօնական և եկեղեցական խնդիրներից միշտ իրենց հեռու պահող թերթերը ստիպուած էին խոստովանել քարոզչութեան նշանակութիւնը հասարակական, քարոյական և քաղաքակրթական տեսակէտներով։

Այսպիսի մեծ նշանակութիւն են տալիս քրիստոնէութեան և նորա տարածման լուսաւորեալ աշխարհում, իսկ ինչ են քարոզում մեզանում։

ՄԱՅՐ ԱԹՈՌ

ՁԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ս. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Վեհափառ Հայրապետը մեր եկեղեցիների և վանքերի պրուիւնան հետ անձամբ ծանօթանալու և հարկաւոր կարգադրութիւններն անելու համար մայիսի 21-ին առաւօտեան 8 ժամին ուղեկցութեամբ Մայր տաճարի լուսարարապետ Տ. Ղևոնդ վարդապետի և այլոց մեկնեցաւ Մայր Աթոռից այցելելու Սպասարդ գիւղը և բարեհաճեց գիշերել Քշնի գիւղում։ Հետևեալ օրը, 22-ին, առ. 8 ժամին գուրս գալով Քշնուց՝ երեկոյեան 9 ժամին հասաւ Սևան անապատը, որի վանահայր Տ. Սարգիս վրդ. Փիլոյեան մի քանի վարդապետներով ընդառաջել էր Նորին Սրբութեանը մինչև Ցամաքաբերդ։

Վեհ. Հայրապետը Սևանում երկու օր հանգիստ առաւ, պիտոյ միաբանութեան հաւմար կատարելով անհրաժեշտ բոլոր վերոյ հղած վանքերը տանող ճանապարհը. միաբանութեանը եպիսկոպոսութեան ու ճշմարիտ կրօնասիրութեան խրատներ տալուց յետոյ 24-ին թողեց կղզին և շարունակեց ուղին Դիլիջանի վրայով գնալի Հաղարծնի վանքը։ Այստեղ ևս նորին Ս. Օծութիւնը երկու օր ճնայ. տաճարի և անդանաւան վերանորոգութեան հաւմար հարկաւոր կարգադրութիւններ արաւ, անսատի բարոյ կատարութեան համար պատշաճ հրահանգները տուեց վանքի վանահայր Մելքայել վարդապետին և Քշնոյ անաս-

ոի կատարչին և 26-ին Դիլիջանի վերայով ուղին շարունակեց դէպի Մ ԼԱ — Ղարաքիլիսա և իջևանեց Ալեքսանդրապօլի պ. Արոբեանցի տանը։ Նորին Սրբութիւնը բարեհաճեց հոգեզատեան ծեսերը անցնել Ղարաքիլիսայում՝ և, չնայելով վատ եղանակին ու տեղացող կարկտախառն անձրևին, շարաթ երեկոյեան ու կիւրակէ օրը ս. պատարագին եկեղեցի իջաւ ու քարոզ խօսեց։ Վեհափառ Հայրապետը մուտքը էր դնալ և տեսնել Մարցի անտառը, բայց յետաձգեց այդ ուրիշ պատեհ առթի։ Ղարաքիլիսայից Հոգևոր Տէրն ուղևորուեց դէպի Հառիճ, ճանապարհին դիշերելով Համամլուի տանուտէրի տանը։ Հառիճում դիմեց ձորագլխին կառուցուող նոր սենեակներն ու շինուող ջրմուղը, հարկաւոր պատուէրները տուեց և երկու օր էլ հանգստանալով՝ դէպի Մայր Աթոռ վերադարձաւ Արարատի վերայով։ Ալիքուչակում՝ Վեհ. Հայրապետը դիտեց կառուցուող եկեղեցին, և, ընդունելով Բլուրը գիւղացիների խնդիրը, որով իրանց կիսաշէն եկեղեցին ի գլուխ հանելու համար օգնութիւն էին հայցում, անձամբ գնաց Բլուր, խոստացաւ հոգալ տանիքի փայտերի և վարպետների ծախքը։

Նորին Սրբութիւնը իւր ճանապարհորդութեան մեծագոյն մասը ձիով կատարեց, որպէս զի դիւրութիւն ունենայ դիւղական եկեղեցիները տեսնել։ Վեհ. Հայրապետը ճանապարհի վերայ եղած բոլոր գիւղերն ու եկեղեցիքը այցելելով՝ մեծապատում էր ժողովրդին և եկեղեցիների պայծառութեան համար հոգում։

Մայիսի վերջին և յունիսի սկզբին հետզհետէ Մայր Աթոռ ժամանեցին Սինոդի անդամ Արժ. Աշոտ վարդապետ Շահնազարեանց, Ռուսիկ վարդապետ Դաւթեանց, Մխիթար վարդապետ Տ. Մկրտչեան և Գարեգին վարդապետ Յովսէփեան։

Յունիսի 4-ից մինչև 11, «Էջմիածնական» շաբաթուայ ընթացքում կատարուեցան ս. Հռիփսիմէի, Գայիանէի և Շողակաթի տօները։ Այդ տօներին Հոգևոր Տիրոջ և ամբողջ միաբանութեան ներկայութեամբ ժամասացութիւնը և պատարագը չիշեալ վանքերումն էր լինում։

Ս. Լուսաւորչի տօնին Ն. Սրբութեան հրամանով Յորվիրապ էր գնացել Տ. Յովհաննէս եպիսկոպոս Շիրակունի, այնտեղ պատարագելու և ժողովրդին մխիթարելու համար։ Անցեալ տարի նոյն տօնին ուխտ էր գնացել Ն. Սրբութիւնն անձամբ. Նորին Սրբութեան ցանկութիւնն է, որ Ելն ի վիրապէն տօնը իւր տեղում՝ շքեղութեամբ կատարուի և շրջակայ ժողովրդեան համար ուխտադնացութեան օր դառնայ։

Ս. Էջմիածնի տօնը Մայր Աթոռում կատարուեցաւ մեծ շքեղութեամբ։ Այդ օրուայ պատարագիչը ծերունազարդ Հայրապետն էր, որ նախընթաց երեկոյեան նախնի աւանդութեան համաձայն շքով Վեհարանից եկեղեցի իջաւ։ Լուսարարապետ Տ. Ղևոնդ վարդապետի ուշադիր կարգադրութիւնների համաձայն ամբողջ հանդէսն անցաւ վայելուչ կերպով. տաճարը զարդարուած էր պատշաճ վայելչութեամբ։ Պատարագիչ Հայրապետին սպասաւորում էին Գեր. Յովհաննէս եպիսկոպոս Շիրակունի, լուսարարապետը, Ճեմարանի տեսուչ Արժ. Կարապետ, Բենիկ, գաւազանակիր Կորիւն և Ծպիշ վարդապետները սարկաւագական խմբի հետ։ Տաճարը լի էր աղօթողներով։ Ճաշին միաբանութեան սեղանակից էին Երևանից և Վաղարշապատից եկած հիւրեր, հաստատութիւնների ծառայողներ և Ճեմարանի ուսուցչական խումբը։ Ճաշի ժամանակ Ճեմարանի տեսուչ Հ. Կարապետը մի բանախօսութեամբ բացատրեց Մայր Աթոռի պատմական նշանակութիւնը անցեալում և նորա կատարելիք կրօնական գործը ներկայի և ապագայի համար։ Սինոդի նախանդամ Սրբազան Տ. Աբիստակես Արքեպիսկոպոս Հակոբճ բանախօսութեամբ բացատրեց Հայոց Հայրապետների ցոյց տուած խնամքն ու ջանքը Հայ ժողովրդի և նորա եկեղեցու համար. ապա խօսքը կապելով Հոգևոր Տիրոջ Հայրապետութեան հետ՝ երկար կեանք բարեմաղթեց Ն. Ս. Օծութեան։ Գարեգին Սուքիաս Արքեպիսկոպոս, որ Երևանից եկել էր Ն. Սրբութեան աջը համբուրելու

ա. Ընկերության ծանր աւերիչ առաջարկեց միաբանութեան կենացը: Բանախօսութիւններից յետոյ մէջ ընդ մէջ երգւում էին պատշաճաւոր երգեր և շարականներ:

Մայր Աթոռս միաբան Տ. Թաչիկ վարդապետը գովելի եռանդով ձեռնարկել է պեղումներ անել Զուարթնոց եկեղեցու աւերակների տեղը: Ձեռնհասով Արժ. Հայրը նոր է սկսած իւր գործը, բայց արդէն բաւական արժէք ունեցող գիւտեր է արել: Գանուած քանդակների մէջ աչքի է ընկնում յատկապէս մի վիթխարի արձիւ (ա. Յովհաննէս աւետարանչի «Արքէմ»ը), որ քանդակուած է սեան հսկայաձև խոյակի վերայ: Քարերի մեծութիւնը, և քանդակների գեղեցկութիւնը ապացուցանում են, որ մեր պատմիչները* իրաւունք ունէին հիացմամբ նկարագրելու Եզբայս Գի այս գործը: Ինչպէս երևում է, աւատատը տեղ տեղ վարպետուած է եղել քառանկիւնի ապակիներից պատրաստած մոզայիկներով, որոնց երեսը ուկեզօծած էր Բիւզանդական ձաշակի համաձայն: Գանուել են քարեր, որոնց երեսը գաջով ծեփած է, և վերան նկարների կամ գրերի հետքեր են երևում արաբերէն և աւորերէն: Մի կող քարի վերայ էլ հայերէն աւուր են փորագրուած: Եկեղեցին եղել է սիւնազարդ, որի հսկայական բեկորները հեռուհեռ երևան են գալիս: Պեղումները վերջանալուց յետոյ մանրամասն տեղեկութիւններ կհաղորդենք այս մասին:

---

* Առաջին ժամանակներից պատմիչը, որ տեղեկութիւն է տալիս Զուարթնոց եկեղեցու շինութեան մասին՝ Սեբէոս եպիսկոպոսն է. մեծ գովեստով են խօսում եկեղեցու ճարտարապետութեան մասին եւ հետագայ պատմիչները, մանաւանդ Յովհաննէս կաթուղիկոս:

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

Մայիսի 21-ին Եերսիսեան Հոգևոր Դպրանոցի հոգաբարձութիւնը և ուսուցչական խումբը ասնեց նոյն հաստատութեան 75 ամ: մեակըՄայր Աթոռի Ճեմարանի վարժապետական խումբը իւր կողմից պատգամաւոր էր նշանակել Տ. Գարեգին վրդ. Յովսէփեանցին, որ հանդիսի ժամանակ ի դիմաց իւր պաշտօնակիցների շնորհաւորեց դպրանոցի 75 ամեակը և կարդաց պ. Յովհ. Յովհաննիսեանի յանուն Ճեմարանի ուսուցչական խմբի գրած ողջունաւոր ուղերձը: Ուղերձի ձակատը զարդարուած էր մի դեղեցիկ մանրանկարով, որ պ. Ղուկէ Թադէոսեանց նկարել էր հայոց հին ձեռագիրների ոճով: Շատ սիրուն էր նոյնպէս և կազմը, որ նկարիչ պ. Վարդգէս Սուրէնեանցի ձեռքով պատրաստուած էր յատկապէս այս ասնի համար: Առաջին երեսին ամրացրած արծաթէ ձուլածոյ իմաստութեան աստուածուհին և նորա երկու կողմի բոցավառուած լուսոյ ջահերը շատ յարմար էին հանդիսի խորհրդաւոր նշանակութեան:

Հանդիսի օրը Ճեմարանի խումբը հոգեհանդիստ կատարել տուեց Հոգեգոյս Եերսէս Ե-ի գերեզմանի վերայ և Ճեմարանի Բ. լսարանի ուսանող (նախկին ասն Եերս. դպրանոցի) Արսէն Տ. Սիմոնեանցը այստեղ յառաջ բերած ճառը կարդաց:

Պատարագից և հոգեհանգստից յետոյ՝ Ճեմարանական խումբը և աշակերտները խմբուած էին Եերսիսեան անտառում միասին ճաշ վայելելու, այն ինչ Թիֆլիսում նոյն ժամին մի պարտիզի մէջ Եերոիսեան դպրանոցի խումբն էր ժողովուած նոյն նպատակով, ինչպէս տեղեկացանք, իրենց հետ ունենալով նաև Ճեմարանի ներկայացուցչին:

ՎԵՀԱՓԱՌ ՏԻՐ

Սրբազնաստաւր Հայրք Սիրելի ընկերներ.

Մայր Տաճարիս առաջ դրան առջև և ձախ կողմը ամփոփուած են մեր երկու մեծ հայրապետներու, լուսաւորչութեան Լերմ պաշտպաններուն և ազգային երկու մեծատուչ Քահանայապետներուն նուիրական նշխարները: Սրբա են, որ Մայր Աթոռի առջև մի Լերմեռանդ ամեայ տարեդարձն էր լրանում այդ օրը: Այսպիսի խորհրդաւոր րոպէին մենք միևնոյն ժամանակ լինում էինք ականատես, որ մեզանից մի քանի քայլ հեռաւորութեան վերայ ամփոփուած է ազգային մի այլ մեծ հիմնարկութեան հիմնադրի՝ Երջանկայիշատակ Ներսէս Ե. կաթողիկոսի մարմինը, որի հիմնած լուսաւորութեան խորանի 75 ամեակը կատարում է այսօր, և ահա այժմ մենք խմբուում ենք մեծ հայրապետիս, Հայրենեայց Լերմ պաշտպանի և դարուս հայ լուսաւորութեան հովանաւորի դերեզմանի շուրջը՝ հանգիստ մաղթելու նորա հոգուն և երկար տարիներ ճեմարանի անդրանիկ քոյր Ներսէսեան հոգ. դպրանոցին:

Մայր Աթոռի ամենամեծ տաճարն է, որ Ս. Սեղանը և բանում Աժենակալի առաջ նորա հոգւոյ խորքերը և լուսաւորում աստուածային լուսով: Անմոռանալի է և մեր ամենաքաղցր յիշատակներուն հետ կապուած այս ուսումնական տարին, որի ընթացքում կատարում ենք այս երկու մեծ հայրապետների կանոնած կոթողների յոբելեանները: Շատ ժամանակ չէ անցել այն օրից, երբ մենք այսպէս միահամուռ ժողովուած գերդ Մեծապատիւ կաթողիկոսի խնկելի շիրմի շուրջը օրհնում էինք նրա յիշատակը, անդորրութիւն մաղթում նրա հոգուն և յարութիւն հայցում նրա անուշած Մայր Ճեմարանին, որի 25 ցին: Ամբողջ 3/4 դար է, որ նա իբրև մի լուսաւորչութեան անխորտակելի կոթող ի բագրծում է իւր մեծ հիմնադրի վսեմ նպատակը, տալով հայ ազգին արժանաւոր հոգևորականներ և ազգութեան պիտանի պաշտօնեաներ: Այնպիսի մի շրջանում, երբ հայ ազգը դադարար չունէր ուսման մասին, երբ նա մտաւորապէս կուրացած խաբխափում էր խաւարի մէջ՝ երջանկայիշատակ Ներսէս կաթողիկոսը լուսոյ այդ պատուական տաճարի հիմը դրաւ: Որքան սուրբ, բարձր և վսեմ էր հիմնադրի նպատակը, նոյնքան դժուար իրագործելի և բազմաթիւ խոչընդոտներով շրջապատուած: Բայց մեծ յաղթանակով իրագործեց հայրենասէր հայրապետը իւր սուրբ նպատակը, ոտքի տակ տալով բոլոր դժուարութիւնները և արգելարութիւնները: Ինստիտուն հեռատեսութեան և տոկուն աշխատութեան պտուղ էր այժմեան Ներս. հոգ. դպրանոցը, հայ ազգի լուսաւորութեան առաջին կրթարանը, որի անդրանիկ աշակերտները վայելելով արիաջան հայրապետի անմիջական

խնամքը, առաջնորդ Հանդիսացան ժամանակակից մատաղ սերնդին, նպաստեցին ժողովրդի բարոյական կեանքի զարգացման և բողոքան իրենց բեղմնաւոր դործունէութեամբ մշակել մեր նոր դրականութիւնը և նոր լեզուն: Մինչև այժմ էլ հարիւրաւոր մանուկներ վայելում են այդ համազգային հաստատութեան խնամքը և բարիքները, սնւում և դաստիարակւում են բարոյապէս և հասարակութեան օգտակար անդամներ դառնում: Այդ պատճառով իսկ իւրաքանչիւր ազգային է, այս ազնիւ և ամեն մի կրթուող հայի պարտականութիւնը պէտք է լինի դրա մեծ հիմնադրի յիշատակը օրհնել և յարատևութիւն մաղթել այն մեծ հիմնարկութեան, որի ազդին առած բարիքները բոլորիս համար անհերքելի են և անհերքելի:

Ահա, այսօր, ո՛վ սրբատենչ Հա՛յր, հայ մարդոց մի ստուար խումբ քո շիրիմից հեռու ասնում է ցնծութեան ազդակներով և կեցցէներով դպրանոցիդ 75 ամեայ փառաւոր գործունէութիւնը և օրհնում մեծ հիմնադրիդ անմահ յիշատակը: Մեզ ճեմարանի սաներիս է, վիճակուած այս բախտը՝ երախտապիտութեան զգացմամբ շուրջ պատել քո նուիրական դամբարանին և նոցա կողմից ևս թարգման հանդիսանալով ծաղկէ փնջերով և անթառամ դափնիներով զարդարել, բուռն զգացմունց հետ մրմունջներ առաքելով բարձրեալ Աստուծին՝ պաշտելի հայրապետիդ հոգւոյ անդորրութեան համար:

Դարեր կանցնին, սերունդներ կանհետանան, բայց քո հիմնած դպրանոցը որպէս մի անկործան յուշարձան կանմահացնի, քո փեհ անունը ազգայ սերնդների սրտում և երկար ժամանակ չի անհետանայ հայ ժողովրդի բերանից «Հայրենեաց պաշտպան» Ներսէս անմոռանալի հայրապետի անունը:— Յարատև, անխորհ, երկար ծաղիկ օրհ՛ը ազգային լուսոյ առձարիդ, անսայթաք, բեղուն գործունէութիւն անուանդ յուշարձանին, և հանդիսա սրբատենչ նշխարներիդ:

Այս տարի ճեմարանի մանկապիտանական դասընթացքն աւարտեցին ութ հոգի:

Սոյանից 6-ը ուրարաւիր են արդէն և պիտի պատրաստուին վարդապետական կամ քահանայական կոչման համար: Նորաւարանները ճեմարանի աւանդութեան համաձայն ամ սոյ. 10-ին Ս. Լուսաւորչի ծնդի օրը հոգեհանդիսա կատարել տուին ճեմարանի հիմնադիր Գէորգ Դ. Մեծապատիւ Վերեզմանի վերայ և նոցանից մէկը Տ. Սիմէոնեան Վահան երախտապիտական մի ճառ կարդայ Հոգևոր Տիրոջ ներկայութեամբ: Նորաւարանները ամ սոյս 12-ին Տ. Տեսչի աստաջնորդութեամբ բարդ ուխեցան համբուրելու Նորին Սրբութեան աջը և Հայրապետական օրհնութեան հետ ստացան իրենց մրցանակագրերը:

ՏԱՃԿԱՀԱՅՔ

Վենետիկի Մխիթարեան Միաբանութիւնը 30 ոսկի արժողութեամբ գիրքեր նուիրած է Արմաշու Դպրեվանքին, պայմանաւ որ Միաբանութեան անունով որը մը պահուի Արմաշու որբանոցին մէջ:

— 12 Մայիսի Խառն Ժողովը գումարուեցաւ Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ, Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ, Ժողովը բացուելուն պէս, Ս. Պատրիարք Հայրը հաղորդեց ինչ ինչ յարաբերական խնդիրներու մասին հաղորդուած բարձրագոյն հրամանները, Նկատողութեան առնուեցաւ գաւառային կարօտութեանց խնդիրը և եղած դիմումներէն ոմանց առաջնութիւն տրուելով, անոնց ընդփոխի գործադրութիւնը յանձնուեցաւ Ս. Պատրիարք Հօր, Ցետոյ, Ժողովը Օրակարգին անցնելով, հաստատեց Ա. Վազեան Տ. Յովսէփ եպիսկոպոսի Եգիպտոսի առաջնորդական ընտրութիւնը, և որոշեց գրել Ռոսոսթոյի Գաւառական Ժողովին՝ որ անոր յաջորդին ընտրութեան ձեռնարկեն, Խառն Ժողովը տեղեկանալով նաեւ թէ Վանայ այցելու Տ. Ներսէս եպիսկոպոս անձնական տկարութեան պատճառաւ արտօնութիւն խնդրած էր Պոլիս վերադառնալու, և նկատելով որ Ն. Սրբազնութիւնը այնքան օգտակար եղած է նոյն վիճակին, այնտեղ իր

ներկայութիւնը անհրաժեշտ է, որոշեց գրել որ յետաձգէ իր մեկնումը։

— Վարագայ Վանուց հոգաբարձութեան դիւանը կը հաղորդէ հետեւեալը. «Գոհունակութեամբ կը ծանուցենք որ՝ Եգիպտոսի մէջ կազմեալ «Որբախընամ Մարմինը»», որ ինչպէս նախապէս ծանուցուեցաւ, Եգիպտահայ Վանեցիներու նախաձեռնութեամբ հիմնուած է, Հաստատութեանն աջակցելու նպատակով, բարեհաճած է վեց որբերու պաշտպանութիւնը ևս ստանձնել, որով նոյն մարմնին պաշտպանեալներուն թիւը հասած է 8-ի։ Ցիշեալ որբերը՝ ամենէն աւելի անպաշտպաններէն արդէն ընտրուած ու հաստատութեանս մէջ ընդունած ըլլալով, ընդհանուր աշակերտներու թիւը ճիշտ 100ի հասած է։

— Արսէն վ. Վեհունի, որ ժամանակէ մը ի վեր Աւստրիոյ Սուչովա քաղաքը կը գտնուէր, այս անգամ Ամերիկայի Լորենս թեմին կողմէ Հոգևոր Հովիւ նշանակուած ըլլալով մեկնած է իր նոր պաշտօնատեղին։ Սուչովայի մէջ Արսէն վ.-ի հոգևոր և կրթական գործը կը շարունակէ քահանայ մը, որ Էջմիածնայ մէջ եկեղեցական կարգաց վարժուելով և ձեռնադրուելով վերադարձեր է։

— Բաղէշի վանուց փոխ-վանահայր Եղրաս վ. տեղւոյն վանքերու մասին Պատրիարքարան ղրկած մէկ տեղեկագրին մէջ կըսէ թէ՝ Գոմոց Ս. Աստուածածնայ վանքին մէջ տաճարին գիմացը Շողիկեան ընտանիքին միջոցաւ գպրոց մը շինուեր է, 12 սենեակներով, Այս առթիւ Եղրաս վ. խնդրեր է, որ Ամլորդւոյ Ս. Յովհաննու վանքը միացնելով Գոմոց վանքին հետ, այս վերջինին մէջ Ազգ. Որբանոց մըն ալ բացուի Պատրիարքարանի նպաստով և ժողովրդեան հանգանակութեամբ։

— Վանայ մէջ Ամերիկացի միսիոնար Տոքթ. Ըէյնոլտս, իր բոլոր ուշադրութիւնը դարձուցած է Որբանոցին վրայ, և այս պատճառաւ իր կողմէ նպաստի բաշխման գործը ակարացած է կը գրեն մեզ։ Հիմայ Որբանոցին մէջ կան 600 որբեր, որոնց 350ը մանչ և մնացեալները աղջիկ են։ Այս Ամերիկեան Որբանոցէն 90-ի չափ որբեր որգեգրուած են Ամերիկացի և Գերմանացի բարերարներէ։ Թրանսվալի պատերազմը մինչև Վան իր ազդեցութիւնը ուղղեցեր է, և որբերու պաշտպաններէն չորսը պատերազմին մէջ մեռած ըլլալով, իրենք ալ Որբանոցէն արտաքսուեր են։ Մ. Ըէյնոլտս իր հաստատութեան մօտ գտնուող աղբիւրէ մը ջուր բերել տալով, կարևոր պակաս մը լրացուցեր է։ Աղբիւրին վրայ իրաւունք ունեցող թաղեցիներու հետ 41 տարուան պայմանագրութիւն մը կնքելով, ամէն տարի գոհացուցիչ գումար մը պիտի վճարուի։ Նոյն հաստատութեան մէջ հիմայ կան 200 ցորեկօթիկ աշակերտներ ալ։

— Պրազիլիոյ (Հարաւային Ամերիկա) Սան Բաւլօ քաղաքին մէջ առեւտրական գործով պարապող, բաւական բարեկեցիկ վիճակի տէր 3 Հայ եղբայրներու ամենէն կրտսերը, վերջերս յատկապէս Մարսիլիա երթալով, Եւրոպայի Հայոց Հոգևոր Հովիւ Տ. Գէորգ եպիս. Իւթիւճեանի ներկայացեր և իր երկու եղբայրներուն, որոնցմէ մէկը 33 և միւսը 38 տարեկան է Հայ աղջիկներու հետ ամուսնանալուն փափաք յայտներ է, կը գրեն Բարիզէ։ Սոյն երիտասարդը Տ. Գէորգ եպիս.ի խորհրդով և անոր յատուկ յանձնարարականով խնդրագիր մը ղրկած է Պատրիարքարան, որուն մէջ կրսէ թէ՝ օտարներու հետ ամուսնանալով իրենց զաւակները օտարացնելու երկիւղով, կը փափաքին որ պարկեշտ որբուհիներ կամ աղքատ դասակարգէ աղջիկներ ղրկուին, որոնց ճամբու ծախքն ալ պիտի հոգացուի իրենց կողմէ։ Այս երիտասարդներուն լուսանկարն ալ պիտի առնուին և փոխադարձ հաւանութենէն յետոյ հարկ եղած բանակցութիւնները պիտի կատարուին։

— Երզնկայի առաջնորդարանէն հետագրաւ նպաստ խնդրուած է Պատրիարքարանէ։ Ասկէ առաջ ալ նոյն առաջնորդարանէ նպաստի խնդրանաց համար երեք նամակներ և հետագիր մը ղրկուած են. սակայն նպաստից մնտուկը չէ կարող այդ խընդրանքին գոհացում տալ, վասն զի Երզնկայ բաղդատմամբ ուրիշ աւելի կարօտ գաւառներու նիւթապէս այնքան կարօտ չի համարուիր։

— Վանայ հուսակալ Թահիր փաշա Հոգևոր Հովիւ Տ. Ներսէս Սրբազանի յանձնէր է 100 ոսկիի պետական նպաստ մը, որ կարօտեալներու պիտի տրուի։ Տեղւոյն երկրագործական դրամատունն ալ այս օրերս 100 ոսկիի նպաստ մը պիտի բաշխէ։

— 5000 ոսկիի կտակ մը ընելու փափաք յայտնած է հանգուցեալ Քէլէկեան Պօղոս էֆ.ի ամուսինը Տիկին Սանդուխտ, պայման դնելով որ այդ դրամով ապահով կալուածներ գնուին աղգ. Հիւանդանոցին համար։ Այս կտակին վերաբերեալ պաշտօնական գործողութիւնները պիտի կատարուին ի մօտոյ։ Կը լսենք նաև թէ յիշեալ տիկինը կը փափաքի Մաքրիգիւղի մէջ աղջկանց վարժարան մը շինել, 5-600 ոսկի ծախքով։

— Առեւ. Մանոյ մայիսի թիւին մէջ Թագւոր փաշայի կտակին նկատմամբ կը գտնենք հետեւեալը։

Ուրախ ենք յատնելու թէ՝ մեր Սրբազան Հօր առ Վսեմ. Տիկին Թագւոր փաշա և Լևոն պէյ որդին ուղղած գրերուն պատասխանը, միանգամայն և կտակին Զմիւռնիոյ վերաբերեալ պարբերութեան պատճէնն հաղորդուած է. որոյ իմաստն է.—

«Ա. Վսեմ. Թագւոր փաշա ի կենդանութեան 458,270 ղրշ. ի գումար յատկացուցած է յանուն իւր վաղամեռիկ Թարուհի գստեր, Բ. կը կտակէ

որ սոյն գումարը, մինչև իւր մահուան օրը եթէ հասած լինի պահանջուած քանակութեան, մի վարժարան հիմնուի ի Զմիւռնիա, նման գերմանական Տիաքօնէսներու վարժարանին, ուր պատսպարուին և կրթուին Հայազգի 30 աղքատիկ աղջկունք։ Ը. Կը կամէ որ՝ եթէ կտակած գումարը, մինչև իր մահուան օրը, հասած չլինի իր սոյն կամքը կատարելու քանակին, յայնժամ պէտք է հաստատ և ապահով պանքայի մէջ գնել, մինչև որ արդիւնաւոր շահաբերութեամբ իր նպատակը իրագործուի։ Թ. Կտակած է որ վարժարանին հսկողութիւնը կատարուի երկու անձանց ձեռօք, ընտրուած կտակակատարի և իր որդի Լևոն պէյի կողմէ, երբ սա չափահասութեան տարիքը մտած է։

«Արդ, ինչպէս յայտնի է, կտակակատարը Վսեմ. Թագւոր փաշա, արդէն կնքած է իւր երկրաւոր կեանքը, իսկ Վսեմ. Լևոն պէյ թևակոխած է չափահասութեան տարիքը։

«Վսեմափայլ Տիկին Թագւոր փաշայի և Վսեմ. Լևոն պէյի կողմէ մեր Սրբազան Առաջնորդին հաղորդուած Աղէքսանդրիոյ պանքային հաշուեցուցակէն կիմացուի թէ՝ մինչև 1899 գեկ. 31 կտակեալ գումարը տոկօսեօք հասած է 7540 անգլ. ոսկւոյ։ Սրբազան Առաջնորդը ընդունելով իր գրութեանց շնորհալի պատասխանն և պանքայի օրինական հաշուեցուցակը, օրհնութեան գրով շնորհակալութիւն յայտնած է Վսեմ. Տիկնոջ և Վսեմ. Լևոն պէյի, որք ի բոլոր սրտէ կը բաղձան սրբութեամբ իրագործել հանգուցեալ Թագւոր փաշայի կտակը։»

— Երուսաղէմի Միաբանութիւնը վերջերս ի Գահիրէ 28,000 ոսկիի վաճառած է Ս. Աթոռոյն մէկ ընդարձակ հողը, որով վանքին պարտքերն ամբողջովին վճարուած լմնցած են, և Ս. Յակովբեանց Միաբանութիւնը ծանր բեռէ մը բարեբախտաբար ազատած է։

— Ամերիկա բնակող մէկ քանի Ընդուշցի աղգայիններ 10 օսմ. ոսկի ղրկած են Ս. Պատրիարք Հօր, և խնդրած են որ Ընդուշի մէջ վարժարան մը բացուի, խոստանալով յառաջիկային վերըստին պէտք եղած ծախքերը հոգալ։

— Աղթամարայ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Արսէն վարդապետ իր իրաւասութեան տակ գտնուած գիւղերու կարօտ վիճակը յայտնելով, Պատրիարքարանէն նպաստ խնդրած է, աղքատ գիւղացիներու սերմնցու բաշխելու համար։

— Նոյնիմաստ ուրիշ գրութիւններ հասած են նաև Բաղէշէ և Տիարպէքիրէ։ Կըլսենք թէ Ս. Պատրիարք Հայրը արդէն նպաստի գումարներ ղրկած է վերջին երկու առաջնորդարաններու։

— Պատրիարքարանէ 100 ոսկիի գումար մը ղրկուեցաւ Տիարպէքիրի առաջն. Տեղապահ Տ. Եղիկիէլ վարդապետի, որպէս զի կարօտ գիւղացիներու սերմնցու բաշխէ։

— Քանի մը տարիներ ալ և ահա գաւառներու մէջ կօշկակարներու ահագին թիւ մը պիտի ունենանք, վասն զի ցարդ Պատրիարքարանի կողմէ ո՛ր գաւառի որքանոցին որ յանձնարարուեցաւ արհեստի ճիւղ մը հաստատել, իսկոյն տեղեկագրուեցաւ Պատրիարքարան թէ կօշկակարութիւն հաստատուած է. ասկէ բնականաբար իրաւունք ունինք հետևցնելու թէ յառաջիկային հարիւրաւոր կօշկակարներ պիտի ունենանք։

ԱՒՍՏՐՈՅ ԿԱԹՈԼԻԿ ՀԱՅՔ.

ԱՑՑ ԼԵՄԲԵՐԳԻ ՀԱՑԵՐԻՆ.

Հայդելբերգի ուսանողական վերջին համաժողովը մի ուշագրաւ նորութիւն ունեցաւ. Լեմբերգից, Գալիցիայի մայրաքաղաքից՝ մի գերմաներէն և ֆրանսերէն գրութիւն ստացուեց, ուր մի խումբ հայ ուսանողներ, որոնց գոյութեան մասին ո՛չ մի գաղափար չունէինք, յայտնելով իրենց կացութիւնը,—ազգայնութեան մոռանալը, մայրենի լեզուի և եկեղեցու կորուստը, կաթոլիկ հղերի ճնշումը, ապա՝ աղաչում են հայ ուսանողներին օգնութեան հասնիլ, սովորեցնել իրենց հայերէն, մեր այդ մեծանուն և փարթամ գաղթականութեանց գեթ վերջին բեկորները փրկելու նպատակով։

Եւրոպայի ամբողջ հայ ուսանողութեան վերայ այս պրութիւնը մեծ տպաւորութիւն թողեց։

Եւ դա հասկանալի է, դարերով կորած և մոռացուած մի գաղթավայրից յանկարծ միանգամայն անսպասելի կերպով լսւում են հայ եղբարց ձայներ։ Մեր եղբայրների կոչն է լսւում, կենդանութեան և յարութեան ձայներ են գալիս այնտեղից, ուր մենք ամէն ինչ կորած ու մեռած էինք համարում։ Հասկանալի է, որ այդ կոչը պիտի ընդունուէր հրճուանքով։ Ո՞ր քարսիրտը պիտի չուրախանայ կորած եղբօր գալստեանը...

1899 թ. յունիսի վերջերին՝ ես առ միշտ մնաս բարով ասացի Եւրոպային —յարմարագոյն ճանապարհը, հայրենիք վերադառնալու, ընկնում էր Միւնխէնէն, Վէննայի և Լեմբերգի վրայով։

Լեմբերգ հասայ ես գիշերը ժամը 10-ին։ Մի ամբողջ ժամ գնացքը այդտեղ դադար էր առնելու, մինչև յաջորդի գալը։ այդ վերջինն էլ շատ անժամանակ պիտի հասնէր Ռուսաց սահմանը, ուստի հետևելով լեհ ծանօթիս խորհրդին, թողի իրերս կայարանում և ուղևորուեցայ քաղաքում գիշերելու, մանաւանդ այդ ծանօթս, որ մի լեհական ազնուական էր, ճանապարհին անհաւատալի համակրանքով էր խօսում Գալիցիայի հայերի մասին և բնականօրէն շարժում մարդու հարցասիրու-

թիւնը անձամբ ծանօթանալու այս երկրի հայուհեան վերջին բնակորների հետ։

Առաւօտ կանուխ՝ շտապեցի հայ կանոնիկոս Աւգուստ Թէոդորովիչի տունը, որի հասցէն ձեռիս էր. սակայն մեծ եղաւ հիասթափութիւն, երբ ժամը 9-ին նրան տանը չգտայ, այն ինչ ես որոշել էի նոյն օրն աւելի շարունակել ճանապարհս։ Լեհ աղախինը, որ բացի իւր մայրենի լեզուից ոչ մի այլ լեզու չէր հասկանում, առաջնորդեց ինձ մի այլ տուն, ուր որոնածս անձի մասին տեղեկութիւն պիտի ստանայի։—

Չորրորդ յարկում կանգ առնելով, աղախինը նշան արաւ, որ զանգահարեմ։ Հազիւ դուռը բացուել էր և այցետոմս ներս էի ուղարկել, որ դրան շէմքում երևեցաւ բարակ—բարձրահասակ, լուրջ և խիստ դիմագծերով մի կաթոլիկ հոգևորական և քաղաքավարութեամբ ներս հրաւիրեց ինձ։

—Ցայտնեցի, որ ես հայ ճամբորդ եմ և ցանկանում եմ անպատճառ տեսնել տեղիս հայ ուսանողներին. նա մի տոմսակ տուաւ, որով պիտի գըտնէի Թէոդորովիչին համալսարանում։—Ընորհակալութեամբ հեռանալով այդ աստուածաբանի մօտից, դրանը այցետոմսի վրայ կարդացի, որ նրա անունն էլ Թէոդորովիչ, ուրեմն հայ է, և նրա սև աչքերն ու թուխ մեղամաղձոտ գծերը դրա մասին շատ կասկած չէին թողնում. ինքը սակայն, ինչպես երևաց և որպէս յետոյ տեղեկացայ, թշնամի է նոյն իսկ ազգային շարժման Լեհաստանում։

Դարբան անցնելիս՝ աչքս կանգ առաւ շէմքի քարի վրայ, ուր մի տեսակ ծանօթ և տարօրինակ գծեր գրաւեցին ուշադրութիւնս... և ոմն զարմանքմօտիկից նայելով՝ առաջս բացուում է Մաքուր Մեսրոպեան գրերով մի կիսամաշ արձանագրութիւն, որ ընկած լինելով շարունակ ոտի տակ, մօտ ապագայում իսպառ կորչելու է.... Մարդ որչափ վշտանում է տեսնելով, որ այդ պատմական յիշատակները այդպէս անհոգութեամբ կորչում են։ Ես մի ներքին յանդիմանութիւն ուղարկեցի վերևն ապրող հայ հոգևորականի հասցէին, որ այնքան անհոգութեամբ անց ու դարձ է անում այդ յիշատակարանի վրայով. . . .

Համալսարանում սակայն չգտայ որոնած անձիս. մի ուսանող հոգևորականի ջանքերի շնորհիւ տեղեկացայ, որ Թէոդորովիչը այդ օրը դասախօսութիւն չունի, ուրեմն որոնելն իզուր է. ժամը արդէն 11-ի մօտերն էր, ես կամաց—կամաց վերադառնում էի նրա տունը, ուր այցետոմսիս վրայ գրել էի՝ ինձ սպասել 12-ից մինչև 1-ը. և ահա նրա տան մօտերը մի փողոցի անկիւնում կարդում եմ լեհերէն՝ «Հայոց փողոց». մի քիչ վերև ներս եմ մտնում մի փոքրիկ եկեղեցու բակը, ուր դարբասի մի անկիւնում մարմարեայ մի քարի վրայի հայերէն արձանագրութիւնը տարակոյս չի թողնում, որ հայոց եկեղեցու բակումն եմ։ Մի շարք գերեզմանաքարեր, հին Մեսրոպեան (երկաթագիր) գրերով, փարատում են ամէն մի կասկած. ես դիմում եմ եկեղեցին, անցողաբար կարդում եմ արձանագրութիւնները և կանգ եմ առնում մի նոր—գեղեցիկ յուշարձանի դիմաց... Հնութիւններ շատ ունիմ տեսած.... բայց այն զգացումը, որ ես ստացել եմ անսպասելի կերպով Եւրոպայի մի անկիւնում մայրենի լեզուի հետքեր գտնելով, այն միտքը, թէ միանգամ այստեղ ապրել ու խօսել են հայեր, որոնց կենդանի ապացոյցը տեսնում եմ այս արձանների վրայ, ինձ մի տեսակ թովիչ, կախարդական և երկիւղալի տպաւորութեան մէջ էին գրել։ Մարդ չի ուզում հաւատալ իւր աչքերին, և միանգամայն շփոթւում է, որ դրանք մեր կորստեան լաւագոյն ապացոյցներն են... մարդ մտածում է անցեալին, ներկայի և ապագայի մասին, և մի զառանցալի ու տխուր անորոշութիւն ճըմլում կեղեքում է մարդու սիրտը...

«Համեցէ՛ք, վերև համեցէ՛ք», լսում եմ յետևից և հաւատալս իսկի չի գալիս, ոմն պիտի այս տեղ հայերէն խօսի, ոմն գիտէ իմ հայ լինելս. ինձ այնպէս թուաց թէ ականջներս խաբում են, թէ այս արձանագրութիւնները են, որ լեզու առած ինձ հետ հայերէն են խօսում, ճանապարհի բազմաթիւ տպաւորութիւններից և անքնութիւնից յոգնած երևակայութեան համար մի տարօրինակ բան չէ բաց աչքով պառանցելը... և սակայն, ձայնը կրկնւում է. Ցետ եմ նայում պատուհանին, որտեղից ձայնն է գալիս և զարմանքով նկատում, որ տեսածս իրականութիւն է. «Համեցէ՛ք, համեցէ՛ք կրկնում է մի պարոն ժպիտն երեսին, վերև համեցէ՛ք»։—

Մի քանի քայլով արդէն երկրորդ յարկումն էի, որտեղից ինձ կանչում էին, ուր հաւաքուած գտայ եօթ ութ հոգի, լոլորեքեան հայ կաթոլիկ հոգևորականներ. բոլորն էլ գիտեն մի քանի խօսք հայերէն, ոչ աւելի.—մինը միայն, Պաւլովիչ, անսպառ հայերէն է խօսում. մնացեալների հետ սկսեցի գերմաներէն բացատրուել.—Նրանցից տեղեկացայ, որ Թէոդորովիչը իմացել է իմ գալը և ինձ է որոնում։ Հայ հոգևորականները տեսնելով ինձ նկեղեցին դիտելիս, ճանաչել են, որ ես պիտի լինիմ նորեկը և ներս են կանչել։—Մի քանի րոպէ խօսակցելուց յետոյ նրանք մի ծառայ տուին, որ ինձ ցոյց տայ Թէոդորովիչի տունը. Հազիւ դռնից դուրս էի եկել, որ մի զոյգ առոյգ ու երիտասարդ ձեռներ սեղմեցին իմ բազուկը.—դա Աւգուստ Թէոդորովիչն էր, իմ որոնած հայ ուսանողը, հայ—կաթոլիկ հոգևորականի տարազով, սև ու թարմ հայկական դիմագծերով մի տաք ու վառվռուն երիտասարդ... Նա առաջնորդեց ինձ իր նոր բնակարանը, ուր Եւրոպայի հայ ուսանող-

ների բարեներն հաղորդելուց յետոյ յայտնեցի, որ կուզէի մնացեալ ուսանողներին էլ տեսնել, որ շուտով ճանապարհս շարունակեմ։

Թէոդորովիչը ծիծաղեց, հասկանալ տալով, որ նրանց ձեռից հեշտ չէ շուտով պրծնելը.—տասբաղդաբար երկաթուղու տոմսակս առնուած էր մինչև սահմանը, որի ժամանակամիջոցը հազիւ կարողացանք երկու օրով երկարել տալ, որ ես պիտի անցկացնէի Լեմբերգի հայ ուսանողների շրջանում։—

Ես ո՛չ մի տեղ չեմ ստացել այնքան հաճելի, այնքան քաղցր տպաւորութիւն, ինչպէս այդ ուսանողների մէջ. նրանց հիացմունքին ու հրճուանքին չափ չկար, որ մի հայաստանցի այցելու, մի հայ հիւր ունին։—Այդ երկու օրուայ տպաւորութիւններս պատմելը միանգամայն վեր է իմ գրչից.—ես կաշխատեմ միայն մի քանի ընդհանուր գծերով բնաւականանալ։

Թէոդորովիչը հայի պէս ինձ հիւրասիրելուց յետոյ առաջնորդեց պ. Մանուկևիչի մօտ, ուր երկու սենեակում չորս հայ ուսանող միասին են ապրում։ Մի ժամից յետոյ տասից աւելի ուսանողներ արդէն շրջապատել էին ինձ։—Հայեր, այնպիսի վառուած ու տոգորուած հայեր, որոնց նմանը ես երբէք չեմ տեսել. Նալբանդեան, Արովեան և Նազարեան կարդալիս, ես զուր եմ որոնել նրանց տիպերն և առհասարակ 50—60 թուականների երիտասարդութիւնը մեր ժամանակներում. տեսնելով Լեմբերգի հայ ուսանողներին, իմ երևակայածը գոյ կենդանի իրականութեան մէջ. . . . սրանց ոգին, միամիտ հաւատը և զարմանալի ոգևորութիւնն ու սէրը ինձ յիշեցնում էր յիսուն թուականների մեր երիտասարդութիւնը . . . .։

Մի կողմից նրանք ուշ ու միտք դարձած ուզում են անթիւ հարցերով գաղափար ստանալ մեր կացութեան մասին, նրանք հրճւում են, լսելով որ հայերի մեծամասնութիւնը դեռ հայերէն է խօսում, ժողովրդի մեծ մասը դեռ հողագործ է . . . որ ունինք մամուլ, դպրոցներ ու կրթուած մարդիկ. որ կաթոլիկութիւնը մեզ համար վտանգաւոր չէ . . . միւս կողմից ամէն ջանք ու ճիգ թափում են ցոյց տալու, որ իրանք էլ դեռ հայեր են, լաւ հայեր, թէև կաթոլիկ ու լեզուն մոռացած։ Մարդ ուղարկեցին և բերել տուին «Հայոց դպրոցից» միակ հայ տղան, որ դեռ չէ մոռացել մի քանի հայերէն բառեր, իսկ երբ նա սկսեց հայերէն մէկ—երկու համարել, նրանց հիացմունքը հասաւ հրճուանքի։ Խեղճերս, չգիտեն թէ քանի—քանի հայ ընտանիքներ դիտմամբ ջանք են թափում մոռանալու հայերէնը . . . նրանք ուղեցին ինձ հայավարի հիւրասիրել և բերին բուժեն (սաճաւ միս), որ մեծիայն տեղացի հայերի կերակուրն է. դա պատրաստւում է այծի մսից և մի տեսակ երշիկ է . . . ճաշից յետոյ, երեկոեան հայերի թիւն հասաւ 15-ի. կանչեցին միակ հայ գինուորին, որին է յանձնուած տեղական զօրքի պաշարը գնելու և մատակարարելու գործը, շնորհիւ իւր աչալրջութեան։

Ինձ ստիպեցին, որ ազգային տաղեր երգեմ, և նոյն երեկոեան գրի առան ու սովորեցան «Բամբ որոտանը», որ նրանց սաստիկ դուր եկաւ. Նրանց ջգևորութիւնն այն աստիճանի է հասել, որ որոշել են միջոցները ներածին պէս Հայաստան գալ, հայ աղջկայ հետ ամուսնանալ և հայերէն սովորել։ Ամանք ձեռ են քաշել իրանց ընտրած աղջիկներից, հայ աղջիկ ուզելու մտադրութեամբ։ Կարծելով թէ ինձ համար անպատեհական է նրանց կրօնը,—կաթոլիկութիւն, օգտուելով կանոնիկոս Թէոդորովիչի բացակայութիւնից, բացատրում էին, որ առաջին յարմար րոպէին նրանք պատրաստ են մայրենի եկեղեցու գիրկը դառնալ։—Ես նրանց հասկացրի, որ անցել են կրօնական մոլեռանդութեան շրջանները և թէև ցաւալի է այն, որ հայերից շատերը կաթոլիկ են դարձել, բայց և այնպէս, նրանք մեզ համար նոյնպիսի հարազատ ու սիրելի եղբայրներ են ինչպէս և լուսաւորչականները, միայն իրանց հայ զգան և հայ ճանաչեն . . .

Այդ երեկոյ, թատրոն չլինելու պատճառով ինձ տարան ցիրկ, այնտեղից էլ ընթրիքի և ապա իրանց մօտ ննջելու։ Առաւօտ կանուխ ես ինձ հրաւիրողներին թողնելով քնած, շտապեցի Կանոնիկոս Թէոդորովիչի մօտ, որին գտայ պարապելիս։ Երիտասարդ հոգևորականը մի լաւ գրադարան ունի, յատկապէս հայերին վերաբերեալ գրքերի եւրոպական բոլոր լեզուներով. հին լեզուներից զատ նա ազատ խօսում և գրում է ֆրանսերէն և գերմաներէն, իսկ լեհերէնը նրա մայրենի լեզուն է. Ձնայելով որ մայրը լեհ է, նա է տեղական հայութեան հոգին ու եռանդը. գրում է լեհական և գերմանական թերթերում և առանձին բրօշիւրներ ունի նուիրած հայոց ինդրին . . . . ազատ կարդում է հայերէն, միայն շատ քիչ բան է հասկանում։ Նրա ցանկութիւնն է կարելւոյն չափ շուտով Հայաստան գալ հայերէն սովորելու, որի համար նա ուզում է մինչև անգամ ուսումը կիսատ թողնել։ Իմ բարի խորհուրդն էր համոզել, որ նա առաջ վերջացնի ուսումը, ապա վերջնապէս նուիրուի հայերէնի ուսումնասիրութեան։

Գործն աւելի հիմնաւոր անելու համար, ես նրանց պահանջի համեմատ խոստացայ մի հայ ուսանող ուղարկել, որ ուսուցանէ նրանց, և ինքն էլ ուսանի համալսարանում . . . .

Աւգուստ Թէոդորովիչն ինձ ուղեկցեց քաղաքից մի քիչ դուրս զբօսնելու . . . ճանապարհին նա ցոյց էր տալիս այս կամ այն տունը, այս և այն եկեղեցին ու վանքը, որ ժամանակով հայերին են պատկանել, իսկ հիմա անցել են լեհերի ձեռը։

Նա ինձ ցոյց տուաւ քաղաքի կենտրոնում մի հիանալի արձան նուիրուած մի յայտնի լեհացի թագաւորի յիշատակին, որ հայի գործ է և արուեստագէտն էլ դեռ կենդանի։ Պատմեց յայտնի նկարիչների, մամուլի ներկայացուցիչների, բանաստեղծների, ջութակահարների և այլ նշանաւոր արուեստագէտների ու դիպլոմատների մասին հայ—ծագումով, որոնցով պարծենում է լեհական ազգը։— Հայերն այնքան լաւ անուն են ունեցել այդտեղ և այնքան մեծ հայրենասիրութիւն, որ Սենկևիչը իր մի պատմական վէպի մէջ մեծ համակրանքով է խօսում նրանց մասին ...

Այդ օրը ճաշից առաջ հարկ էր այցելել տեղական մի քանի հայերի. մինին (արձանագործին) տանը չգտանք, երկրորդը—վաճառական շատ սիրալիր ու զարմացած ընդունեց «հայի» այցելութիւնը, երրորդին, որ պրօֆեսսօր է, նոյնպէս տանը չգտանք, սակայն աւելորդ չհամարեցինք կրկին անգամ ճաշից յետոյ այցելելու։ Թէոդորովիչը ներկայացրեց ինձ այդ պարոնին, և որքան ես մակաբերել կարող էի լեհերէնից, ասաց որ մի Հայաստանցի պարոն է, որ հետաքրքրւում է տեղական հայերով .... Պրօֆեսսօրը, Յովհաննէս Բօլոցի ասպետ Անտոնևիչ, պատկանում է տեղական արիստոկրատիային, դասախօսում է գեղարուեստի պատմութիւն և յայտնի գիտնական է։ Նա բարձրահասակ, մորթու թուխ գոյնով և բուն հայկական տիպարով մի պարոն է, որ հայի լրջութեանը միացնում է մի մեղմ ու դուրեկան արտայայտութիւն, եւրոպական արիստոկրատի հաճելի ու դուրեկան շարժուձևերով ...

Նա մեզ ընդունեց վերին աստիճանի սիրալիր, իր գրասենեակում, ուր հատ գրքերով ծանրաբեռնած սեղանի շուրջը սուրճ հրամցուց։ Մի քանի վայրկեանից յետոյ սիրալիր խօսակցութիւնը դարձաւ ընկերական, կարող եմ ասել եղբայրական։ Հասկանալի է, խօսակցութեան նիւթն ինչ կլիներ .... ինձ հետաքրքրողը Լեհաստանի հայերն էին, իսկ պրօֆեսսօրի ցանկութիւնն էր կարելւոյն չափ շատ տեղեկութիւններ ստանալ մեր մասին։ Այդ ամէնի հետ ինձ զարմացնողն ու հիացնողն այն էր, որ մի լեհական ազնուական, մի աւստրիական հպատակ և վերջապէս մի գիտնական, առանձնացած ու դարերով կտրուած հայրենիքից, ոչ միայն արտաքինով, այլ և հոգով մնացել է կատարեալ հայ։ Ես առանց քաշուելու ասացի նրան իմ կարծիքը, աւելացնելով, որ նա պարտական է Հայաստան գալու և իր աչքով տեսնելու այն ամէնը ինչ որ նրան հետաքրքրում է ... «մենք մի Հայրիկ ունինք, որին ուխտ են գալիս ամէն տեղի հայեր։ ես պիտի պատմեմ Ձեր մասին Նրան և Նրա սիրտը պիտի ցաւի, եթէ դուք Ձեր որդիական յարգանքները չմատուցանէք Նրան Էջմիածնում։ Ես Ձեզ ճիշտ եմ ասում, մինչև օրս մենք չգիտէինք, որ Եւրոպայում մենք Ձեզ նման բանիմաց հայ եղբայրներ ունինք, այդ մասին ես պիտի յայտնեմ մեր մամուլի մէջ, և Դուք Հայերի յանդիմանութեանը պիտի արժանանաք, եթէ մեզ այցելութեան չգաք։ Իրաւ արևելցի ես պարզ եմ ասում այն, ինչ որ մտածում եմ, մենք էլ արուեստ ունինք, Ձեր վրայ պարտք կայ ճանաչել տալու մեր արուեստը Եւրոպային» ....

Իմ խօսակցութիւնն լինչպես երևում է լաւ տպաւորութիւն էր թողել պրօֆեսսօրի վրայ, որովհետև երբ ոտքի ելանք մեկնելու նա համառեա զօրով ստիպեց, որ նոյն երեկոյեան անպատճառ իրան կրկին այցելութեան գնանք. տեսնելով որ այդ անկարելի է, քանի որ նոյն օրը ես մեկնելու էին, նա յանդրեց ներկայ գտնուիլ իր դասախօսութեանը, վերջում մի քիչ զրուցելու։ Ժամանակի սակաւութեան և ճանապարհի պատրաստութեան պատճառով ես ու իմ բարեկամ Թէոդորովիչը հազիւ դասախօսութեան վերջին մտնել կարողացանք լսարան, ուր խօսում էր պ. Անտոնևիչը. նա մի այնպիսի ընդունելութիւն ցոյց տուաւ, որ ես պէտք է մինչև ականջներս կարմրէի։ Մեր մտնելը նկատելուն պէս՝ նա վերկացաւ տեղից և խորը կերպով գլուխ տուաւ, որի պատճառով ամբողջ լսարանը՝ օրիորդներ ու երիտասարդներ, հայեացքներն ուղղեցին դէպի մեզ։ Դասախօսութեան նիւթը Միքել—Անգէլօ-ի մի պատկերն էր։

Իմանալով որ արուեստի մասին ես Բերլին լսել իմ յայտնի Գրիմին ու Վալտերին, պրօֆ. Անտոնևիչը հարցրեց իմ տպաւորութիւնը, սակայն ես չէի կարող որևէ կարծիք յայտնել, քանի որ տարաբաղդաբար բան չէի հասկացել իր խօսածից, որովհետև դա լեհերէն էր ...

Նա մեզ առաջնորդեց իր աշխատանոցը ... և բաց արաւ մի խումբ ստուար կարտոններ, որոնց վերայ գիտնական հոգածութեամբ ու խնամքով արտահանած էին բոլոր այն արձանագրութիւնները, ծաղկանկարներն ու քանդակները, որ երբ և իցէ ստեղծել են Լեհաստանի հայերը։ Այն գրերը, որ ես ցաւելով հանդիպել էի հայ հոգևորականի շէմքում կորստի մատնուած, հիացմունքով տեսայ, որ հայ—գիտնականը խնամքով ժողովել և պահում է ... Պ. Անտոնևիչը տեղական հայ—եկեղեցու երեցփոխն է, ուզում է նոյն եկեղեցին նորոգել հայ—ճաշակով, ուստի ինձանից տեղեկութիւններ և նիւթեր խնդրեց 17 դարու հայ արուեստի մասին։ Վերջացնելով այդ հաւաքածուն դիտելը, մենք նստանք հարևան սենեակում խօսելու։ Նկատելով համալսարանի ուսանողների և պրօֆեսսօրների ցանկը, նա սկսեց հաշուել և ցոյց տուաւ, որ պրօֆեսսօրներից վեցը հայ ծագում ունին, բայց երկուսն են միայն, որ դեռ չեն մոռացել

իրանց ազգութիւնը։ Ուսանողների մէջ հազիւ ութ հոգի հայ են գրել իրանց, որի վրայ վրդովուելով, նա պատուիրեց Թէոդորովիչին «իր անունով յանդիմանելու այն ուսանողներին, որոնք իրանց հայ անունը մոռացել են նշանակելու ցանկի մէջ. եթէ ռուս մինը, լեհը, գերմանացին այստեղ չեն մոռանում իրենց ազգը, մենք ի՞նչու պիտի մոռանանք»։ Միևչ այդ, պրօֆեսսօր Անտոնևիչը մանկական պարզութեամբ խնդրեց լսել իր երգածը և հաւաստիացընել, արդեօք ճիշտ է եղանակը . . . և յիսունամեայ գիտնականը սկսեց երգել «Մեր հայրենիք թշուառ անտէր» . . . մի այնպիսի ներշնչմունքով, որ կարելի էր լաց լինել, եթէ մարդ չամաչէր։ Այդ երգը նա սովորած է եղել Վենետիկի հայրերից, առանց հայերէն գիտենալու։

Լսելով որ տեղական հայ ուսանողները ուզում են հայերէնի ուսուցիչ հրաւիրել, նա սաստիկ ուրախացաւ աւելացնելով, որ աշակերտներից մինն էլ ինքն ու իր որդին պիտի լինին։ Երբ ես կրկին խնդրեցի խոստանալ Հայաստան գալու, նա ասաց, որ առաջիկայ երեք տարուայ ընթացքում նա այդ չի կարող անել, որովհետև գիտնական նպատակով նա պաշտօնապէս պարտական է ուղևորուել Իտալիա և Պօրտուգալիա, իսկ այնուհետև «երբ ես հայերէն սովորած կլինեմ, այն ժամանակ կուգամ Հայաստան իմ աչքով տեսնելու և հասկանալու, որովհետև ես ուսումնասիրած չեմ համարում այն բանը, որ թարգմանների միջոցով է կատարուում»։ Նա հայերէն սովորելու դասագիրք խնդրեց ինձանից, որ անկարող էի տալ, քանի որ այդպիսին աշխարհաբարի համար գոյութիւն չունի։ Խոստանալով նիւթեր ուղարկել հայ արուեստի և հայ երաժշտութեան մասին, յայտնել մանաւանդ՝ արդեօք հայի գործած կապերտը, գորգը և կամ որևէ արուեստի գործը որոշո՞ւմ է թուրքերի ու պարսիկի գործերից, ես մնաս բարև ասացի պրօֆեսսորին, որ մի անմոռանալի գուրեկան տպաւորութիւն թողեց վրաս։

Նա իրրև յիշատակ ինձ տուաւ մի փոքրիկ բրօշիւր, Լէհաստանի հայերի մասին, որ իր գրածն է, և քաղուած է «Աւստրօ—Ունգարեան պատկերով ու խօսքով»—յայտնի գործից, որ պետական հրատարակութիւն է։ Այդ բրօշիւրի թարգմանութիւնն է, որ տալիս ենք ստորև . . .

Նոյն երեկոյեան ժամը 10-ին, 12-ի չափ երիտասարդ հայեր երկաթուղու կայարանն եկան ուրախ երգերով և յոյսերով ճանապարհ ձգելու «Հայաստանցի բարեկամին», ուղարկելով իրանց լաւագոյն իղձերն ու ցանկութիւնները իրանց հեռաւոր եղբայրներին . . . .

Երկաթուղին սլանում է, ես առանձնացած օթեակում շարունակ մտածում եմ, երազ էր այս ամենը թէ իրականութիւն . . . և ես յաւիտեան չեմ մոռանայ այդ բարի, ազնիւ ու հիւրասէր երիտասարդներին, որոնք երկու օրուայ ընթացքում այնքան գուրեկան և անջնջելի տպաւորութիւն թողին վրաս . . . .

Դր. Վանցեան.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԻՋԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ.

Վաղուց ի վեր առած է դառել անգլիական ազգի գործնական խելքն ու ձեռներէցութիւնը. նոքա աշխարհի բոլոր մասերում իրենց շահերն ունին՝ լինի քաղաքական, լինի առևտրական, ամբողջ աշխարհը ձգտում են իրենց ազդեցութեան ենթարկել քաղաքականապէս կամ մտաւորապէս, և այդ միայն լոկ ձգտումն չէ, այլ որոշ չափով իրողութիւն։ Ամէն մի աշխարհագրութեան տարեդքը սովորող աշակերտ գիտէ, որ ամենաբնդարձակ կալուածները, իրենց բազմաթիւ բնակիչներով Բրիտ. մի փոքրիկ խումբ կղզիների բնակիչներին են պատկանում։ Ու այդ բազմաթիւ ժողովուրդները ոչ միայն զինքի ոյժով նուաճուած ու կապուած են, ոչ միայն ձնշման երկիւղով հպատակ են, այլ և ենթարկուած են նոցա քաղաքակրթիչ ազդեցութեան, իրենց անհատական ազատութեամբ, ներքին կառավարութեամբ, կրթութեամբ և հարստութեամբ անհամեմատ առաջ են շատ ու շատ անկախ պետութիւն ունեցող ժողովուրդներից։

Զարմանալի չէ ուրեմն, որ շատ ու շատ դիւանականները, նոյն իսկ պետական անձինք՝ ուսումնասիրում են անգլիական կեանքը իր բոլոր երևոյթներով. մանաւանդ յատուկ ուշք են դարձնում նոցա սկզբնական և միջին կրթութեան վրայ։ Ու շատերը եկել են այն եզրակացութեան, որ այս զարմանալի յառաջադիմութեան, առաջնդի, ձեռներէցութեան գլխաւոր ոյժ տուողը նոցա ընտանեկան և գաղտնական կրթութիւնն է։ Հետաքրքրուում

են այս մասին յատկապես ֆրանսիացիք, ամերիկացիք, և արդէն ամբողջ գրականութիւն են ստեղծել: Աւելի ընդարձակ տեղեկութիւններ ցանկացողները թող ձեռք բերեն Մ. Լի՛կլերկի կամ Ը. Դեմոլէնի գրքերը: Իսկ մենք կբաւականանանք յիշատակել այստեղ միայն միջնակարգ դպրոցների ուսման և դաստիարակչութեան բնորոշ գծերը:

Ա.

Անգլիական կրթութեան գործով հետաքրքրուողները ցոյց են տուել, որ Բրիտանական ժողովուրդը միշտ այդպէս չէ եղել, ինչպէս այսօր՝ է: Հինգ հարիւր տարի առաջ փակուած, յետ ընկած, քնաթափութեան ենթարկուած, այսօր եռուն կեանքով, անյագ գործունէութեամբ, ամէն տեղ և ամէն գործում: այնպէս որ տուէրն անգամ՝ էֆ գրաներ այսօր անցեալի թուլութեան, անգործ ու անընդունակ անգլիացու: Նոյն իսկ՝ ականատեսների ասելով՝ յիսուն, հարիւր տարի առաջ անգլիացիք կռշտ, դանդաղաշարժ, շատակեր և արբեցող մի ժողովուրդ էին: Սրա ծովային զօրութիւնը հետագայ սերունդի գործ է. այս փաստ է, որ նոր երկրներ գտել են ուրիշ ազգեր՝ Իսպանացիք, Հոլլանդացիք եւն:

Պէտք էր այդ ժողովուրդը բոլոր ուժով աշխատէր, կրթուէր, բնաւորութեամբ փոխուէր, քնած ընդունակութիւնները զարթեցընէր, մի խօսքով պիտի վերստեղծուէր, և նա այդ արաւ ի զարմանս բոլոր ազգերի: Առաջնայ գիտութեան, հասկանալու տրամադիր անգլիացին փախչում է գիտութիւնից. նա այսօր գործունէութեան և շարժողութեան մի զարմանալի օրինակ է:

Անգլիացին այսօր ինչ վիճակ էլ ունենայ, կրթութիւնը ձեռքից չի թողնիլ. նա վարժուում է ինքնօգնութեան և կարգապահութեան: Արդէն մանկութիւնից, դպրոցական նստարանից երևան են գալիս բնաւորութեան և տագանդի տէր, ապագայում՝ ժողովրդի գլուխ և առաջնորդ կանգնող անձինք՝ շնորհիւ այն ուղղութեան և կրթութեան եղանակին, որի բնորոշ գծերն են ծեռներէցութիւն՝ մրցութեան սէր, առաջնորդող դեր կատարելու կատարեալ պատրաստականութիւն, առողջութիւն, եռանդ՝ մի խօսքով առողջ ուղեղի, մկանունքների և կամքի ներդաշնակ զարգացում: Տեսնենք թէ ինչպէս են հասնում նոքա այդ ներդաշնակութեան:

Անգլիական կրթութեան ամենից բնորոշ գիծը ուսուցման և դաստիարակութեան անբաժան կապն է: Ծերոպական միւս ազգերը խիստ տարբերում են երկու բան՝ դաստատու և դաստիարակ. որոշ գծուած են նոցա իրաւանց և պարտականութեանց շրջանները. մէկը միւսից անկախ է գործում, առաջինը երկրորդի պատասխանատուն չէ, իւրաքանչիւրը իւր շրջանից դուրս չի գալիս: Ուսուցիչը դասը տուեց, ազատ է, գլխարկը դնել հեռանալ, նոյն իսկ դասատան մի անկարգութիւն ի հաշիւ չառնել, կամ՝ շատ շատ յայտնել վարչութեան ի տեղեկութիւն, և հանգիստ խղճով իւր պարտքը կատարած համարել: Մի խօսքով դասը տալուց յետոյ չմտածել այլևս դպրոցի դրութեան մասին, գնալ իւր գործին, մէկ էլ միւս օրը դասնալ դպրոց: Այս կարգը Անգլիայում գոյութիւն չունի. պատասուն միևնոյն ժամանակ և դաստիարակ է. մտաւոր և բարոյական կրթութիւն անքակ թելերով կապուած են իրար հետ, նոյն իսկ մի հասկացողութիւն են: Անգլիացու բառարանում չկայ ուսուցիչ և դաստիարակ, ուսումն և դաստիարակութիւն, այլ միայն կրթութիւն: Մարմնական, բարոյական և մտաւոր կրթութիւն միևնոյն կարգապահութեան և սկզբունքի են ենթարկուած: Անգլիացու համար անհեթեթութիւն է, երևակայել թէ, դպրոցը դուրսից մինչև կամ միւսին կարող է առաւելութիւն տալ, թէ կարող է դպրոցը մտաւորապէս զարգացած, բայց բարոյական կրթութեամբ թոյլ անձինք պատրաստել, ահագին ուղեղ ու չորացած միտներ ստեղծել: Բրիտանացին չի կարող մարսել, որ մտաւորը իւր կեանքի դպրոցն և ընդունակ ժամանակը անցկացնի և աշխատի ուսուցչի ձեռքի տակ և նորա լաւ լաւ յատկութիւնները չիւրացնի և նորա բնաւորութեան ազդեցութեանը չենթարկուի:

Ուսուցչի տեղ բռնում են երբեմն և տուտոր-ներ, որոնք կամ՝ ազատ պարապմունք

ակը մոլորիկ են լինում և 30—40 երեխայ կրծում են իրենց աներում կամ մի ուսում նարանի ծառայող, որ ունենում են իրենց սենեակները և պահում իրը պեշերօթիկ 40 կամ աւելի թուով աշակերտներ. տուտորները աշակերտների սեղանից ուտում և միասին նոցա հետ մնում միշտ: Տուտորը թէ իմամում է և թէ դաս տալիս: Դասարանական պարապմունքներից յետոյ նա աշակերտների առաջնորդն է խաղերի և այլ պարապմանց մէջ, նոցա սիրելի և յարգելի խորհրդատուն և բարեկամը: Ինչ երեմեակ դպրոցներում իւրաքանչիւր աշակերտ պիտի ունենայ գասատուներից մինը իւր համար պատասխանատու անձն թէ ուսուցման թէ դաստիարակութեան համար. այլապէս աշակերտը չի ընդունուիլ դպրոց:

Անգլիացու կրթութեան հիմնական տարբերութիւնը աչքի կընկնի աւելի, երբ համեմատենք եւրոպական միւս տպերի հետ: Միջնակարգ դպրոցը մայր ցամաքում ունի միայն մի դիտաւոր նպատակ. պատրաստել պետական ծառայողներ, ատիճանաւորներ, որի համար մանրամասն հրահանգներով քննութեան ծրագիրը կայ: Այդ ծրագիրը երջանկութեան դուռն է, որի բաղխողները ամէն տարի հազարաւորներ են. իսկ ներս ընդունուողները շատ սակաւ: Ով որ պլուխը ծանրացրել է մի շարք դիտութեանց և նոցա ճիւղերի անուններով, բանաձևերով և անթիւ սերտած կանոնաւոր ու անկանոն ածականութիւններով, նա էլ աւելի յոյս ունի ներս ընդունուելու: Մարմնոյ ֆիզիքական կողմերը՝ ջղեր, մկաններ, աչքեր, ականջներ, կուրծք, ձայն վերջապէս բարոյական կողմերը անուս են առնուած: Ամէն բան որոշուլը սահացած թուանշանն է: Քննութեան պատրաստուողը, ինչպէս և պատրաստողը, ժամանակ անգամ չունի մարմնական կատարելութեանց վրայ մտածելու կամ բարոյականի համար հոգալու: Նա տարիներ շարունակ սովորել է, աշխատելով օրական 10—11 ժամ, իսկ քննութիւնը քամում է և նորա վերջին կենսական հիւթը: Իրը դերեզմանից դուրս եկած կմախքներ երևում են սոքա երկրի երեսին, մինչև որ երջանկութեան դռնից իրենց ներս ձգեն: Այնուհետև հանդչում է և ոչնչով, և դարձունդութեան սէր, և բարոյական բարձր ձգտմանց կարիք:

Անգլիական դպրոցներում պատրաստում են ոչ թէ քննութեան, այլ կեանքի համար: Նոցա դիտաւոր հոգսը չէ բան կարելոյն բեռնաւորել աշակերտներին գիտութիւններով, այլ առաջարկ հանել առողջ և կայտառ երիտասարդներ, ուժեղ մարմնով ու կամքով, ճարպար ու ճարպիկ կեանքի կռուի մէջ: Անգլիացի մանկավարժները շատ են վախենում պարապութիւնից, քաշուում են նատակեաց պարապմունքներից: Նոցա աշակերտը ամենաշատը օրական 8 ժամ է աշխատում: Նորա երբէք հետամուտ չեն ընդարձակ ծրագիրների. մայր ցամաքի ծրագիրը միջնակարգ դպրոցներում՝ նոցա համար չափազանց լայն է և ծանր: Բոլոր անգլ. դպրոցներում բացի ամն օրերից և կիւրակիներից՝ երկու կամ երեք անգամ շաբաթը բաց օդում խաղի են ելնում: Նոյն իսկ պատժի կողմից էլ տարբեր է, նոցա հայեացքը: Պատուհիւնից կամ ճաշից, կամ ճաշի որոշ տեսակի կերակրից դրկել նոցա աչքում անվիտ և վնասակար պատիժ է, որ պակասեցնում է նոցա յաժէքը և վնասում առողջութեան: Դիտաւոր չանքը, պատժի փոխարէն՝ ուղղած է կրթել մանկան բնաւորութիւնը, զարդացնել նորա մէջ պատուի զգացմունքը և պատասխանատուութեան գիտակցութիւնը:

Աշակերտների վերայ հսկողութիւնը շատ քիչ է, նոցա որոշ ժամանակով պատուհիւն են տալիս. նոյն իսկ փոքրները վայելում են կատարեալ ազատութիւն: Բայց տասխանատուիւնը ամենից մեծ չանցանքն է համարուում: Աշակերտի տետրը որ բռնուեց, նա պիտի թողնէ դպրոցը, որովհետև իւր ընկերներից ոչ ոք հետը չի խօսիլ: Երբ ուսուցիչը հարցնում է. «ով է արել այս բանը».—«ես» կպատասխանէ չանցառորը: Ոչ ոք նրա վերայ չի ծիծաղիլ, և նորա յարգը ընկերների աչքում բարձրանում է:

Անգլիական դպրոցի միւս սկզբունքն է որոշել իւրաքանչիւր աշակերտի առանձնայատկութիւնները և դիտել նորա ամենիւ զգաց-

մանքներին։ Ահա երկու շարժիչներ, որով թէ մեծապէս օգնում են դպրոցական գործին և թէ իրենց գործը թեթևացնում։ Անգղիական դպրոցը փոքր դիրքով նոյն երկրի պետական մարմնի կազմակերպութիւնն ունի, նորա հասարակական շէնքն է։

Ուսուցչի և աշակերտի յարաբերութիւնները շատ սերտ են, բարեկամական և ոչ պաշտօնական։ Ուսուցիչները շատ են հետաքրքրում իրենց սանիկներին, մանաւանդ մեծերին։ Վերջիններիս՝ նոյն իսկ փոքրների կրթութեան գործում մասնակից են անում։ «Մեր ամենից լաւ օգնականները մեծ աշակերտներն են, ասում է Բեռելեան դպրանոցի տեսուչը. առանց նոցա օգնութեան շատ դժուար կլինէր, նոյն իսկ անկարելի՝ մեր գործը կատարել»։ Մեծ աշակերտները աւելի շատ կարող են օգնել դպրոցի կարգապահութեան և լաւ ապահովութիւն ունենալ աշակերտների վերայ, քան վերահսկիչները. ուստի նրանց են վստահում փոքր ընկերների հսկողութիւնը։ Ամէն մի խումբ աշակերտ ունենում է իւր մենիտորը՝ դասարանում մինը կատարում է մատենադարանը և գրքեր տալիս ոչ միայն աշակերտներին, այլ և ուսուցչաց, երկրորդը՝ դասարանական առարկաները, երրորդը խաղալիքները, պարապմունքական գործիքները և այլն և այլն։ Փոքր աշակերտները պարտաւոր են լսել մենիտորին, որը իրաւունք ունի նոյն իսկ պատժել. բայց եթէ ապացուցուի, որ ինքն է յանցաւորը, խիստ պատժի կենթարկուի։ Այսպէս, վստահութիւն և հեղինակութիւն երկու կրթիչ ոյժեր են. ուսուցիչը վստահում է կատարեալապէս աշակերտին, իսկ վերջինն հնազանդում է ոչ միայն ուսուցչի, այլ և իւր մեծ ընկերոջ հեղինակութեան։ Ինքաքանչիւր աշակերտ վայելում է ընդարձակ ազատութիւն, ամէն մէկի անկախութիւնը յարգուում է, բայց և աչալուրջ հսկում են, որ անհատի շահը չընդհարուի հասարակաց շահի հետ. «Ու այս մի խումբ մանուկ քաղաքացիները, որոնք յարգում են իրենց անձնաւորութիւնը և ընկերի ազատութիւնը, որոնք ունին իրենց առաջ այսպիսի կատարելիներ (մենիտորներ), հասկանում են, որ իրաքանչիւրի անհատական ցանկութեանց մէջ պէտք է լինի պօրէն հաստատութիւն և միութիւն, որ նոցա կամքը պէտք է միանայ և պահպանուի ընդհանուրի ջանքով և հնազանդի մի ընդհանուր օրէնքի» (Լի՛կլերկ)։

Այժմ տեսնենք ինչպէս և ինչ ծրագրով յառաջ են վարում այստեղ ուսուցման գործը։

(Շարու-նակելի)

Ս. Ե.

ՆԱԽԱԿԻԼԻԿԵԱՆ—ՀԱՅԵԱՆ ՆՈՐ ԱՐՋԱՆԱ ԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ Ի ԿԵՍԱՐԻԱ.

Անցեալ տարի ի ս. Էջմիածին գանուած միջոցիս, խոստացել էի ուղարկել «Արարատի» համար, հնութեան և կամ Հէրնէնեան արձանագրութեան վերաբերեալ այն ամէն դիւտերըն, որք եղել ի նորոյ գտնուին ի Կեսարիա և ի շրջակայս նորին։ Ահաւասիկ այս անգամ կը կատարեմ իմ խոստումս, ուղարկելով «Նախկինկեան—Հայկեան» նորագիւտ արձանագրութիւն մի՝ ի տպագրութիւն և ի հրատարակութիւն «Արարատ» ամսաթերթի մէջ։

Ասկէց առաջ, Վիեննայի Մխիթարեանց միաբանութեան կողմէ հրատարակուող, «Հանդէս Ամսօրեայ» ուսումնաթերթի, 1896 յունիս ամսաթուոյն մէջ (էջ 161), երբ Ագրակի «Նախակիլիկեան — Հայեան» արձանագրութեան կրկին մէկ օրինակը կը ներկայացնէի, առիթ ունեցայ այնտեղ ըսելու թէ՝ «Կեսարիոյ հարաւային կողմը «Էրճիաս» (=Արգէոս) անուն հոչակաւոր լեռան ստորոտը գտնուած, առաւել կամ նուազ ընդարձակ տափարակ տեղերու, բլրակներու, սարերու և ձորերու վրայ եղած բազմաթիւ այգիներու կարգին մէջ նէյէր [1] մը կը գտնուի, որուն գեսարիոյ ամէն ազգի ժողովրդեան բերնին մէջ, անյիշատակ ժամանակներէ, ի վեր, «Հէրնէնեբո— Նէյէր» կըսո-

1. կեսարիոյ, առ հասարակ ամեն ազգի ժողովրդեան մէջ Նիյէր կըսուի, ինչպես ծանօթագրած ենք արդեն, 50—100 եւ կամ ալ աւելի այգիներու ցեղույն, որ սահմանի մը մէջ են, եւ իւրաքանչիւր մեծ ու փոքր այգին այս ու այն անհատին սեփական է։

ուի։ Ասկէց զատ աւելցուցած էին, թէ բուն իսկ քաղաքին, այսինքն՝ Կեսարիոյ մէջ, օտարազգի թուրք ընտանիք մըն ալ կայ, որոնց՝ նոյնպէս անյիշատակ ժամանակներէ ի վեր, Հէրէնները ընտանիք կըսուի, և բացատրած էին նաև թէ՝ Կեսարիոյ ժողովրդեան Հէրէն ըսելով ինչ տեսակ մարդիկ կը հասկնայ. ինչպէս, «Հէրէն» ըսելով կը հասկնան այն կարգի անձերն, որոնք իրենց օրերը պարապ և դիւնեաններու մէջ կանցնեն, ատրճիւ և անպիտի կերպիւ իրենց թէ քաջութիւններ կանեն, և կամ՝ ատրճին կերպիւ այս ու այն մարդը չարաչարելու վատահամբաւելը իրենց համար քաջութիւն կը համարին։

Այն ժամանակ, Գերմանացի Փրէֆէսէօր Մ. Էննսէն, որ ժամանած է Նախակիլիկեան —Համիեան արձանագրութիւններու ընթերցման, մեր տուած յիշեալ տեղեկութիւնները ամբողջութեամբ որ և է կարեւորութենէ զուրկ համարած էր, ինչպէս մանաւանդ դրութեամբ մը տեղեկացուցած էր մեզ Հանդէս Ամսօրեայի նախկին խմբագրապետ Հ. Գ. Գալէմքէրեան։ Բայց ի՞նչու և ի՞նչպէսի պիտոյութիւններով կարեւորութենէ զուրկ համարուեցան մեր այդ տեղեկութիւնները Աղնիւ Փրէֆէսէօրի կողմէն՝ կը մնայ մեզ անծանօթ։

Եւ ահաւասիկ ճիշդ այդ կողմերը, այն է Հէրէննէրու—Նէյէրին և անոր շատ մօտիկը, պանչելի դիրքով շինուած, օգաւէտ Աատրճէզ անուն թրքաբնակ գիւղի և Նէյէրէի միջև եղած ձորի մը մէջ, այս անգամ գտնուեցաւ հասաւ, կարծր և սեւորակ քար մը, որ քարին մէկ երեսը փորագրուած է Համիեան արձանագրութիւն մը, գիւտ մը՝ որ կը կարծենք թէ հնագիտական աշխարհը բաւական պիտի պարեւչնէ, և ուշագրութիւն պիտի դարձնէ նաև Կեսարիոյ և իր շրջակայներու վրայ, և կը կարծենք նաև թէ, մեր տուած տեղեկութեանց վրայ պտաւել հետաքրքրութիւն պիտի ունենայ։

Արձանագրութեան քարը, այժմեայ վիճակի մէջ, երկայնութեամբ և լայնութեամբ, գրեթէ 80 տարբերաձեւ տարածութիւն մը ունի, բայց յայտնի կերևի թէ չորս կողմերէն փոքր ինչ մասեր կտրած են, և վրայի փորագրուած արձանագրութիւնն ալ, ժամանակի շատ երկար հոլովմամբ, քիչ շատ եղծուած է. այսու ամենայնիւ ուրչափ կարելի էր, մեծ ուշադրութիւն տուինք և չանք չի խնայեցինք ճշտութեամբ ընդօրինակելու համար, և որ այժմ կը ներկայացնենք այստեղ ի գիտութիւն հնագիտական աշխարհին, և մանաւանդ ի քննութիւն և յընթերցումն Փրէֆէսէօր Էննսէնի *։



* Ծան. Արձանագրութեան ոչ կողմից երկրորդ տողի դիմաց դարձեալ մի քանի նշանագրեր են եղած Գերապատիւ յօդուածագրի ասելով, բայց եղծուած են։ Գերապատիւ յօդուածագրի ուղարկած ընդօրինակութիւնը փոքրացրած է մեր պատկերի մէջ մօտ երկու եւ կէս անգամ, ուրեմն բնագրից փոքր է հինգ անգամ։ ԽՄԲ.

Ինչպէս կը տեսնուի, արձանագրութեան միջևը եղած երկու հորիզոնական գիծերը բնականին են, բայց շուրջը եղած գիծը մենք մեր կողմէն աւելցուցած ենք, քարին արձանագրութիւն գտնուած երեսի ձևն ու կոտրած մասերը ճշտապէս ցուցընելու համար: Ընդօրինակութիւնը փոքրցուցած ենք գրեթէ կէսով չափ, թէ քարին մարմնութիւնը և թէ բնականապէս նշանագրերն: Նշանագրոց երկրորդ կարգին մէջ թռչունի մը ձևը կայ, որուն ճշտութեանը համար բոլորովին չենք կրնար երաշխաւորել, որովհետև շատ եղծուած էր այդ նշանագիրն, և այնպէս ինն կերևէր թէ՝ կարծես թռչուն մըն է:

Քարը այս օրերս, տեղական կառավարութեան միջոցաւ, կը դրկուի Կ. Պոլսոյ Կայսերական Թանգարանին, որուն անօրէնութեան կողմանէ հետզհետէ պահանջուած էր, կարևոր հնութիւն մը ըլլալուն պատճառաւ, ինչպէս նաև հրատարակած էին այս վերջին օրերս Կ. Պոլսոյ Ազգային և օտար բոլոր օրաթերթերն:

Հանդէս Ամսօրեայ ուսումնասիրութիւն մէջ հրատարակուած և վերև յիշուած Ագրակի արձանագրութեան մի ուրիշ և աւելի ճիշտ ընդօրինակութիւնն ունենայ այս օրերս, զոր յարմար առիթ այն ալ պիտի խնդրեմ Արժ. Խմբագրութենէն՝ կրկին հրատարակութեան համար «Արարատի» մէջ:

ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼԵԱՆ
Կեսարիոյ

1900 Մայիս 15/28
ԿԵՍԱՐԻԱ.

ԳԱՆԻԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻՔ.

Ով որ Դանիան ճանաչում է իւր վաղեմի աշխարհագրական դասերից, գնահատ է, որ նա այդ վոքր աշխարհի մայրաքաղաքն ևս շատ նշանաւոր բան չի երևակայում: Բայց խնդապէս Կիոպենհաւնը* օտարի վերայ ազդու տպաւորութիւն է գործում: Այդ քաղաքը ոչ միայն գեղեցիկ է բնական դիրքով, ոչ միայն աւելի ևս գեղեցկացել է մարդկային հանճարի արուեստով, այլև եւրոպական մեծ քաղաքի բոլոր յատկութիւններով բարեկարգուել է և միշտ աւելի յարմարութիւններ է ստանում: Մեծ ճոխութիւն, վարժամութիւն չունի, բայց ճաշակի, քաղաքակրթութեան, յառաջադիմութեան կնիքը գրոշմած է վերան: Ըզգեօք նրա ջրանցքները և ծովի ափը յիշատակենք, որ ձիւնափայլ կարապների երամներով և կայմերի շարժուն անտառով հմայիչ են ստանում. արդեօք ծովի և ցամաքի հրաշալիք հրաշալիքի վերայ աւելացնելու մրցութիւնը նկարագրենք. արդեօք քաղաքի վարչութիւնը դովենք, որ ոչ մի քլունգ չի բանեցնել տուել, առանց երևելի արուեստագէտների կրթմանկարդակը ձեռնին, որպէս դի ոչ մի բլրակ, ոչ մի հրապարակ, եղբի ոչ մի կտոր գուր չիորչի և ամէնքը մի աքանչելի փունջ և կատարեալ յօրինուածութիւն ձևացնեն: Կամ մըթէ կարելի է լռութեամբ զանց առնել քաղաքի շինութեանց բարեկազմութիւնը, փողոցների հայելաձև սալայատակը, առատ լուսաւորութիւնը, արթուն ոստիկանութիւնը, առողջապահ շուկաները, ամէն կարգի հաղորդակցութիւնը, հերոսների և վատահաւատների յաւերժացումն արձաններով և յիշատակարաններով ևն: Ո՛չ, Տիվոլի Բրատհի (Տիվօ դը Բրադէ), Էրշաէդի, Անդերսէնի (Անդերսէնի), Բրանդէսի, Հոֆդինգի, Փինսէնի Դանիան՝ երաւամբ պարծենում է իւր փառաւոր Կիոպենհաւնով ...

Ծայրանի է, թէ օտարականը լինչ տանջանքներ է կրում մի քաղաքի մէջ, ուր տեղացիների լեզուն չի հասկանում և ոչ մի ծանօթ մարդ չունի: Դանիացիք բաւական չափով թեթևացրել են օտարի անճարութիւնը: Ամէն կիոսկի (քօշքի) վերայ նկարագրած է քաղաքի մեծ յատակագիծը, փողոցներն էլ լաւ նշմարելի գրով անուններ են կրում.—Մի ընկերութիւն կայ, որ պատրաստ է ձի խորհուրդ և առաջնորդութիւն տալու, որ և հրատարակել է եւրոպական լեզուներով (ռուս., գերմ., ֆրանս., անգլիերէն) ուղեցոյցներ ամէն տեսակ մանր մունր տեղեկութիւններով:—Մեծ և փոքր խանութներում ամենայն ապրանքի գինը վերան տպագիր նշանակած է, մինայն թէ դիտենաք, թէ դրամի լռշրը կոչվում է կրոնէ (մօտ 54 կոպ.), իսկ մանրը՝ էորէ (1/2 կոպ.):—Եթէ ուզենաք հատրով պատել, վերան կը գտնէք մի ժամացոյց, որ յատուկ մեքենայութեամբ ցոյց կու տայ, թէ երբ էք հատք նստել, որքան ժամանակ էք պատել և թէ որքան պէտք է վճարէք:—Կամ եթէ հիւրանոց մտնէք, պատին շարած կը գտնէք առտմատներ, որոնք ինքնին մա-

* Այսպէս են անուանում իրանի դաւիթացիք մեր Կոպենհագէն կոչած քաղաքը:

տուցանում են ձեզ 10 հոգի արժէք ունեցող բաներ, հէնց որ բաց տեղն մէջ ձգէք 10 հոգուանց դրամ. դուք այդպէս կարող էք ստանալ լուռ ու մունջ, առանց ծառայի միջնորդութեան, ճաքարշ, սիգար, գարեջուր, բուտերբրոտ պանրով, երշիկով, ձուկով կամ մսով և այլն, եւ եթէ տեղը դրամ չձգէք, պատը ձեզ ոչինչ չի տայ, որքան էլ որ փուչ կերպով դռնակի կոթը դէս ու դէն չարչրկէք:—Եթէ ուզենաք եկեղեցու բարձր դմբեթը բարձրանալ, ծառան ձեզ տալիս է հեռադիտակ, բայց է անում մի դուռ, հրաւիրում է ձեզ մտնել և դուռը փակում է ձեր յետևից: Դուք մնում էք լամբկրնթոսի բազմաճիւղ բաւիղների մէջ մենակ, բայց մի՛ վհատիք. պատի վերայ նկարած սլաքները ձեզ անշփոթ կը հասցնեն դանազան պատկաններով ճիշտ նշանակած տեղը. ապա ձեր առաջ բացուած ընդարձակ տեսարանի բացատրութիւնը կու տայ մի կողմնացոյց, որ դարձեալ սլաքներով և գրով հասկացնում է, թէ ո՛ր ուղղութեամբ ինչ քաղաք, գիւղ, սար կամ ձի էք տեսնում:

Ինչքան որ մեզ տեսածներով բան կարելի է հասկանալ, ահա դարձեալ մի քանի գծեր դանիացիների բարքից: Մենք արդէն գիտենք, թէ նոցա կեանքում գլխն ինչ դեր է կատարում. արդարև տպարանն ու ներկով գրող վարպետը լաւ վաստակ ունին այս տեղ: Ձուկ ծախող կամ աղբ տանող սայլը իւր չորս կողմից ներկով գրած ունի, թէ սայլի տէրն ով է, ինչ է սայլատանի փողոցի անունը, որն է տան և տելեֆոնի համարը: Մի երկու օր Կիոպէնհաւնում ապրելուց յետոյ, ակամայ շատերի հասցէները էք սովորում: Հէնց որ մի տուն տախտակի ցանկով շրջապատուի կարիւտելու համար, իսկոյն ամէն կողմից տունկի պէս քանում են ներկարարները, ցանկապատի վերայ շարում են սիրուն սիրուն գրեր, և ձեր աչքը շլացնում են նոր նոր հասցէներով, դէթ մինչև որ տան կարկատանքը աւարտուի: Հիմա երևակայեցէք, թէ այս տեղ յայտարարութիւնն ինչ նշանակութիւն ունի: Սակայն լրագրերում յայտարարելը կամ արմերի վերայ տպագրած մեծ մեծ թերթեր կպցնելը Եւրոպայում այլ ևս ոչ աքին չի գոհացնում: Յայտարարութեան համար հիմա գիմում են նկարչութեան արուեստի օգնութեան: Ոչ մի նորութիւնից յետ չմնացող Կիոպէնհաւնը՝ լեռվին լցուցանում է և այս պահանջը:—Արդէն հռչակ ստացած մի պարէնջի գործատուն (Tuberg öl—յուբերգ էոլ) իւր 25ամեակը ծօնելիս՝ ուզեց աւելի ևս հռչակել իւր ապրանքը: Գործատէրը նշանակեց 3 մրցանակ լաւագոյն որմնանկարի ազդագրի համար, լաւագոյն պլակատի համար—1000 կրոնէ, 500 կրոնէ և 200 կրոնէ: Անթիւ մրցողները հանդիսացան, ուստի գործատէրը իւր գործի համար օգտակար համարեց յուցահանդէս կազմել ստացած օրինակներից: Ցուցահանդէսի մուտքը ձրի էր. քաղաքի լաւագոյն փողոցներում երկու յարկի չորս չորս սենեակների պատերը (32 պատ) զարդարուեցան մրցութեան ուղարկած օրինակներով: Այս տեղ կային աշակերտական ձեռքի արտադրութիւններ, բայց նաև քաջ արուեստագիտի գործեր, ամէն տեսակ ոճով նկարներ, ճիւղայինն ոճից սկսած մինչև ամենանուրբը. անոնց մէջ այլաբանութիւնը, դիցաբանութիւնը, պատմութիւնը, ազգի իրականութիւնը, իւրաքանչիւրն իւր բաժինն ունէր (երևի թէ 500-ից աւելի էր օրինակների թիւը): Շատ դուրբալի և հրահանգիչ էր այս պատկերահանդէսը գեղատեսութեան տեսակէտից, և ժողովուրդը ուրախութեամբ օգտուեցաւ գործատէրի բարեհէր հրաւէրից. մեծամեծ բազմութեամբ խռնվում էին երկու յարկի սենեակներում: Եւ ի՞նչ էք կարծում, ո՞ր պրակտը մրցանակ ստացաւ. արդեօք ամէնից սիրո՞ւնը, բարձր դեղարուեստի արտադրութիւնը,—ոչ: Այլ մրցանակին արժանի համարուածը միակ այն առաւելութիւնը ունէր, որ կարող էր իւր գոյներով, պարզ գծերով փողոցի անցուդարձողի ուշադրութիւնը մեծապես գրաւել.—իսկ ի՞նչ է յայտարարութեան իսկական նորհուրդը, եթէ ոչ հէնց այդ բանը: Այս պատահական ցուցահանդէսը թող ապացոյց լինի, թէ դանիացիների համար ինչ մեծ պահանջ են դարձել հրահանգիչ հաստատութիւնները, որ և առատապէս խնամում են տէրութիւնը, քաղաքը և մասնաւոր բարերարները:

Մի հայեացք ձգենք դրամագլուխի պատուհանի վերայ: Այս ազգը գիտութեան և գրականութեան ամէն ճիւղի հրատարակութիւններ ունի: Գրքերի շարքում մի փոքր պատկերազարդ տետրակ էլ կայ հետևեալ վերնագրով. Fra Blodets eg Taarernes Land (արեան և արտասուքի աշխարհի մասին): Դուք հասկացաք, թէ այդ ինչ աշխարհ է ... Երկու տարի առաջ Հայաստանում ճանապարհորդած պատառը Լեոմանը եկել է այս տեղ և քարողներ է կարդացել իւր տեսած ժողովրդեան ողբալելի վիճակի մասին, որ կարօտ է մարդասէրների օգնութեան: Ահա այդ քարոզների բովանդակութիւնն է, որ այս տեղի պատառ Լարսէնը հրատարակել է, Հայաստանում որքանոց հիմնելու դրամը կազմելու համար: Տետրակն արժէ 10 էօրէ, և մինչև այժմ վաճառումից գումարուել է 2500 կրոնէ, ուրեմն ծախուել է 25,000 օրինակ: Ահա թէ ժողովուրդը իւր 5 կոպէկին ինչի համար է տալիս, Բայց այս մասին—ուրիշ անգամ:—Ապա աչքի է ընկնում հռչակաւոր Անդերսէնի հէքիաթների շքեղ

հրատարակութիւնը, ոչ միայն քնագրի (դանիերէն) լեզուով, այլև անդլիերէն, ֆրանսերէն, գերմաներէն, ռուսերէն և ուրիշ լեզուներով։ Հրատարակիչն է Բոյէսըն (Bejesen), որ ոչ այնքան շահի համար է ձեռնարկել դործը, որչափ իւր ապրելու միջոցի համար։ Դանիերէնի հրատարակութեան օրինակին արժէ 32 կրօնէ, իսկ օտար լեզուինը, զորօրինակ գերմաներէնինը—13 կրօնէ, և դանիացիք չեն բողոքում, որ օտարազգիք իրանց հաշուով են կարդում իրանց Աննեբոէնը։ Ցոյս կայ, որ հրատարակիչը կվճչէնների նկատմամբ նոյն պիջումը կանէ նաև հայերէն հրատարակութեան համար, բայց այս մասին էլ յետոյ։

Մայիսի մէկ։ Ցայտնի է, որ Եւրոպայում այս օրը պատկանում է մշակներին, որոնք պահանջում են իրանց վիճակի բարւոքումն, մանաւանդ օրական աշխատութեան միայն 8 ժամ տևողութիւն։—Այս տեղ օրն սկսուեցաւ շատ հանդարտ կերպով։ Խանութներն իրանց առուտուրը, ժողովուրդն իւր լուր օրուայ զբաղմունքը սովորական կերպով վարեց և շարունակեց։ Սկսեց անձրևել։ Հարուստներն իրանց գրասենեակներում չարախնդութեամբ ժպտացին, որ հանդէսը չի յաջողուի, իսկ մշակն ասաց, թէ երկինքն արտասուում է։ Սակայն բանուորը չի հարցնում եղանակի յաջողութիւնը կամ անյաջողութիւնը։ Նշանակած ժամին (կէսօրից յետոյ 3-ին), նշանակած փողոցների գծով, այնչափ գեղեցիկ հանդիսաւոր ճանապարհ բացուեցաւ 36 մշակ ընկերութիւնների անցքի համար—կանաչ դրօշանշներով, գոյնզգոյն դրօշակներով, հինգ-յարկանի տների պատուհաններից նայող բազմութիւններով, որչափ երբէք չի եղել, ըստ արժանաւոր վկայութեան։ Այդ գծում կառքերի շարժումը դադարեց, գնացքի գլուխը կազմում էր հրդեհաշէջների խումբը, ամէն մի ընկերութիւն իւր երաժշտով, դրօշագով, դրօշներով և վառեցրով մի առանձին դեղանկար բաժին էր կազմում և հանդիսատեսների ծափահարութեան և «կեցցէ»-ների էր արժանանում։ 20,000 մարդու թափորը հանդիստ անցաւ, առանց ոստիկանութեան միջամտութեան, հաւաքուեցաւ մի ընդարձակ հրապարակում, և պահու 8 ժամն երբ հնչեցրեց (իրաքանչիւր անդամն վերայ առոյգի նշան կար, երեք անդամ 8 ձևացնող թերթերից սերև), այս տեղ ճառերը խօսուեցան, թէ այժմեան բանուորները առաջուայ պէս վայրենի չեն, օրինական ճանապարհով, երեսփոխանների միջնորդութեամբ պաշտպանում են իրանց դատը, կատարելագործում են արուեստը, ձգտում են դասակարգերը վերանալ և օգտաւէտ կացութեանելու, և ոչ թէ ջնջելու են յաւակնում և այլն։

Քաղաքը ի թիւս այլոց 1864-ին Հելգոլանդի մօտ մեծ յաղթութիւն տանող ծովապետ Սուէնսոնին արձան է կանգնեցուցել։ Ծովային հերոսի նաւաստիները (որոնցից այժմ 2 հատ է մնացել) տարէցտարի մի որևէ նշանով իրանց պետի պատկառելի յիշատակը նորոգում են։ այսօր առաւօտեան արձանի հիմին անցնողները կը տեսնէին մի մեծ վտառաւոր պատկ, և ոչ ոք չէր կասկածի, թէ ո՛վ պէտք է կատարած լինի այդ բարեպաշտական ձօնը։

Ս. Մ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑ

(ԿՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՍՈՒՑՈՒԹ)

(Շարունակութիւն) *

Ի

ՎԻՊԱՍԱՆՔ.

2.

Առաքելական ժամք.

Վիշապազանց առասպելը։—Երկու տեղ (Ա. լ. Բ. խթ.) առասպելի համառօտ բովանդակութիւնն է բերում պատմագիրը, իսկ մի տեղ (Բ. Ծա.) պատմում է «ձշմարտելով», այսինքն առասպելականին տալով պատմական կերպարանք։ Այդ երեք հատուածն իրարու համեմատելով կըստանանք մօտաւորապէս բուն առասպելի բովանդակութիւնը, ընդ ամէնը չորս միջադէպ։

ա. Թաքելաց երթեալ (Ա. լ.)։

1. Ճազատն ի վեր ի Մասիս բնակող վիշապ կամ վիշապաղն Արգաւանն վիշապների տաճարում ճաշ է տալիս ի պատիւ Արտաշէսի և խարդաւանակ լինում նորան։

2 Արտաշէսի քաջ որդին Արտաւազդ՝ ի հիմնանալն Արտաշատու, ապարանքի տեղ չգտնելով՝ անցնում, գնում, շինում է ի մէջ Մարաց (=Վիշապաց, վիշապազանց ?) ղՄարակերտ։

3 Սաթհնիկ տիկնոջ տենչանքը կամ սէրն առ Արգաւան վիշապը կամ վիշապազն։

---

* Տես Արարատ 1900 համար. Գ. եր. 194։

Բ. Վիպասան (Բ. ԽԲ.)

Այստեղ բաց ենք թողնում սկզբում դրած պատմականն ու կենցաղականը [1] և առնում ենք միայն, ինչ որ վիշապներին կամ վիշապազանց է վերաբերում: Նկատենք նաև, որ չեն յիշուած Թուելեաց երգերի 1· և 2· միջադէպերը· այլ պատմականից ու կենցաղականից յետոյ յիշւում է անմիջապէս 3-րդ միջադէպը և մի չորրորդ միջադէպ ևս ասելանում էր:

3· (Խբ) տրփանք Սաթինեան ընդ վիշապազունն:

4· Մարտ ընդ նոսա և քայքայումն յիշխանութենէն և հերկիզութիւն շինուածոցն:

Գ· Ձմեռաթեալ պատմութիւն (Բ· Ճա):

*Այստեղ տեսնում ենք, որ 4-րդ միջադէպում յիշուած մարտը Արտաւազդն է անում: Պատմագիրը իւր «ձմեռատեալ» պատմութիւնն անելուց յետոյ ասելացնում է· «Այս Արգամ է որ յառաջագիւին Արգաւանն անուանի և այս պատճառ պատերազմին ընդ Արտաւազդայ»: Խորենացու լեզուն և մեկնութեան եղանակը (տես գլ· Գ·) հաստատողը կըտանենք, որ այս գլխի մէջ մինչեւ Արգամ անունն եւ պատերազմի պատճառն իրեն պատմագրինն են, Արգաւան անունը և պատերազմ ընդ Արտաւազդայ՝ առաջագիւինն են: Խորենացու մեկնութեամբ միայն այդ երկու տարբեր անձերը նոյնացել են [2]: Եւ ի՞նչ է Արտաւազդի և Արգաւանի թշնամութեան և պատերազմի պատճառն ըստ Խորենացու: Արտաւազդը, «նախանձ բերելով ընդ ծերունւոյն Արգամայ, հրապուրեաց զհայր իւր ցանուել Արգամայ, որպէս թէ թագաւորել ի վերայ ամենայնի խորհիցի: Այսպէս ընկկեցեալ զնա ի պատուոյն, ինքն առնու զերկրորդութիւնն»: Ապա շարունակութեան մէջ գրում է· «իսկ Արտաւազդայ ոչ շատացեալ առնուլ ի բաց ի նոցանէ զերկրորդութեան պատիւն»···: Ուրեմն այդ նախանձը երկրորդութեան համար՝ պատմագրի մեկնութիւնն է միայն, առաջապէլի «այլաբանութիւնը ճշմարտելու» և «ոճով» պատմելու համար մէջ բերած:

Պատմագրի ասելացածն է հաւաստեաւ և վերջի կտորը· «բայց միայն աննշանաւորք ոմանք և կրտսերք փախուցեալ առ Արտաշէս ապրեցան ի դրան արքունի»: Մի անգամ որ Խորենացին վիպասանքի վիշապազունք դարձրել է Մուրացանք, անհրաժեշտ պիտի լինէր այս յաւելուածը՝ Մուրացանների սերնդի գոյութիւնը չոչնչացնելու համար:

Նկատենք և այն, որ պատմագիրն իւր «ձմեռատեալ» պատմութեան մէջ չէ բերում

---

[1] Նկատելի, որ պատմագիրն առանձին կարեւորութիւն չէ տալիս նիւթերն ըստ ժողովրդականին դասաւորելուն: Գլխի վերնագիրը դրած լինելով «վասն շինուածոյ Արտաշատ քաղաքին», բնականօրեն ամենից առաջ դրած է «շինել զքաղաքն», եւ ապա «խնամութիւն ընդ Աշանէ եւ ծնունդք զաւակին»: Միևյնդեռ բուելեաց երգերի մէջ, ուր երգերի խօսքերով է գրում, ի հիմնանալն Արտաշատու Արտաւազդ առդեն չափահաս է: Սակայն «հիմնանալն» բառը հականշում է ոչ միայն «հիմնել», որքան «շենանալ, շենիլ դառնալ, շղուել»: Այն ժամանակ «ի հիմնանալն Արտաշատու» կը հասկացուի· «Արտաշատը որ շենացաւ, շենիլ դարձաւ՝ Արտաւազդն ապարանքի տեղ յցեաւ»···: Այս դէպքում վիպասանքի եւ բուելեաց երգերի պատմական եւ կենցաղական միջադէպերի դասաւորութիւնները իրար չեն հակասում այլ եւս: Եւ այս ամենի հաւանական ենք համարում:

2· Քանի որ վիպասանքի նիւթն Արտաշես Արտաւազդեանի պատմութիւնից է առնուած, բուն պատմական իրո-

---

ղութեան յիշողութիւն է Երուանդի բարեկամանալը մարաց հետ եւ մարացոց տեր Արգամին բարձրացնելը (Բ· իդ): Բուն պատմական իրողութեան յիշողութիւն է եւ Արտաշէսի բշնամութիւնը մարաց հետ: Արտաւազդեան Արտաշէսը կռւում է մարաց հետ, իսկ Խորենացին իւր Արտաշէսի համար գրում է թէ շատ չարչարել է Աժդահակի զարմերին, այսինքն մարաց ազգը (Բ· կա): Սակայն որ Արգամը պատերազմի ժամանակ Արտաշէսի կողմն անցած լինի եւ Արտաշէսը նորան բարձրացրած (Բ· իզ· իէ), այդ հակասում է պատմութեանը: Այս հակասութիւնը հասկանալի է թէ լինից է առաջացել: Մի անգամ որ մեր պատմագիրը, նոյն իսկ իրեն վկայութեամբ, մարացոց տեր Արգամին նոյնացնում է վիշապ Արգաւանի հետ եւ իրենից իրեն պատերազմի պատճառ դնում է Արտաւազդի նախանձն Արգամին՝ երկրորդութեան պատուի համար, անհրաժեշտ էր, որ պատմութեան առաջի մասի մէջ Արգամն Արտաշէսից ստացած լինէր երկրորդական գահը, որ յետոյ նիւսարատր լինէր ասել թէ պատերազմի պատճառը նախանձն է: Արգամի անցնելն Արտաշէսի կողմը եւ նորա ստացած պատիւները անհրաժեշտապար Խորենացու աւելացրածներն են: Եթէ այդ դուրս ձգուի, այն ժամանակ կրնանայ ասել, որ Երուանդ բարեկամ է մարաց եւ մնծացնում է մարացց տեր Արգամին,—մի պատմական յիշողութիւն. իսկ Արտաշես շատ չարչարում է մարաց ազգը,—դարձեալ մի պատմական յիշողութիւն:

3-րդ միջադէպը՝ Սաթենիկի սէրն առ Արգաւան։ Անշուշտ այն պատճառով, որ չէ հաւատում թէ Սաթենիկի պէս մի տիկին կարող էր այդ բանն անել։ Եւ այս հաւատի է այնու, որ վիպասանքի բովանդակութեան մէջ բերելիս էլ գրում է. «իղձ տրփանք Սաթինեան»։

Մնացածը, մի քանի մանրամասներից զատ, նոյնն է, ինչ որ Թուելեաց երգերի և վիպասանքի բովանդակութեան մէջ կայ, և այն էլ միևնոյն շարքով։

1. Երթալով արքայի ի ճաշ Արգամայ, կասկած իմն անկեալ, իբր թէ գաւել զարքայն խորհեցան, յարուցանեն որոիք արհային սպշոպ, և անգէն իսկ ի հացին խարշեն զալիան Արգամայ։ Եւ խռովութեամբ մեծաւ եկեալ յԱրտաշատ Արտաշէս արքայ ...։

Ընդգծածները չկան վիպասանքի բովանդակութեան մէջ. կարող են և վեպից առնուած լինել, և Խորենացու աւելացրածը լինել։ Վերջին նախադասութիւնը շատ բնական հետևանք է խարդաւանքի, ուստի և կարող է վիպասանքից առնուած լինել։

2. ա) Դարձեալ արձակեաց զորդի իւր զՄաժան մեծաւ գնդաւ, և բազումս յազգէն Մուրացան սպանանել հրամայեաց, և զապարանն Արգամայ այրել. և զհարճ նորին, որ կարի չքնաղ էր գեղով և մնացեալ գնացիւք ոտից, զոր կոչէին Մանդուռ, ածել ի հարճութիւն Արտաշիսի։ Զոր դարձեալ նուաճեալ յետ երկուց ամաց, ի բաց տալ հրամայէ զինչսն բայց ի հարճէն։

բ) Իսկ Արտաւազդ .... հանէ[1] զնախճաւան և ըստ հիւսիսոյ Երասխայ զամենայն գետպս, յորում և ապարանս և բերդս ի նոցանէ շինէ իւր ի ժառանգութիւն։

Այս 2-րդ միջադէպի ա՝ մասը, որով Արտաշէսը Մաժանի ձեռով՝ կռւում է Արգաւանի հետ և երկու տարուց յետոյ հաշտւում է, չկայ բովանդակութեան մէջ։ Իւրթիւնը կարող է վիպական լինել։ Իսկ բ՝ մասը նոյն է, ինչ որ Թուելեաց երգերի 2-րդ միջադէպը. «Արտաւազդ ... շինեաց ի մէջ Մ՚ատաց զՄ՚արակերտ, որ է ի ղաշտին՝ որ անուանեալ կոչի Շարուրայ»։ Շարուրի դաշտն է «ըստ հիւսիսոյ Երասխայ»։

3. Սաթենիկ տիկնոջ տրփանքը չկայ։

4. Այժմ ոչ կարացեալ համբերել որդւոյն Արգամայ, ընդդիմանայ նմա պատերազմաւ. բայց յաղթեալ արքայորդւոյն՝ սատակէ զամենայն ծնունդս Արգամայ հանդերձ հարքն, և որք միանգամ երևելիք յազգէ Մուրացան. և գրաւէ յինքն զշէնս և զամենայն իշխանութիւնս նոցա։ Եւ ոչ ոք ապրեաց ի նոցանէ։

Արգամի որդին է միայն իբրև նորութիւն մէջ մտնում, երևի այն պատճառով, որ Արգաւան վիշապը Մուրացան նախարար Արգամ դարձած, այն էլ Երուանդի ժամանակից, շատ ծերացած էր, և «Ճշմարտեալ» պատմութեան մէջ անհաւատի կըլինէր, որ նա կռուէր Արտաւազդի դէմ։—Բովանդակութեան մէջ յիշած «հրկիզութիւն շինուածոցն» կամ բաց է թողած, կամ թէ է 2-րդ միջադէպի ա՝ հաւաւածի մէջ մոցրած «զապարանն Արգամայ այրել»։

Միացնելով այս ամէնը, իբրև վիշապաբանից առասպելի բովանդակութիւն՝ կըստանանք հետևեալը։ («Ճշմարտեալ» կամ «զարդարեալ» պատմութիւնից առած կտորները փակագծի մէջ ենք դնում)։

1. Ծագատն ի վեր ի Մասիս բնակում են վիշապներ կամ վիշապազունք, որոնց մասին «անյայտ իրք» են պատմւում։ Նորա ունին «տաճար վիշապաց»։ Այդ վիշապներից մէկն (և գլխաւորն ու հայրն) է Արգաւանը։

Վիշապ Արգաւանը հայոց թագաւորին (և նորա որդիներին) իւր մօտ ճաշի է հրաւիրում։ Արտաշէս թագաւորը գնում է ի պատիւ իւր՝ վիշապաց տաճարում տրուած ճաշին։ Արգաւանն ուզում է ճաշի ժամանակ խարդաւանակ լինել կամ գաւել թագաւորին։ (Սա զգայացած վերադառնալով Արտաշատ՝ իւր Մաժան որդուն ուղարկում է զօրքով կռւելու վիշապների դէմ և դոցա կոտորելու։ Բայց երկու տարուց յետոյ հանգիստ է թողնում նոցա)։

2. Արտաշէսի քաջ որդին Արտաւազդ, Արտաշատ քաղաքը շէնացած, շէնլիք գարձած լինելով, այնտեղ իրեն համար ապարանքի տեղ չէ գտնում, նա գնում է վիշապների մէջ մտնում խլում է նոցանից նոցա կալուածները, (Երասխ հիւսիսային կողմում նոցա բոլոր գիւղերն, ապարանքներով կամ տաճարներով ու բերդերով միասին, բոլորն իրեն է սեպհականում)։ Շինում է (շէն է պահում, շէնացնում ?) «ի մէջ Մարաց» զՄարակերտ (Շարուրի դաշտում) և այնտեղ բնակում։

3. Արտաւազդի մայրը, Սաթենիկ տիկին տըր-

1, երևոյթի պատիւ իրեն մեկնութիւն դուրս ևմ ձգում։

փանք է ունենում ընդ վիշապազունս կամ տեն-չանք ու սէր առ Արգաւան վիշապը։

4. Վիշապները չեն ուզում տանել Արտա-ւազդի արարքները և կռւում են Արտաւազդի հետ։ Բայց նոցա իշխանութիւնը քայքայւում է, որովհե-տև Արտաւազդ յաղթում է նոցա, կոտորում է ամենքին, Արգաւանի բոլոր ծնունդն ու իրեն Արգա-ւանին սպանում է, շինուածներն այրում է և իր ձեռը ձգում նոցա բոլոր գիւղերն ու իշխանու-թիւնը։ —

Այս է ամենը, ինչ որ վիշապազանց կամ վիշապների առասպելին է վերաբերում։ Եւ այս պատմութիւնը Խորենացին, նոյն իսկ պատմողներից առնելով իւր մեկնութիւնը, փոխում է Մարաց և Մուրացանների վրայ, և վիշապ Արգաւանը դարձնում է Մարացոց տէր Արգամ։

Մի կողմ թողնելով պ. Խալաթեանի ըստ ամենայնի Թոյլ կարծիքների քննադատու-թիւնը, մենք կըփորձենք հասկանալ այս ա-ռասպելը, համեմատելով մեր և ուրիշ ազգերի կենդանի առասպելների հետ։

Սեւ լեռան կամ Մասիսի վիշապները։— Թէ ինչ են վիշապները և ինչպէս են պատ-մում նոցա մասին, մենք այդ գիտենք (Հմմտ. գլ. Դ.)։ Հայոց լեռներից շատերի համար ցարդ առասպելաբանում է ժողովուրդը թէ օձեր կամ վիշապներ են կենում անոնց մէջ։ Նո-քա բնակում են քարայրերում, ուր և ունին իրենց ապարանքները կամ տաճարները[1]. ունին իրենց թագաւորներն ու թագուհիները, զօրքն ու զօրավարը, և իրար դէմ կռիւներ են մղում բոլորովին նման մարդկային կեան-քին ու թագաւորութեան։ Այդ վիշապներն իսկապէս մարդիկ են, միայն «օձեղէն շապկով», որ ուզած ժամանակ հանում են և մարդ-կային կերպարանք ստանում։ Նոքա մարդոց հետ յարաբերութիւն ունին և մեր կանանց հետ սէր էլ են անում[2]։

Այդպիսի զրոյցներ շատ են պատմում Գողթնեաց սահմանի վրայ, Նախիջևանից ոչ հեռու գտնուող մի գագաթի մասին, որի ա-նունն իսկ Օձաքեառն (Իլանդաղ, Իլանլու) պէտք է առնուած լինի օձերի այդ պատմու-թիւնից։ Մենք այդ լեռան օձերի կամ վի-շապների մասին շատ հրաշալի պատմութիւն-ներ ենք լսել, բայց ցաւ է, որ գրի առած չլինելով՝ չենք կարող բերել։

Ի թիւս այլ լեռների այդպիսի օձերով կամ վիշապներով բնակուած է համարւում և Մասիսը, որ Արտաւազդի առասպելի մէջ, Ծայսմաւուրքում, կոչւում է Սեաւ լեառն[1], և հենց ժողովրդի մէջ, ըստ Թադիադեանի, կո-չուել է Մութն աշխարհ[2]։ Ասում են թէ Մասիսի վիշապները մի քանի տարին մի ան-գամ մեծ կռիւ են ունենում Արագածի վի-շապների հետ։ «Պէս պէս առասպելներ» ունի յատկապէս Փոքր Մասիսը։ «Պատմում են, որ Փոքր Մասիսի վրայ կան վիշապներ և օ-ձեր ահագին մեծութեան, այդ պատճառով խիստ դժուար է և համարեա՛ անկարելի է նո-րա գագաթը բարձրանալ»։ «Բարձրանալիս լե-ռան խորքերից կամ տակից մշտապէս լսւում են այնպիսի զարհուրելի խուլ ձայներ, որ մարդ սրտատապտոյտ կարող է լինել»[3]։

Մասիսի հետ կապուած վիշապների այս գրոյցները մօտենում և նոյնանում են նոյն լեռան վրայ Խորենացու պատմած առասպե-լին։ Հին ժամանակից ցայսօր Մասիս կամ Սեաւ լեառն ուրեմն համարւում է վիշապ-ների բնակարան, որոնց մասին «պէսպէս բա-ներ», «անյայտ իրք» են պատմում։

1. Ս. Խալաթ. Արմ. Յոսէ, II. եր. 74.

2. Ձանապարհորդութիւն Մեսրովբայ Վ. Թադիա-դեանց, Կալկաթա, 1847, Ա. եր. 167։

3. Ընծիր հատուածներ Նազարեանի, Տիֆլիս, 1883. Ա. եր. 230. Լեւոն Տիգրանեանի ձանապարհորդութիւն «Դէպի Փոքր Մասիսի գագաթը»։ Ուղեկից չի լինիլ նոյն տեղից բերել եւ հետեւեալը. «Ոմանք էլ ասում են, թէ գագաթի վրայ ազնուտուրի (հսկաների) գերեզմաններ կան ... Մի քանիսն էլ լսել են, որ գագաթի վրայ ուղտաների քարուխան կայ քարացած, նաեւ ուղտապանն էլ այնտեղ քարացած կանգնած է, մէկ ձեռով բռնած ունի առաջնորդող ուղտի սանձը, իսկ միւս ձեռքին իւր գաւազանը»։ Փոքր Մասիսի վրայի չէն (որի գոյութիւնը հերքում է պ. Տիգրանեան) պատմութիւնը, միացած Ազնաւուրի կամ Օղուզի գերեզմանի եւ քարացած ուղտերի շարանի այս պատմութեան հետ՝ յիշեցնում է Նեմրութ սարի քարաւազանի եւ բիւրու ուղտերի առասպելը (Հմմտ. եր. 237 հետ.)։

1. Հմմտ. եզնիկ. եր. 104. «Եւ ոչ տաճարք իբրեւ մարդկան են նոցա (վիշապաց) ի բնակութիւն»։ Վարդանի գրածը՝ «Տեսեալ ոմանց քաջաց եւ վիշապաց տաճարս ի քարինս եւ բնակութիւնս» (Խալատ. Արմ. Յո. II. եր. 74)։

2. Հմմտ. Սրուանձտեան, Դրոց Բրոց, եր. 44. M. Abeghian, Der Armenische Volksglaube, եր. 76։

Բայց այս՝ առասպելի ընդհանուր կողմն է միայն։

Առասպելի վարիանտները մեր եւ ուրիշների մէջ։—Միթական բնաւորութիւն ունեցող առասպելները հեշտութեամբ չեն մոռացւում ժողովրդի մէջ։ Այլ երկար պահւում են, միայն կերպարանափոխ լինելով և ուրիշ առասպելների հետ կցուելով, և մամ իրենցից մասեր միայն մոռացութեան տալով։ Մի ս կողմից միթական բնաւորութիւն ունեցող առասպելները մեծ մասամբ միայն մի ազգի չեն պատկանում։ Ուստի և շատ բնական է, որ Արտաւազդի ու վիշապների առասպելն ևս, ոչ միայն ընդհանուր գծերով, այլ և մասնաւոր միջադէպերով գտնենք այժմ հայոց և ուրիշ ազգերի մէջ։

Ցաւ է, որ հարկաւոր գրքերը ձեռի տակ չունենալով՝ չենք կարող բերել աւելի աչքի զարնող օրինակներ և բոլոր մանրամասնութեամբ։ Մենք օգտւում ենք միայն մեր ձեռին ունեցածից, որը, կարծում ենք, բաւական է։

Ամենից առաջ նկատենք, որ ինչպէս ուրիշ ազգերի, օրինակ՝ գերման առասպելաբանութեան [1], մէջ այդպէս և մեզնում ղեւ (Riesen), վիշապ, աժդահա կամ աժդահար, իրար հետ սերտ կապւած են և յաճախ փոխանակում են իրար։ Դոքա միևնոյն ֆիզիկական երևոյթի անձնաւորումն են զանազան կերպարանքներով։ Այս պատճառով և յաճախ միևնոյն առասպելը թէ դևերի և թէ վիշապների մասին է պատմւում։

Մեզ հետաքրքրող առասպելի արդի պատմւածքը հայոց մէջ լսել ենք իրրև հեքաթ. նոյնն արդէն գրի առնուած գտնում ենք նաև Սրուանձտեանի [2] և Տ. Նաւասարդեանի [3] ժողովածուների մէջ։

Մի հարուստ թագաւորի (վարիանտ՝ որսորդ) աչքը վախեցել է Սեւ լեռան վրայ բնակող վիշապներից (վար. դևերի)։ Ուստի նա ժռնելու ժամանակ կտակ է անում իր որդուն, որ Սև սար որսի չգնայ։

Քաջ որդին չէ լսում հօր խօսքին, գնում է Սև սար որսի և պատահում է ահագնահար վիշապի։ Կռւում են, և որսորդ արքայորդին կիսասպան է անում վիշապին ու ձգում։ Ապա նա մտնում է վիշապի ապարանքը, տիրում է նորա ստացուածքին ու հարստութեան և ապրում այնտեղ։

Որդին մօրն էլ բերում է իր մօտ՝ վիշապի ապարանքը։ Սակայն մայրը գեղ է անում ու լաւացնում վիրաւոր վիշապին։ Մայրը վիշապին ծածուկ պահում է ապարանքում և նորա հետ սիրողութիւն է անում։

Վիշապը մօր սիրտը իր կողմն ունենալով՝ մօր հետ աշխատում է կորցնել որդուն։ Մայրը հիւանդ է ձևանում և վիշապի խորհրդով ուղարկում է որդուն այնպիսի բաներ բերելու, որոնցով ինքը պիտի առողջանար։ Իսկ այդ հազուագիւտ բաները,—անմահական խնձոր, ոսկեղջիւր եղնիկի կաթ, անմահութեան ջուր և էն.—բերելու հետ կապւած են մեծ վտանգներ որդու կեանքի համար։ Բայց մի հուրի մալաք աղջիկ (վար. պառաւ) օգնում է նորան և ամեն վտանգից ազատում։ Մայրը վերջապէս իմանում է, որ եթէ որդու երկու բութքը իր նեաւ աղեղի լարով կապէ, տղան ուժից կընկնի։ Այդպէս անում է։ (Վար. գլխի երեք մազն է հանում)։ Տղային սպանում է։ Սակայն հուրի մալաքի շնորհիւ տղան կենդանանում է նորից, սպանում է վիշապին ու մօրը պատժում։ Եւ այսպէս տէր է մնում վիշապի ապարանքին։

Այս միևնոյն հեքաթը կայ կատարեալ նմանութեամբ, կարելի է ասել նոյնութեամբ, և ուրիշ ազգերի մէջ։ Մենք այդ հեքաթների իսկականը ձեռի տակ չունենալով, բաւականանում ենք Բուսլայևից։

Սլովակների մէջ այդ հեքաթը պատմւում է այսպէս.

«Որդին մի բերդ մաքրելով վիշապներից՝ բնակում է այնտեղ իր մօր հետ։ Բայց բերդի մի սենեակում մնում է մի վիշապ, որին այնտեղ շղթայած էին իր եղբայր վիշապները։ Այդ վիշապին յաջողում է հրապուրել մօրը, որ իր սիրական վիշապի հետ աշխատում է կորցնել որդուն։ Մայրը հիւանդ է ձևանում և խնդրում որդուն, որ իրեն բժշկելու համար բերէ զանազան հազուագիւտ համեմունքներ, որոնց ձեռք բերելը մահու չափ վտանգաւոր է։ Որդուն օգնում է սուրբ Հաբաթը (св. Недѣлька), ... բայց մօրը վերջապէս յաջողում է կապել որդուն մետաքսէ լարով, նա կանչում է վիշապին, որ և սպանում է որդուն... Սակայն ս. Հաբաթը յարուցանում է որդուն անմահական (մեր հեքաթի մէջ աղբիւրի) ջրով ու սպանում վիշապին»...

Նոյն աւանդութիւնը կայ և վալախնե-

---

1. Mannhardt, German. Mythen. եր. 207։

2. *Մանանայ*, եր. 200 «*Նենգաւոր մայր*»։

3. *Հայ ժող. Հեքիաթներ*. Ե. եր. 36. «*Անչքեգար մեր*»։

րի մէջ։ Այստեղ որդին, Փլորիան, արդէն մի հասարակ մարդ չէ, այլ գերբնական հրաշալի ծնունդ ունի, նման Մարսի ծնունդին՝ ըստ Ովիդիոսի։

«Մայրը որդուն՝ Փլորիանին, յղանում է, խմելով մէջը մի փունջ ծաղիկներ դրած ջրից։ Մայր և որդի բնակում են մի բերդում, որ վիշապների է պատկանում։ Փլորիանը բոլոր վիշապներին յաղթում ու կապում է բացի մէկից, որին յետոյ մայրը սիրում է։ Վիշապը գառնում է դեղեցիկ տղայ և մօր հետ աշխատում է, որ կորցնէ որդուն։ Երկու անգամ Փլորիանը մահից ազատւում է կարծեցեալ բուժիչ միջոցներ բերելով մօրը, որ հիւանդ է ձևանում։ Բայց երրորդ անգամ մայրը վիշապի խրատով խնդրում է որդուն, որ գնայ անմահութեան ջուր բերելու մի աղբիւրից, որ Սեւ սարի վրայ պահպանում է չար ոգին»։

Շարունակութիւնը շատ նման է մեր հեքաթին (ըստ Նաւասարդեանի վարիանտի)։ Տղային օգնում են այստեղ Ջրի փարիները (водяныя дѣвы)։

Մեր հեքաթի և այս հեքաթների նմանութիւնը նոյնութեան է հասնում։

Նոյն աւանդութիւնը Հռոմագորիայում ոչ թէ հեքաթ է, այլ մի «նշանաւոր երգ»։ Միայն վիշապների տեղ այստեղ դևեր են դուրս գալիս, ինչպէս և Սրուանձտեանի վարիանտի մէջ դև է։ Այդ երգի մէջ «հօթանասուն դևեր և նոցա գլխաւորը ապրում են մի այրում։ որդին խնայում է միայն գլխաւորին, որին և սիրում է մայրը։ Ս. Շաբաթի տեղ երգի մէջ որդուն օգնում է մի վիլա»[1]։—Վիլաները մեր քաջքերի կամ պարիկների տեսակին պատկանող ոգիներ են։

Մեր վիշապազանց առասպելի և այս հեքաթների նոյն լինելը ակնյայտնի է։ Ապոնք միևնոյն առասպելի տարբեր պատմուածքներ են միայն։ Անշուշտ, Խորենացին առասպելն իւր մանրամասնութիւններով չէ բերում։ Այնտեղ չենք գտնում օրինակ, թէ Սաթենիկ տիկինը, որ վիշապ Արգաւանին սիրում է, վիշապի հետ աշխատած լինի իւր որդուն կորցնելու։ Շատ հասկանալի է թէ ինչու։ Ի՞նչպէս կարող էր պատմագիրն այդ մէջ բերել, նա որ Սաթենիկի սէրն անգամ բովանդակութեան մէջ իբր արփանք է անուանում, իսկ «Ճշմարտեալ պատմութեան» մէջ չի էլ առնում այդ սէրը։ Սակայն առասպելի մէջ այդ երկրորդական է։ Իսկ էականը կայ մեր հին առասպելի մէջ։ Էականն է. Հայր թագաւորը (Արտաշէս) յարաբերութիւն ունի Սև լեռան (Մասիսի) վիշապների հետ. նորա աչքը վախեցել է վիշապներից։ Թշնամի է նոցա, բայց, երևի, կռուելով բան անել չէ կարողանում։[1] Իսկ նորա որսորդ որդին (Արտաւազդ) որ նոյնպէս գերբնական ծնունդ ունի (ինչպէս Փլորիան), տիրում է վիշապների ապարանքին ու բերդերին[2]։ Մայրը, Սաթենիկ, սիրում է վիշապների գլխաւորին։ (Մօր դաւաճանութիւնը չկայ)։ Եւ Արտաւազդ ոչնչացնում է վիշապներին։

Թէ այս առասպելը, որ այժմ հեքաթի բնաւորութիւն ունի, կարող էր հին ժամանակ հայոց մէջ վիպասանքի և նոյն իսկ երգի նիւթ լինել՝ այդ մասին կասկածել կարելի չէ, քանի որ նոյն առասպելն այժմ ինչպէս ասացինք, Հռոմագորիայում վիպական երգ է։ Իսկ թէ ինչպէս, կամ ինչ պատճառով է վիշապների այս առասպելը կապուել Արտաշէսի մասին եղած պատմական երգերին՝ այդ մասին յետոյ խօսք կը լինի, երբ Տիգրանի և ժշդահակի մասին կը գրենք։

Վիշապների դէմ կռուի այս առասպելին միացել է վիշապների և մի ուրիշ առասպել,—Արտաւազդի փակուելը Ազատ Մասիսի մէջ։ Տեսնենք այդ առասպելն ևս։

(Կը շարունակուի)

Մ. Աբեղեան.

---

1. *Буслаевъ, Истор. очерки русс. народной словесности.* եր. 323. Նոյն տեղում յիշած է *Вука Караджиджа 2. № 8.*

1. Այս իմաստով կարելի է հասկանալ ճշմարտեալ պատմութեան Յա. հատուածը, թէ Մաժան որդուն ուղարկում է վիշապների դէմ, բայց երկու տարուց յետոյ հաշտւում է եւ «ի բաց տալ հրամայէ զինչսն»։

2. Խորենացու «ճշմարտեալ» պատմութիւնն այն տարաորութիւնն է պողնում, որ Արտաւազդ հակառակ իւր հօր կամքի է կռւում Արգամի դէմ, ինչպես եւ հետքերի մէջ որդին հօր կտակի հակառակ է վարւում։

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ.

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ՎԱՐԵԼ ՀՈՂԸ.

Հայրիկ շատ կը սիրէր հողագործական աշխատութիւն. միշտ մտածմունքին այն էր, որ հին մշակութեան դաժանքի աշխատութիւններ դիւրացնէ, թէ մարդոց հանգիստ լինի, թէ խեղճ անասունց եւ թէ հողն աւելի խնամով մշակելով արդիւնաւոր լինի:

Լսէր ուշեմն, Թոնիկի, Պապկէ դասերուն եւ բարի խրատներուն, որ պիտի սորվիս թէ ինչ է մեր աշխատութեան միջոցով, որ դէռ հնութեան մէջ մնացած է: Ինչպէս կարելի է հետզհետէ հնութեան կերպեր փոխել, նորագոյն կերպերով մշակել երկիր, որով մեր աշխատութիւն կը դիւրանայ, երկիր աւելի կարդիւնաւորէ՝ մեր շահն ու վաստակ կրկնապատիկ կը լինի:

«ՊԱՊԻԿ եւ ԹՈՌՆԻԿ»-ից

Օգտակար և մշակելի բոյսերի յաջող աճեցման համար անհրաժեշտ է, որ այն հողը, որի մէջ սնուում և արմատ են բռնում նոքա, աղատ լինի ուրիշ այլ և այլ աւելորդ ու վնասակար բոյսերից. բայի դրանից հողի այն շերտը, որի մէջ զարգանում է բոյսի արմատը, պէտք է փխրուն լինի և իւր մէջ պարունակէ խոնաւութեան ու սննդարար նիւթերի մի անհրաժեշտ քանակութիւն: Եթէ կաւենում են հողի կազմութիւնը բարելաւել պարարտացումով, այդ տեղի պէտք է ունենայ հաւասարապէս հողի բոլոր մասերում: Նոյն կերպով պէտք է բարելաւել և օգտակար դարձնել վարելահողերը, երբ իրրև պարարտացուցիչ միջոց գործ են ածում հողի երեսին դնուող գործարանական նիւթերը, ինչպէս օրինակ՝ մէղերը, հին բոյսերի մնացորդներ, որոնց փտելու, հողին օգտակար նիւթեր մատակարարելու համար անհրաժեշտ է ծածկել հողի բարակ շերտով: Հողի մանրիկներն էս հարկաւոր է պահել այն դրութեան մէջ, որ բոյսերը դիւրութեամբ կարողանան ծծել նոցանից իրենց պէտքական նիւթերը: Այս նպատակին հասնելու համար հարկաւոր է հողի ներքին շերտերը տեղափոխել վերև, երկրի մակերևոյթին աւելի մօտ, որպէս զի օդը և մթնոլորտի խոնաւութիւնը յարմար կերպով կարողանան ամէնի վրայ ներգործել: Վերջապէս ցանած սերմերի աճեցողութիւնը պէտք է տեղի ունենայ հողի մէջ և ոչ նորա մակերևոյթի վրայ. նշանակում է սերմերի համար կարևոր է, որ հողը վարած լինի, որպէս զի կարողանան հեշտութեամբ ծածկուել հողի փափուկ շերտերով: Այս բոլոր պահանջներին միաժամանակ բաւականութիւն կարող է տալ հողի յարմարաւոր մշակութիւնը, վարը, որ աւելի յաջող կերպով կատարուում է դութանով, քան արօրով (չթով—որովհետև արօրը միայն փորփրում է հողը, այն էլ երեսանց, իսկ դութանը կատարելապէս վարում է և շրջում վարելահողը, մնասամբ էլ փշրում է, փափկացնելու համար). նաև խնայքով պէտք է, լինի տափանելը, որը վերջացնում է դութանի սկսած դործը:

Բայց որովհետև մշակելի երկիրը բաղկացած է շատ տեսակ նիւթերից, որոնց մէջ դրբխաւոր տեղ են բռնում կաւը և աւազը, (միւսները երկրորդական են)՝ առաջինը պընդութեան և կպչունութեան պատճառով դժուար է վարուում նոյն իսկ դութանով, երկրորդը, ընդհակառակը, թեթև և փխրուն յատկութիւն ունենալով, հեշտութեամբ է վարուում՝ մէկի առը պէտք է շուռ տալ ամբողջապէս, միւսինը ոչ, մէկի համար կարևոր է խոր մշակել, միւսը, ընդհակառակը, երեսանց, և այլ այսպիսի բաներ, ուսած և պէտք է աչքի առաջ ունենալ նախ՝ հողի կազմութիւնը, ապա երկրի կլիման ու անտեսական պայմանները և ապա ըստ այնմ ընտրել յարմարաւոր գութաններ, տափաններ և ուրիշ այլ և այլ գործիքներ, որպէս զի յետոյ սխալ դաղափար չկազմուի նոր ձևի դութանների մասին, թէ լաւ չի վարում չի դիմանում մեր հողերին, մեր գութանները աւելի խոր են վարում և այլ այսպիսի պատճառաբանութիւններ:

Մեր դիւղական ժողովուրդը հողը վարում է, գութանով, երբ հողը խամ է և հարթ հաւասար ու սակաւ քարոտ, և կամ երբ հողը երկար ժամանակ անվար է, մնացած: Գործադրելու համար անհրաժեշտ է 7-8, երբեմն դեռ աւելի եղներ ու դոմիշներ: Իսկ երբ հողը քարքարոտ է և գութանո հերկելով

պանական անյարմարութիւններ կան և կամ ընայելով որ հողը առանձնապէս և ոչ մի անյարմարութիւն չի ներկայացնում, բայց գիւղացին միջոց չունի գումարն լծելու՝ նա ստիպուած է արօրով (չթով) հերկ անել, որի գործադրութեան համար հարկաւոր է միայն 1-2 լուծ եզ։ Սա թէև ֆիզիքական մեծ ոյժ չի պահանջում, բայց այն խորութեամբ և կանոնաւորութեամբ վար չի անում, ինչպէս գումարնը։ Հապա կարողանայ հողը երկու վերշակ խորութեամբ քանդել, ուստի և հողի շերտերը անկանոն և անբաւարար կերպով են փափկում և երաշտ տարիներում բոյսը դժուարանում է հողի աւելի խոր և աւելի հեռաւոր մասերից բաւարար չափով անունդ սառնալ՝ կարճ միջոցում չորանում է, մինչդեռ փորձը ցոյց է տուել, որ լաւ և առանձին խնամքով հերկած արտի բուսականութիւնը երաշտ ժամանակն անգամ կարող է տալ, եթէ ոչ լաւ, գոնէ միջակ բերք։ Այստեղ մենք տեսնում ենք, որ մեր գումաններն շատ անյարմարութիւններ ունին։ Ուրեմն ֆիզիքական մեծ ոյժ, ուրեմն և մեծ ծախք են պահանջում գիւղացուց։ Ամենայն մի ընտանիք չի կարող հողալ այդ մեծ ծախքը և կարևոր էլ չէ այդ, որովհետև իւրաքանչիւր գիւղացի սեփական շատ քիչ հող ունի, շատ անգամ մի քանի ընտանիք միանալով մի գուման են լծում։ կան և այնպիսիները, որոնք ընտանի անասուններ չունենալու պատճառով վարձով են հերկել տալիս իւրեանց հողերը, իսկ թէ ուրիշի վարը որքան խնամքով և խորը կատարուած կլինի, այդ Աստուած գիտէ։—Ընդունելով, որ ընթերցողը քաջ ծանօթ կլինի մեր այս նահապետական ձևով վարելու և սանիանելու, հարթելու, և այդ գործերը կատարող գործիքների հետ, աւելորդ համարեցի այստեղ երկար ու բարակ խօսել այդ մասին։ Կաշխատեմ միայն նկարագրել, որքան կարելի է մանրամասն կերպով, թէ, ինչ եղանակով են կատարուում գործս այժմ քաղաքակիրթ երկրներում։ Ունկ այն գործիքների կամ աւելի ճիշտ ասած մեքենաների մասին, որոնց միջոցով կատարուում է այս գործողութիւնը, ընթերցողը կարող է բաւական մանրամասն և օգտաւէտ տեղեկութիւններ ստանալ Լ. Խան-Աղեանի «Գիւղատնտեսական գործիքներ եւ մեքենաներ» 250 նկարով դրքոյկից, որ հայոց հրատարակչական ընկերութեան հրատարակածն է։ [1]

Վարի ժամանակ գումանը նախ և առաջ ձևում կորում է հողի մշակելի շերտը ուղղահիդ կերպով ամրացրած ձևիչով և պատռում հողի տակից հորիզոնական խոփով։ Խոփի վերևը յարմարեցնում են թևը, որի պաշտօնն է առը շուռ տալ։ Նորա ձևը համապատասխան է լինում հողի յատկութեան։ այսպէս, օրինակ նեղ պատռատակաձև թևը գործ է ածւում խոփի կտրած պինդ հողի առը շուռ տալ ու։ փափուկ հողի համար գործ է դրւում գոգաւոր թև, որ առը փշրելով է շուռ տալիս։ Նայած թևերի ձևին և հողի յատկութեանց առերը կտրատում են խոշոր կամ մանրը։ Առը կտրուած լինելով ձևիչով մի կողմից և տակից պատռուած լինելով խոփով, բարձրանում է թևի վրայ, որ և շուռ է տալիս նորան։ Աւր հաստութիւնը կամ վարի խորութիւնը կախումն ունի ձևիչի երկարութիւնից, իսկ լայնութիւնը խոփի լայնութիւնից։ Երբ առը շատ լայն է լինում, հողը լաւ չի փափկում, իսկ երբ մանր է, այն ժամանակ էլ գումանը համեմատաբար աւելի շատ աշխատանք է գործ դնում։ Գերմանիայում հմուտ գիւղատնտեսները, նայած հողի շատ կամ քիչ պնդութեան, խորհուրդ են տալիս 4-6 գ. լայնութիւն ունեցող առ։ Ռուսաստանում գործ է դրւում 4-5 վերշ., թէև շատ տեղերում մինչև այժմ էլ երկու ան-

---

1. Խորհուրդ եմ տալիս ամէն մի քիչ թէ շատ կարդալ գրել իմացող հայ գիւղացու, որ լաւ հասկացել է երկրագործական մեքենաների առաւելութիւնը, նոցա տուած արդիւնքը, ունենալ իւր մօտ մի օրինակ պ. Խան-Աղեանի կազմած այդ անհրաժեշտ և օգտակար աշխատութիւնից, որտեղ մանրամասն կերպով և որոշ շարքով բաժանել է նա ամբողջ աշխատութիւնը չորս հեռևեալ մասերի՝ ա. հերկող գործիքներ, բ. ցանող, հնձող, կոսող և մաքրող մեքենաներ, գ. յաւելուածք, որի մէջ կարևոր են գիւղատնտեսական գործիքներ գնելու համար անելիք փոխադրութեան կանոնները, Փինանսների պ. Նախարարի հաստատած 1894 թ. յուլիսի 6-ին, դ. բացատրական բառարան հայերէնից-հայերէն-ռուսերէն-գաղիերէն։

դամ՝ ասելի լայն, այն է, 8-10 վերշ. լայնութեամբ առեր են անցկացնում։ Բայց ղրանից առի հաստութիւնը պէտք է համապատասխանի նորա լայնութեանը և այն դիրքին, որ կամենում են տալ նորան վարի ժամանակ։ Պինդ, կպչող առերը, որոնց փափկացնելու համար անհրաժեշտ է եղածին չափ խնամք տանել, որ վարելահողի մակերևոյթի մեծ մասը շփումն ունենայ օդի հետ, պէտք է այնպէս շրջել, որ հորիզոնի հետ 45° անկիւն կազմի. նաև այդ այն ժամանակ տեղի կունենայ, երբ շերտի լայնութիւնը կէտարաբերի հաստութեանը, ինչպէս 7։5։ Ջանազան տեսակ կանաչիներով ծածկուած արտը կամ խոզանը հերկելիս և կամ՝ հողի հետ ապր խառնելիս, որպէս զի բոյսերի մնացորդները լաւ ծածկուին, յաջող վերլուծուին և բաւականաչափ խոնաւութիւն ձեռք բերեն, նաև ցանքի ժամանակ, երբ հարկաւոր է՝ հնար եղածին չափ արտը իրրև մի հարթ մակերևոյթ ներկայանայ, ցանած սերմերը չընկնին խոր ակոսների մէջ և չծածկուին հողի հաստ շերտով՝ անհրաժեշտ է ամբողջապէս շրջել կարած առը, այն է, փռել բոլորովին տափակ դիրքով, որի համար և լայնութիւնը համարեա երկու անդամ՝ ասելի պէտք է լինի հաստութիւնից և նրանց մէջ եղած յարաբերութիւնը պէտք է հաւասար լինի 9։5։ Ընդհակառակն, կրկնավար անելիս, կամ երբ հարկաւոր է, հողը խառնելով մանրել, փշրել և նրա հետ ապր խառնել, կամ երբ հարկաւոր է ծածկել ցանած սերմերը և կամ երբ հողը պատրաստում են ցանքի համար և սերմերը ուզում են ծածկել տափանով կամ մի այլ գործիքով, և այլ տոյնանման դէպքերում՝ անհրաժեշտ է վարել այնպէս, որ առը նեղ լինի։ Այնուամենայնիւ պէտք է ի նկատի առնել, որ այն դէպքում, երբ նրանց լայնութիւնը յարաբերում է իրենց հաստութեանը, ինչպէս 6։5, առը դժուարութեամբ կարող է կանոնաւոր կերպով շուռ գալ, ընկնում է, միայն կողքի վերայ, ուստի և վարը այս կերպ կարելի է կատարել և գործադրել միայն փխրուն և ոչ կանաչով ծածկուած հողերում։ Բայց ղրանից զգան լայն լինի առը, նոյնքան ասելի սակաւ կլինի առերի թիւը, հետևապէս և միևնոյն տարածութիւնը հերկելու համար՝ ասելի քիչ ժամանակ կպնայ։

Վ. Ա. Խոջ-Ընէ-նը.—Բացի առի լայնութեան և հաստութեան միջ եղած յարաբերութիւնից, հողը մշակելու յաջողութեանը նպաստում է, նաև վարի խորութիւնը։ Եթէ, վարը խոր է, արած՝ օդը և ջուրն ասելի հեշտութեամբ կթափանցեն հողի միջ, հողը երկար ժամանակ կպահպանէ իր միջ խոնաւութիւն, ասելի սակաւ կերպով երևան կգայ ջրի յորդատարութեան վնասակար ազդեցութիւնը, որովհետև տարածուած կլինի ասելի մեծ տարածութեան վրայ՝ ասելի արագ կերպով կտաքանայ հողը և երկար ժամանակ կարող է, պահել իր միջ ձեռք բերած տաքութիւնը, և վերջապէս մեծանում է դորանով այն տարածութիւնը, որի սահմաններում բոյսերի արմատները կարող են ստանալ անհրաժեշտ աննդարար նիւթեր։[1] Այնուամենայնիւ խոր վարի օգտաւէտութիւնն էս կախուած ունի հողի ներքին շերտերի յատկութիւններից, որոնք վարուելուց յետոյ պատնում են բուսական մշակելի մի շերտ։ Եթէ հողի ներքին շերտերը ասելի աղքատ են բոյսի համար կարևոր աննդարար նիւթերով, քան վերին շերտը, և կամ հեշտութեամբ չեն իւրացուում՝ բուսական համար միանգամայն նիւթերից են բաղկացած, այն ժամանակ վարելով արագ կերպով յեղաշրջել վարելի շերտը՝ կարող է վատացնել վերջնիս յատկութիւնը. ուստի և պէտք է կամաց կամաց և խիստ զգուշաւոր կերպով կատարել այդ։ Այս նպատակին հասնելու համար, նախ ամէնից փափկացնում են միայն հողի ներքին շերտերը առանձին գործիանով, իսկ ապա, աշնանը, կատարում են վարած մասերի

---

1. Եթէ աննդարար նիւթերը կենտրոնացած են հողի վերին շերտերում, այն ժամանակ բոյսերի արմատները փոխանակ խոր գնալու տարածւում են բնի վերաբերմամբ թեք կերպով, այսինքն դէպի կողմերը, և սովորաբար պատղներն էլ ասելի շուտ են հասունանում. հակառակ դէպքում խոր են գնում ուղղահայեաց կերպով, երբեմն նոյն իսկ մի արշինից ասելի խոր, որոնելու համար անուղղ-խոնաւութիւն, որին երբէք արգելք չի կարող լինել սովորական վարելահողի պնդութիւնը, նոյն իսկ բոյսերի համար անուղղ ասելով պէտք է հասկանալ ջրի մէջ լուծուած նիւթեր, եթէ ոչ՝ կոշտ ձևով, եղած չեղած նոյն հաշիւն է։

տեղափոխությունը մոտ մոտ՝ կաւահողի շերտերից ½ վ., իսկ աւազահողից 2-3վ., որպէսզի դեռ մինչև ցանքը հողի կոշտ մասերի համար փշրուելու, փտիկելու բաւական ժամանակ մնայ: Հաւ կլինի եթէ, այսպիսի դաշտերում սկիզբն աշխատանն ձեռնարկել սակաւապահանջ բոյսեր՝ գետնախնձոր, եգիպտացորեն և այլն:

Շատ մշակելի հողի շերտը բաւական հաստ է, վարի հաստութիւնը պէտք է աշխատել յարմարեցնել այն խորութեան հետ, ինչ խորութեան մէջ որ ամուսի զարգանում են ցանուող բոյսերի արմատները, տարբեր այն եղանակի հետ, երբ ակռի է, ունենում վարը, կլիմայի և հողի յատկութեանց և կատարած հերկի տեսակի հետ. այսպէս՝ ա. հացահատիկների համար բաւական է, վարի 4վ. խորութիւն, վարածակը բոլորից շատ հողի փտիկութիւն է, պահանջում նրան հետևում են ցորենը, գարին ու հաճարը: Մնացած արդիւնաբեր բոյսերի համար հարկաւոր է, հողը վարել 5-6վր. և դեռ աւելի խորութեամբ, որոնց կարելի է, դասաւորել հետևեալ կարգով. Ծխախոտ, գազար, ճակնդեղ, գետնախնձոր և այլն: Սակաւ խորութիւն է, հարկաւոր կարմիր առուտուր, սիսեռ, վուշի և այլոց համար: ը. Աշնան վերջերին, երբ բաւական ցուրտ է լինում պէտք է աշխատել աւելի խոր անել վարը քան տարուայ միւս եղանակներին, որպէս զի այդ պիտով ներքին շերտերը լոյս աշխարհ դուրս գալով ենթարկուին տաստիկ հողմնահարութեան, և տաչինն, հողի տակ ծածկուելով աչնանան բազմաձեայ անպէտք և վնասակար բոյսերի ամենօղտական գործարաններըը: գ. Որպէս զի պարտնանը միջոց ունենանք երկար ժամանակ հողի մէջ տաստ խոնաւութիւն պահպանելու, անհրաժեշտ է, որ կլիմայ ունեցող երկիրներում վարն աւելի խոր անել, քան խոնաւ երկիրներում[1]. թեթև և փխրուն հողը նոյնպէս պէտք է աւելի խոր վարել, քան ծանրը և պինդը: ղ. Եթէ, խոզանի մէջ չեն ուզում աղբ աւերացնել, ցանքը չպէտք է, շարքերով կատարել, վարի խորութիւնը չպէտք է, 1½ վերշ.-ից աւելի խոր անել. շարքերով ցանք անելիս անհրաժեշտ է, 2½—3վ. խորութիւն, աղբը ծածկելիս անհրաժեշտ է, որ վարը 2-2½ վ. խորութիւն ունենայ: Մի սովորական գութանով 6-8 վերշ. աւելի խորութիւն ունեցող վար դժուար է, կատարել, դորա համար հարկաւոր է, երկու խոփ: Առաջին գութանը շրջելով վերին շերտը, ակօսներ է, բայց անուսի որի միջով նրան կհետևի դիք թև ունեցող մի ուրիշ գութան, որը իւր բարձրացրած տը շրջում է, առաջին գութանի դարձրած առի վերայ: Շրրեմն երկրորդ գութանի տեղ գործ են դնում ներքնավար (почвоуглубитель) կոչուած գործիքը, որ բացի

---

1. Պրոֆեսսոր Կոստիչևի կատարած փորձերից երևում է, որ երաշտի դէպքում վարելահողերի ծանծաղ, բայց միևնոյն ժամանակ կանոնաւոր և լաւ կատարած վարը աւելի օգտակար է բուսականութեան համար քան խորը: Եթէ հացաբոյսերի արմատները սաստիկ չորութիւնից չեն վնասում այդ նշան է, որ նրանց արմատները թափանցել են հողի այն խորութեան մէջ, որտեղ երկիրը մշտապէս պահպանում է խոնաւութիւն, որ բարձրանում է ներքին շերտերից: Ներքին ջրերը բարձրանում են վերև մեծ մասն ոչ փափկացրած հողի շերտով, ուստի, երբ վարը ծանծաղ է լինում, ցանած սերմերը հողի մէջ ընկած են լինում պինդ ներքնահողին շատ մօտ, որով և հացաբոյսի արմատիկի համար դժուար չի լինում թափանցել այնտեղ, որտեղից ինքը ձեռք պէտք է բերէ իր համար սնունդ: Բոլորովին հակառակն է ներկայացնում խոր վարը: Այն տեղ մնատաղ բոյսի արմատիկի և չփափկացրած խոնաւ ներքնահողի արանքում ընկած է լինում երաշտից շուտ չորացող վարած հողի մի շերտ, որ երբեմն չորս վերշոկ հաստութիւն է ունենում և արմատները դժուարանում են նրա միջով ջուր ծծել. Սրանից երևում է, որ երաշտ ժամանակ եղանակը չի կարող վնաս հասցնել բուսականութեանը, եթէ նրանց արմատները հասել են հողի այն շերտին, որ ընդունակ է խոնաւութիւն հաղորդել հողի ներքին շերտերից բոյսերի արմատներին:

Իրրև ապացոյց, որ ծանծաղ վարը խորը վարից շատ և շատ հողերի համար աւելի օգտակար է, յառաջ ենք բերում վերջերս կատարուած մի այսպիսի փորձ. Գարնանացանի արտերից մէկում գութանին 4-5 զոյգ եզներ լծած քաշել են մի խոր ակօս և անմիջապէս նորից լցրել հողով. ապա գութանին երեք զոյգ մատաղ եզներ լծելով, ամբողջ արտը վարել են ծանծաղ կերպով և ժամանակին ցանել. Այդ տարի գարունն անձրևային է եղել, իսկ ամառը չորային. Գարնանը առաջի անգամ խորը քաշած ակօսի երեսին բուսականութիւնը աչքի է ընկել իր բարձրութեամբ և մուխ գոյնով, իսկ ամրանը բոլորովին դրա հակառակը: Գարնանը յայտ բուսած հացաբոյսերը հնձի ժամանակ հասակով աւելի ցած են եղել և ընդհանրապէս աւելի վատ, քան ամբողջ արտի վրայ բուսած միւս հացաբոյսերը.

թևից ունի նաև գուլթանի բոլոր մասերը և անկախ կերպով 2-3 լուծ եզ լծուած գնում է, առաջին գուլթանի յետևից նորա բաց ատրած ակօսի միջով, որով և առելի խորացնում է, ակօսը և, առանց դուրս ձգելու հողը, մշակում է այդ ակօսի ներքին շերտը. կամ նոյն գուլթանի անցկացրած ակօսից թիակներով դուրս են ձգում հող առաջին գուլթանի շրջած առի վերայ:

(Կը շարունակուի)

Գ. Ղ.

ԱՅԼԵՒԱՅԼ

Ի՞ՆՉՊԷՍ ՊԱՀՊԱՆՈՒԻԼ ԾԱՂԻԿ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԻՑ

Հին ժամանակներում ծաղիկը շատ տարածուած հիւանդութիւն էր, շատ էլ ժողովուրդ էր կոտորում ու պլանդակում: Դեռ սրանից մի դար առաջ 15 հոգուց մէկը հազիւ թէ անվտանգ ապատուէր ծաղկից: Որտեղ տասը հոգի ծաղկից բռնուէին, գրանցից մի երեքը մահի ճարակ կըլինէին, մնացեալներից ոլը կուրանում էր, ոլը խլանում էր և հազիւ թէ մէկը չեշտոտ էըմնար: Եւ մարդիկ էին իմանում՝ ինչպէս պաշտպանուեն այդ սարսափելի ցաւից, մինչև որ մի անգլիացի բժիշկ—սրա անունն էր Ջէննեը—անցեալ դարում վերջապէս հնար գտաւ այս ցաւի դէմ:

Ազգուց յայտնի է թէ՝ ծաղկացաւը միայն մարդկանց չէ բռնում, այլ երևում է և տաւարի վրայ—ձիանների, ոչխարների ու կովերի վրայ: Ձիան ոտքերի վրայ է դուրս տալի ծաղիկը, ոչխարի բոլոր մարմնի վրայ, իսկ կովերի միայն ծծերի կամ պտուկների վրայ: Ազգուց էլ նկատուած էր, որ երբ գեղջկուհին կթում էր ծաղկով բռնուած կովը, կթողի մատների վրայ դուրս էին գալի իսկ այն տեսակ ծաղկի բշտիկներ, որպէս էին և կովի ծծերի վերայ: Բայց այդ դէպքում կին—արմատը երբէք ծանր հիւանդութիւն չէր քաշում, այլ թեթև ու անվտանգ:

Դոկտոր Ջէննէրը անգլիական մի գիւղի բժիշկ էր: Ապրելով գիւղացւոց հետ, նա առանձաս էր ժողովրդի տանջանքներին ծաղկի երևից. ուստի մտածում է միշտ մի կերպով այդ սարսափելի չարիքի առաջն առնել. սրա համար ամեն տեսակ տեղեկութիւններ հաւաքում էր նոյն իսկ գիւղացիներին հարց ու փորձ անելով: Այս տեղեկութիւններից նա իմացաւ հետևեալը: Երբ կով կթող կնկայ մատներին դուրս տայ հիւանդ կովից փոխուած ծաղիկը, այլ ևս այդ կինարմատին չի դիպչիլ մարդկային վտանգաւոր ծաղիկը, թէկուզ նրա բոլոր գերդաստանը վարակուած լինի իսկական և ծանր ծաղկով: Այս բանը Ջէննէրը վճռեց փորձով հաստատել 1796 թուի մայիսի 14-ին: Մի գիւղացու ութը տարեկան տղայի (Փիրս անունով) թևերի կաշու վրայ Ջէննէրը նշտարով երկու բարակ և փոքրիկ ճեղք արեց և նրանց վրայ քսեց մի—մի կաթիլ այն թարախից, որ առած էր կովածաղկով վարակուած մի կովապահ կինարմատի բշտիկներից: Ամեն բան այնպէս եղաւ, ինչպէս որ սպասում էր Ջէննէրը. տղայի թևերին մի քանի օրից յետոյ դուրս ուսին կովի ծաղկի նման բշտիկներ. այս միջոցին նա ունեցաւ թեթև տաքութիւն. մի քանի օր էլ անցած՝ բշտիկները քիչ—քիչ չորացան, տղան բոլորովին առողջացաւ. բայց մնաց գեռ իմանալու ամենագլխաւորը, թէ տղան արդեօք ապահովուած էր իսկական ծաղկի վարակումից: Այս հարցը վճռելու համար Ջէննէրը գործ դրեց մի սարսափելի փորձ: Այն է՝ վերցրեց նշտարով իսկական մարդկային վտանգաւոր ծաղկի հիւթը պատուաստեց նոյն տղային մի երկու ամիս չանցած առաջի փորձից յետոյ: Սպասելով թէ մի գուցէ խեղճ տղային բռնէ իւր ձեռքով առած վտանգաւոր ծաղկի թոյնը—Ջէննէրը երեք հոգևմաշ և անտանելի օր ու գիշեր անցուց ... բայց փառք Աստծու, տղան բոլորովին անվնաս մնաց և ոչ մի հիւանդութիւն չունեցաւ այս սոսկալի փորձից, որովհետև առաջի փորձով իսկական ծաղկի վարակումից նա ապահովուած էր:

Այսպէս կատարուեց գիտութեան ամենամարելի գիւտերից մէկը: Թէև նա մեծ տանջանքներ պատճառեց գիւտն անողին ...

Այնուհետև Ջէննէլը հետևեալ կերպով մտածեց։ Կովի ծաղկով վարակուած մարդը երբէք չի ձնասուռմ, բայց միևնոյն ժամանակ դրանով նա ազատուում է աւելի վտանգաւոր և սարսափելի մարդկային ծաղկից։ Ուրեմն՝ լաւ չի՞ լինիլ, որ բոլոր մանուկներին պատուաստենք կովի ծաղիկը, որ բոլորն էլ ազատուեն իսկական ծաղկի չարիքից։ Մտածեց և կատարեց, երբ մի անգամ Ջէննէլի ապրած գիւղում ծաղիկը նորից սկսեց սատկանալ և կոտորել ժողովրդին։ Նա հաւաքեց կովի ծաղկի բշտիկներից բաւականին նիւթ (ափշ) և պատուաստեց բոլոր առողջ մանուկներին։ Այսինքն՝ ինչպէս առաջի փորձում առողջ երեխայի թևի կաշին քերծում էր նշտարով կամ փոքր ինչ ձեղքում և վրան քսում էր կովի ծաղկի հիւթը. մի քանի օրից յետոյ՝ բոլոր երեխաների թևերի վրայ դուրս եկան իսկ և իսկ կովի ծաղկի նման բշտիկներ, մի երկու շաբաթից էլ բշտիկները փչկուեցին՝ չորացան։ Այժմ արի՛ ու տես, որ այդ երեխաներից ոչ մէկին դարձեալ չյաջողեց այն ժամանակ գիւղում տարածուած իսկական ծաղիկը ...

Ջէննէլի ուրախութեանը էլ չափ չկար, որ վերջապէս գտնուեցաւ հնար պաշտպանել ամբողջ ժողովուրդը ծաղկի աւերումներից։

Նա գրեց այդ մասին Անգլիայի ու օտար երկրների բժիշկներին։ Սրանք էլ ամեն տեղ սկսեցին նոյն փորձերը կատարել և դուրս էր գալի ամեն տեղ միևնոյն բանը. ուր որ պատուաստում էին կովի ծաղիկը, ինչպէս Ջէննէլը սովորացրել էր, նրան այլևս իսկական ծաղիկը չէր դիպչում։

Այժմ եւրոպական պետութիւններում հազիւ կը պատահի երեխայ, որ վաղօրօք կովի կամ հորթի ծաղկով պատուաստուած չը լինի և այդ պատճառով իսկական ծաղկից մեռնողների թիւը այդ տեղերում չատ քչացել է։

Գերմանիայում 24 տարի սրանից առաջ օրէնք հրատարակուեց, որով բոլոր ծնողները պարտաւորուեցան իւրաքանչիւր մանկան պատուաստել ծաղիկը ոչ թէ մի անգամ, այլ և երկրորդ անգամ 10 տարեկան հասակում։ Երկրորդ անգամ պատուաստելու պատճառն այն է, որ փորձերից երևաց, որ ամեն մի պատուաստումը երեխային պաշտպանում է իսկական ծաղկի հիւանդութիւնից միմիայն 8 կամ 10 տարի։ Այս կրկնապատուաստի ընդունելու ժամանակից սկսած՝ իսկական ծաղիկը Գերմանիայում տարէ տարի պակասելով հիմի էլ բոլորովին անհետացել է. այնպէս որ այդ երկրում մարդիկ այժմ իսկական ծաղկի հիւանդութեան ինչ տեսակ լինելն էլ չեն իմանում։

Մեզանում դժբախտաբար այդպէս չէ. մեր գիւղերում ու փոքր քաղաքներում քանի քանի գիւղապատաններ թողնում են իրանց երեխայոց առանց պատուաստի. կան մեզանում դեռ շատ պառաւներ և տատեր, որ ծաղկի դէմ միջոցներ գործածելը և ծաղիկ կտրելը մեղք են համարում։ Մ՛արդ հարցնէ դրանց թէ՛ ախար ի՞նչ մեղք բան է, եթէ մարդս իր զաւակների մասին հոգ տանի առաջուց, որ նրանք չկուրանան կամ չայլանդակուեն։ Ապա տեսէ՛ք, թէ մի գիւղում ուր ժողովուրդը պատուաստից փախչում է, իսկական ծաղիկը ի՞նչ սարսափ է ձգում չորս կողմը. որի տանտէրը կուրացաւ, որոնց տանը մայրը ծաղկից էն աշխարհը գնաց, այս տանը բոլոր երեխայքը կոտորուեցին, այն տանը մարդու տալու աղջկայ երեսը պլանդակուեց ... ո՞ր մէկը պատմեմ լսոն ու կոծը մինչև երկինք է հասնում։ Ո՞վ է մեղաւորը. մարդիկ իրանք, որ իրանց չուզենան օգնել, Աստուած ի՞նչ անէ ...

Ահա այդ տեսակ անհոգ և անտարապաշտ մարդկանց երեսից մեզանում ծաղիկը ամեն տարի մեծ է գալի գիւղից գիւղ, քաղաքից քաղաք և անհամար զոհեր է տանում և դեռ ո՛րքան էլ կոյրեր է թողնում այս աշխարհում թափառելու իբր կենդանի օրինակներ ծնողական անհոգութեան։ Կարող է պատահել, որ պատուաստածներն էլ ծաղկի տարածման ժամանակ հիւանդանան իսկական ծաղկով. սակայն փորձը ցոյց է տալիս, որ դրանց հիւանդութիւնը թեթև է լինում և այդպիսիներին ծաղկից շատ հազիւ է պատահում մահ կամ կուրութիւն. այդ էլ նրանց կպատահի, որ մի անգամ միայն պատուաստուած են՝ միայն շատ փոքր հասակում։ Իսկ կրկին անգամ պատուաստածները թէ բռնուին էլ

ծաղկից, միայն թեթև չեչոտութիւնով կապատուին նրա ձանկից։

Այս ամէնը իմանալուց յետոյ ծնողները անշուշտ պարտական են պատուաստել իրանց մանուկին, հէնց որ սա չորս կամ հինգ ամսական դառնայ։ Ուղիը կամ տասը տարեկան հասակում նոյն երեխային պէտք է անպատճառ նորից ծաղիկը կարել։ Իսկ երբ քաղաքի մի թաղում կամ մի գիւղում ծաղիկը սաստիկ տարածուի, այդ դէպքում պէտք է պատուաստուին թէ՛ մեծ և թէ՛ փոքր, թէ երիտասարդ և թէ՛ մանուկ. այդպէս որ անէք, շատ շուտով պատուհասը ձեր գիւղից կվերանայ և կկորչի։

Ոչինչ վնաս պատուաստուից չի պատահի, եթէ դրա համար դիմէք բժշկին կամ ֆելդշերին, որոնց բժշկական վարչութիւնը տալիս է հոլթի կամ կովի ծաղկի հիւթ և դրկում է գիւղերը պատուաստի համար։ Դէհ, էլ ո՞ւր էք թաքցնում ձեր երեխայոց դրանցից, էլ ի՞նչ էք փախչում պատուաստից։ Ուզո՞ւմ էք ձեր ապագայ սերնդի անէծքին արժանանալ ձեր անհոգութեան կամ անուշադրութեան համար .....

Հիմի լսեցէ՛ք թէ ո՛ր ժամանակներում պէտք է երեխի ծաղիկը կտրել եւ ինչ հնամնասարութիւն է հարկաւոր այդ դէպքում։

Վերը ասացինք, թէ պէ՛տք է պատուաստել ծծկեր երեխային, երբ սա չորս կամ հինգ ամսական դառնայ։ Ի հարկէ, երբ որ մանուկը թոյլ է կամ հիւանդ է, կարելի է յետաձգել պատուաստը մինչև նրա առողջանալը։ Սակայն երբ գիւղում յանկարծ սկսվում է տարածուել ծաղիկը, այդ դէպքում էլ հարկ չկայ սպասելու 4—5 ամիսը լրանալուն, այլ անմիջապէս հարկաւոր է պատուաստել թէկուզ 3—4 շաբաթուայ ծծկերնիկին։

Որտեղ բժիշկ կայ, պէտք է հիւանդ երեխային նրան ցոյց տալ. բժիշկը կարող է որոշել՝ ո՛ր հիւանդին կարելի է պատուաստել ծաղիկը, ո՛րին չէ. որովհետև ամեն տարուբեհն պատուաստուից հօ՛ չի վատանում։

Սովորաբար ծաղիկը կարում են գարշնանը կամ աշնանը. բայց երբ գիւղում եւլայ ծաղկի համաճարակը, պէտք է պատուաստել առողջ մանուկներին տարուայ ո՛ր եղանակին էլ պատահի։ Շատ մայրեր վախենում են ձմեռ ժամանակ պատուաստել իրենց երեխային։ Դա սխալուած վախ է։ Անշուշտ պէտք է զգուշանալ երեխային մրսեցնելուց և դրա համար բաւական է, որ ծծկերին պատուաստուից յետոյ երկու շաբաթ դուրս չբերէք սաստիկ ցրտերին, իսկ տաք ժամանակ հարկաւոր է դուրս բերել ամեն օր։ Պատուաստուից առաջ պէտք է երեխային լողացնել և մաքուր շապիկ հագցնել, լայն թևերով։ Պատուաստուի չորրորդ օրից, երբ կերևան ծաղկի բշտիկները, մինչև տասն և չորս օր, երբ նրանք կչորանան, այլ ևս չպէտք է լողացնել երեխային։ Այդ միջոցում հարկաւոր է երեխայի միայն երեսը և կեղտոտ տեղերը լուանալ, շուտ—շուտ փոխել վրայի շապիկը և առհասարակ փոխնորդը։

Պատուաստուի ութերորդ կամ տասներորդ օրը, մանուկը փոքր ինչ սկսում է ջերմել, լաւ չի քնում, անհանգիստ է։ Փորձառու մայրերը գիտենալով, որ դա պատուաստի սովորական ընթացքն է, իրանք էլ ի զուր չեն շփոթուում։ Երբ ծաղկի բշտիկները սկսում են լցուել, նրանց շուրջը բաւական կարմրում է։

Սակայն կպատահի երբեմն, որ այդ կարմրութիւնը տարածուում է բոլոր տսի վրայ և մանուկը չափազանց անհանգիստ է դառնում, անդադար լաց է լինում, որովհետև կարմրած թևիկը այրւում է և քոր է գալիս։ Պէտք է այդպիսի դէպքում դիմել բժշկի, եթէ սա գտնուի. եթէ ոչ՝ պէտք է գոնեա կարմրած տեղին մաքուր կարագ քսելով՝ փոքր ինչ հանդարտեցնել այդ այրոցը և քորը։

Ներբիմնապէս ծաղկի բշտիկները իւր ժամանակին չեն չորանում, այլ ջրջրոտում են, երբ երեխային մաքուր չպահեն, կեղտոտ շորերը չփոխեն։ Շատ անգամ էլ երեխան առանց հսկողութեան մնալով, անհանգստանալուց իւր մատիկներով պոճկում է թևի բշտիկները և նրանց տեղը լաց գարձնում, որ գարձեալ բժշկի հոգածողութեան է կարօտ։

Այս էլ կպատահի, որ պատուաստում են երեխային կովի ծաղիկը, լաւ բռնում է պատուաստը թևին. մէկ էլ տեսար երեխայի փորի և ոտիկների վրայ էլ երևեցան մի քա-

նի բշտիկներ։ Մայրերը շատ անգամ այդ բանից մեծ վախ են զգում թէ՝ մի՞ գուցէ իսկական վտանգաւոր ծաղիկ պատուաստեցին խեղճ երեխային։ Սակայն հարկ չկայ վախենալու, որովհետև կովի ծաղկի պատուաստից մարդկային իսկական ծաղիկ չի դուրս տայ մարմնի միւս մասերում, այլ նոյն կովի ծաղիկը կլինի, որ յամենայն դէպս անվնաս է։

Մայրը շուտով ինքն էլ համոզւում է, որ մարմնի վրայ դուրս տուածից ոչինչ վատագ չեւելացաւ երեխային. փորի վրայի բշտիկները շատ շուտով չորանում են և աւելի շուտ անհետանում, քան թևի սկզբնական բշտիկը։

Ուրեմն առ հասարակ՝ կովի ծաղկի կանոնաւոր պատուաստուից վնաս չկայ *։

Թարգմ. Բժշկապետ Ս. Բաբայեանց.

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ

3000 հազարամեայ մի ժամում կամ մի հազարամեայ մի վայրկեանում։—Այսպիսի աներեւակայելի արագութեան միջոց ձեռք բերել գուցէ անհնարին կհամարուէր տարիներ առաջ, թէկուզ հէնց տարէցտարի կատարելագործուող թնդանօթաձգութեան արհեստի մէջ, սակայն կասկածանքի տեղիք չի մնում՝ այդքան տարածութիւն համարեա թէ թռչում են այժմեան թնդանօթների ռումբերը և ամենայն հաւանականութեամբ, մօտիկ ապագայում, դեռ դրանից կանցնեն էլ։ Փրանսիական նոր թագոյն շէնքսի թնդանօթների ռումբերի արագութիւնն արդէն մի վայրկեանում 900 մետրից անցնում է, իսկ անընդհատ բարենորոգումներն այդ հրանօթների արուեստական կազմութիւնն այն նրբութեան կհասցնեն, որ մի վայրկեանում ռումբը կարող կլինի 1000 մետր տեղ անցնել։ Այժմեան ռումբերի միջոցով, եթէ իսկապես հնարաւոր լիներ, կարելի կլիներ նրանց մէջ դրուած նամակներն իննը կամ տասը վայրկեանում 8 հազարամետր տեղ հասցնել։ Մինչև այժմ ձեռք բերուած կատարելագործութեանց համառօտ ակնարկը, ինչպես նկատում է Journal des Débats թերթի մէջ գիտնական հարցերի ուսումնասիրութեամբ զբաղուող նշանաւոր անձնաւորութիւններից մէկը, միջոց է տալիս ըստ արժանւոյն գնահատելու այն յառաջադիմական քայլերը, որոնց աստիճանաբար հասել են հրանօթ ղէնքերի անխոնջ մշակները։ Այս դարի սկզբներից սկսած այդ արագութեան աստիճանը կրկնապատկուել է։ Եթէ այժմեան արագաթռիչ ռումբերը նախկինների հետ համեմատելու լինինք, կտեսնենք, որ նրանք երկու անգամ արագ են թռչում. Կրուպի 26 հարիւրերորդական մետրի թնդանօթները չիսուն կիլոգրամանոց կամ 125 գրուանքանոց ռումբերը մի վայրկեանում 304 մետր տեղ են ձգում։ Նոյն այդ գործարանատիրոջ 26 հարիւրերորդական մետրի թնդանօթները 108 կիլոգր. կամ 260 գրուանքանոց ծանրութեան ռումբերը դեռ աւելի մեծ արագութեամբ են ձգում, այսինքն 860 մետր տեղ. իսկ 24 հ. մետրի թնդանօթները էլի նոյն արագութեամբ 160 կիլոգր. կամ 420 գրուանքանոց ռումբերը։ Շնէյդեր Կանէյի 15 հար. մետրի թնդանօթները մի վայրկեանում 40 կիլոգր. կամ 100 գրուանքանոց ռումբերն սկզբնական արագութեամբ 800, 840 և 900 մետր տեղ են ձգում. իսկ Ամերիկայի նաւատորմիղն ունի այնպիսի թընդանօթներ, որոնց ռումբերը 915 մետր տեղ են ձգում, ուրիշ խօսքով մի վայրկեանում մօտաւորապէս մի հազարամետր։ Վերոյիշեալներից պարզ երևում է, որ մարդկանց ներկայումս այս կամ այն մարմնին տուած արագութեան աստիճանն անցնում է երկրիս իւր առանցքի շուրջը կատարած պտոյտի արագութիւնից, որը, ինչպէս յայտնի է, հասարակածի մօտ հասնում է 485 մետրի մի վայրկեանում։

* * *

Օձեր։ — Վերջին ժամանակներս Բենարէսի շրջակայքում տեղի է ունեցել մի այն աստիճանի սարսափելի անցք, որը նոյն իսկ Հնդկաստանի նման մի երկրում, ուր այդպիսի դէպքեր շատ յաճախ են կրկնւում, ցնցող տպաւորութիւն է թողել։ Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ հրաշալիքների այդ աշխարհում օձերի խայթելուց աւելի շատ մարդիկ են կորչում, քան գիշատիչ գազաններն ու ճանկերից։ Հնդկաստանցիներն օձերից աւելի են վախենում քան վագրերից և կամ ինձերից. ուստի և անհնայ կոտորում են, կանոնաւոր կռիւ մղելով նրանց դէմ։ Թունաւոր օձերից ամենից աւելի յայտնին այսպէս կոչուած իտոմայի օձն է, որի խայթը նոյնքան մահաբեր է, որքան և Ամերկայի, Մարտինիկայի, Յէյլոնի, Եգիպտոսի և Կապանդիայի իժերինը։ Այս օձի կծածն անբուժելի է և անխուսափելի մահ՝ նրա հետևանքը։ Օձորների պարապմունքը մեծ շահ է բերում իրենց, բայց և անչափ վտանգաւոր է։ Ժուռաբութիւնը, ի հարկէ, այն չէ, որ տեղն ու

* Ով կամենայ աւելի մանրամասն ծանօթանալ ծաղկահատութեան գործին և Ջէննէրի գիւտի պատմութեանը, թող կարդայ հայերէն՝ 1) Դոկտոր Ֆէշթմայշէեանի օգտաւէտ երկը՝ «ՊԱՏՈՒԱՍՏԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ». Պօլիս հրատ. 1884 թ. 2) Տիկին Տիրուհի Կոստանեանցի (տիկին Մարգարիտ) «Ջհննէր» վերնագրով ժողովրդական գրքոյկը։ Ծան. Թարգմ.

տեղն սպանեն այդ սողուններին և անգղիական վարչութիւնից նշանակուած առաջ վարձատրութիւնն ստանալ կարողանան, այլ այն, որ շատ անգամ հարկն ստիպում է ողջ բռնել նրանց օձ պարածողների, գիտնական հաստատութիւնների, ժողովածուների և կամ կենդանաբանական այգիների համար։ Անցեալ ամառուայ երեկոներից մէկն էր, երբ ամբողջ Բենարէսին քաջ ծանօթ օձորս Աղալին որսորդութիւնից տուն վերադարձաւ հարուստ աւարով, որ բաղկացած էր մի քանի տասնեակ կենդանի օձերից։ Այս շնչաւոր կողոպուտն առած գետում էր հաստ կաշուէ տոպրակի մէջ, որ կապուած էր գոմշի երկտակ կաշուց։ Ըստ իր սովորութեան, Աղալին ամենամեծ զգուշութեամբ դատարկեց օձերն մի մեծ կիսատակառի մէջ, որն իր սենեակի մի անկիւնում էր դրուած։ Երդէն շատ ուշ էր, և յոգնած որսորդը, որ բոլորովին միայնակ էր ապրում, անկողին մտաւ, վերմակը վրան քաշեց և րոպէ չանցած քնեց։ Թշուառականը մոռացել էր ինչ ամենից կարևորն էր, չէր փակել տակառի բերանը։ Լուսադէմին Աղալին մի անբացատրելի սառն զգացումից՝ զարթնում է, բաց անում աչքերը և սարսափով տեսնում, որ բոլորովին ծածկուած է օձերով, որոնք անկողնու տաքութիւնից գրաւուած, այդտեղ էին հաւաքուել։ Բաւական էր մի թեթև շարժում, մոյլ հառաչանք և կամ հազիւ լսելի մի ճիչ, և անխուսափելի մահը վրայ կհասնէր։ Աղալին այդ շատ լաւ գիտէր և չի շարժուում։ Օձերը սողում են նրա մարմնի վրայով, փաթաթուում են ձեռներովն ու ոտներովը, լիզում են իրենց պաղ լեզուներովը նրա ականջներն ու շրթունքները, սակայն նա մնում է անշարժ, ինչպէս քար, ոչ միայն երկիւղից, թէ կարող են կծել, այլ և մի դիւթիչ ազդեցութիւնից։ Վերջապէս հասաւ ցանկալի առաւօտը և ծագեց փայլուն արևը։ Աղալին գիտէր, որ շուտով իր մօտն է գալու հարևան տանտիկինը, որը և նրա տնտեսն էր։ Այդ պատճառով անհամբեր սպասում էր նրան, ինչպէս փրկիչ հրեշտակի, և յոյս ուներ, թէ նա անշուշտ կարող կլինի ազատել նրան մահուանից։ Նրա միակ յոյսը նա էր, սակայն նա էլ ով գիտէ երբ է գալու։ Բայց ահա և նա։ Օձերը նրան տեսան, թէ չէ, բարձրացրին իրենց գլուխները։ Շատ պարզ է, նրանք դժգոհ մնացին, որ եկել են և նրանց խաղաղութիւնը վրդովել են ուզում։ Կատաղած, իրար են անցնում, շչում ու սուլում և աւելի ու աւելի դուրս հանում իրենց երկճղի լեզուները։ Հնդկուհին խորհրդաւոր կերպով մատը շրթունքներին է տանում, ուզենալով հասկացնել, թէ իմացաւ բանն ինչումն է և թէ ինչ պէտք է անէ նրան ազատելու համար։ Մի քանի րոպէից նա կրկին ներս է մտնում, ձեռքին կաթով լիքը մի մեծ կովկիթ։ Նա շատով կաթի ամանը սեղնեակի մէջ տեղն է դնում և մի երկու ոստիւնով դուրս թռչում շէմքից։ Իսկ օձերը, իրենց խիստ սիրած խմելիքի հոտից հրապուրուած, մէկը միւսի ետևից թողնում են թշուառ որսորդի մարմինը, որը, վերջապէս, զգում է, թէ կարող է ազատ շունչ քաշել։ Նրա անդամներն այլևս ճնշում չեն զգում և այն սառը զգացումը, որ բոլորովին ընդարմացրել էր նրան, հետզհետէ պակասում է։ Եւ այսպէս Աղալին շուտով կազատուի իր անխիղճ դահիճներից։ Սակայն նրա մարմնու վրայ գեռ մի հինգ վեց հատ մնում են։ Մի կարճ միջոցից յետոյ, որ տարիներ էին թուում մնային չորսը, երեքը, երկուսը։ Վերջապէս մնաց մէկը, որը կարծես, միտք չունի բաժանուելու նրա ձախ ձեռքից, որի վրայ իր ամբողջ մարմնով պինդ փաթաթուել էր։ Զարհուրելի տանջանք։ Ինչեր չքաշեց նա, մինչև վերջ ի վերջոյ, այդ մէկն էլ կամի ամանի կողմն ուղղուեց։

Ասում են, որ մինչև անգամ այս քստմնելի պատահարից յետոյ էլ, Աղալին շարունակում է իր վտանգաւոր պարապմունքը, չի դադարում օձեր որսալուց։

***

Ա՛նձեռ խմբագիր։—Տեքսասում հրատարակուող «Times Riview» թերթը խմբագրւում է մի ճարտար ու ճարպիկ մարդու ձեռքով, որը մարմնի հէնց այդ կարևոր անդամից բոլորովին զուրկ է։ Նա թէ գրում է և թէ ամէն աշխատանք կատարում է իր ոտների մատներով։ Այդ պարոնն անձեռն էլ ծնուել է սրանից 30 տարի առաջ։ Սակայն մեծ ընդունակութեանց տէր լինելով և միևնոյն ժամանակ չափազանց փառասէր, որոշում է, չնայելով իր մարմնի այլանդակ կազմութեան, աշխարհում աչքի ընկնող դիրք ձեռք բերել։ Նրա ծնողներն այնքան աղքատ էին, որ նրա այդ փառասիրական ձգտումներին որևէ կերպով բաւականութիւն տալ չէին կարող։ Բայց հաստատակամ երիտասարդը չվհատուեցաւ։ Շնորհիւ իր մտաւոր կարողութեանց և տոկուն աշխատասիրութեան, այս հաշմանդամ հերոսը կարողացաւ հասնել իր ցանկալի նպատակին։

Մի քանի տարի դպրոցի դասընթացն աւարտելուց յետոյ, նա համալսարան մտաւ և իր համար մասնագիտութիւն ընտրեց իրաւագիտութիւնը։ Այդ տեղ էլ յաջողութեամբ վերջնական քննութիւն տալով, աստիճանով մտաւ և հինգ տարի երգուեալ հաւատարմատարի պաշտօն էր վարում ամենայն բարեխղճութեամբ։ Եւ վերջապէս գնաց «Times Riview» թերթը, որն այդ միջոցում շատ անշան թուով բաժանորդներ ուներ։ Նրա խմբագրութեամբ այդ թերթը շատ շուտով ոչ միայն բազմաթիւ բաժանորդներ ձեռք բերեց, այլ նաև գարձաւ Տեքսասի ամենայարգելի ու ազդեցիկ թերթերից մէկը։

Պէտք է ասել, որ նա մանկութիւնից սկսած ջանք էր թափում ձեռքերի անելիք գործը ոտների մատներով կատարել և նոյն իսկ իր ընկերների հետ խաղալիս հազար ու մի հնարք էր փնտռում խաղը տանելու, և կամ թէ չէ, նրանցից ոչ մի բանում յետ չմնալու։

ՅԱԻԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ

ԵՐԿՈՒ ՎԱՒԵՐԱԳՐԵՐ Տ. ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՉԵՌԱԳԻՐՆԵՐԻ ՀՈՂՈՎԱԾՈՒԻՑ։

Մօտ երկու տարի է, որ Մայր Աթոռոյս Տպարանին է յանձնուած տպագրութեան համար իմ (1878—1898) *հատարած ձեռագրերի, ժողովածուների, եւ հնութեանց Ցուցակը՝ աշխատութեամբ պ. Ց. Ց. Թօփճեանի, եւ շուտով լոյս կտեսնի։*

Հարեւանցի յիշեմ միայն, որ ցարդ յաջողել է ինձ ձեռք բերել մի պատկառելի հատաքածու հետեւեալ նիւթերի վերաբերեալ։

ա) Նախապատմական եւ պատմական հնութեանց մնացորդներ, որոնց թիւը հասնում է երկու հազարի (2000)։

բ) Հայերէն, Թուրքերէն Պարսկերէն եւ Արաբերէն ձեռագիրներ, վեց հարիւր հատոր (600)։

գ) Ռուսերէն, Հայերէն, Տաճկերէն, Պարսկերէն եւ Արաբերէն՝ հրովարտակներ կոնդակներ եւ կալուածագրեր (բնագիր եւ պատճէն) մօտ չորս հազար։

Տպագրութեան համար պատրաստած է.

Ա) Նիւթեր Աղուանից պատմութեան։

ա) Հրովարտակներ Քրիստոնեայ եւ Մահմետական զահակալների յանուն Աղուանից։

բ) Կոնդակներ եւ թղթեր Աղուանից կաթուղիկոսների եւ մետրապոլիտների

գ) Նամականիք Աղուանից մէլիքների եւ իշխանների։

դ) Կալուածագիրք Աղուանից վանօրէից եւ։

Բ) Նիւթեր Հայոց պատմութեան,

ա) Հրովարտակներ քրիստոնեայ եւ մահմետական զահակալների յանուն Հայոց եկեղեցականաց։

բ) Կոնդակներ եւ գրութիւններ Հայոց կաթուղիկոսների եւ քարոզապատճառական հոգեւորականների։

գ) Գրութիւնք տպագրի իշխանաց են։

դ) Կալուածագիրք Հայոց վանօրէից են։ Օտարալեզու վաւերագրերի բնագիրը եւ թարգմանութիւնը ի միասին կհրատարակուին։

Բոլոր վաւերագրերը կհրատարակուին նոյնութեամբ, միայն համառօտ նկարագրութեամբ եւ ծանօթութիւններով։ Իրրեւ նմուշ Արարատի արգոյ ընթերցողներին տալիս ենք մեր ժողովածու թղթերի գ. պահպանակի թիւ Ա եւ Բ վաւերագրերը[1]։

Յ. Ծ. Վ. Դ.

---

1. Անցեալ դեկտեմբերի համարում «Թարգման Ամրաւի կամ Շարաճնամայի» մասին գրել հիմի, որ հայ բարգմանութեան հետ կհրատարակենք եւ պարսկերէն բնագիրը։ Բայց պ. Ց. Մանանդեանից իմացանք, որ այդ պատմութեան թէ պարսկերէն բնագիրը եւ թէ Ժրանսերէն բարգմանութիւնը արդէն հրատարակուած է Ս. Պետերբուրգ գիտութեանց ակադեմիայի կողմից, աշխատութեամբ Վելիամինով Զեռնովի (*Веліаминовъ Зерновъ*) 1860/62 թուականներին։

Ա.

Ժողովածու. Գ. Թիւ. 1. Անուն. Ձեռագիրը կամ ստորագրութիւն։ Նիւթ. Թղթեայ (սպիտակ)։ Հանգամանք. Ծալուածքը կոտրուած։ Մեծութիւն. 19×24 սմ։ Տող. լիւ. 22. Թերթ 10։ Գիր. նօտր։ Սկզբնատառք. գլխագիր։ Գրիչ. Աբրահամ վարդապետ (հպս)։ Տուող. Աղուանից Սիմէօն կաթուղիկոս։ Ստացող. Ծակոր Հայոց և Երեվիա Աղուանից կաթուղիկոսութիւք։ Ժամանակ. ՌՃՀԶ. (1126—1677)։ Տեղի. Սուրբ Էջմիածին։ ? Պնիք. կարմրաներկ՝ Սիմէօն կաթուղիկոսի, Սեւաներկ՝ Հայոց Աբրահամ, Զաքարիա, Անդրէաս, Պօղոս, Թադէոս, Գալուստ, Պետրոս, Յօհան, Մկրտիչ, Սարգիս և միւս Զաքարիա արհիեպիսկոպոսաց Ս. Էջմիածնի։ Տեղեկութիւնք. վաւերագրիս պատճէնը յայտնի չէ երբ է գրուած։ Թերթի պարապ կէսի միւս երեսի գրութիւնն է՝ «Սիմէօն Աղուանից կաթուղիկոսի ձեռագրի սատան է որ Ծակոր Հայոց և Երեմեայ Աղուանից կաթուղիկոսացն է տուել»։ Բովանդակութիւնն է այսպէս՝

Է՞„

Է.
ՍԻՄԷՈՆ ԿԸՂԿՈ
ԱՄԱՓ.

Որոյ զասլն առ իս ունելով
զասւատս զայս կնքեցի.

Առաջի Ա՛յ և ա՛մ սրց Ն՛ր, ես Նուաստ Սիմէօն կթ՛ղկոս | Ազուանից՝ զայս գիրս այսու պատճառա՛ գրեցի, | որ իմ մէջ, և Երեմիայ կթ՛ղկսին մէջ, թէ որքան ազմուկ և խռովի՛ | էր անկած մինչև հիմա, ոչ լինի միսամիօջէ գրել ղերայ ամենե|ցուն յայտնի է„ որոյ սակս բազում և ազգի ազգի խօսք և ման|ասարներ շատ է եղած յաղագս մերոյ կթ՛ղկա՛ն և սրբ Աթ՛ոյն | գանձասարայ„ Զայս թուղթս այսու պայմանա՛ս տուի մեր սիրելի | եղբայր Երեմիայ կթ՛ղկսին, յորժամ զիմ անուա՛ն կթ՛ղկա՛ն | ուղարկեն, ի թա|գաւո՛րէն թամամել՛՛ առնում ի ձեռս իմ Յակոբ | հոգևոր տիրի ձեռաքն և հրամանա՛ն, զայս վերոյ գրե՛լ սանտա|ներս տամ ի ձեռն Երեմիայ կթ՛ղկսին, և զայս խորհուրդս | որ ը՛ Երեմիա կթ՛ղկսին խօսեցաք սակս սրբ Աթ՛ոյն գանձասարայ | հաստատուե՛ն կրկնակի „յայնժամ հրամանա՛ վերոյ գրեալ վեհին | կրկին ուխտիւ՛ք և դաշամբք հաստատեցից„ զկրա՛ ես նմա թուղթ | եմ տո՛ւեալ թէ զոր ինչ առնեմ առանց հրամանի՛ քո չառնեմ՝ որ|քան կենդանի իցես„ իսկ եթէ մինչև իմ հայոց երկիր գնայն | նմա կամ վաղձանի պատահի կամ յօտար երկիր որ ոչ լինի ձեռնա|հաս ես զայս վերոյ գրեալս կատարեմ և առանց պատճառի„: | Այլ և զայս հաստատաբար գրեմ Սիմէօն կթ՛ղկոս՝ որ ամեն|ևին իմ մարմնաւո՛ր աղգականացն կթ՛ղկսուե՛ անուն չլինի, | որ թէ իմ ազգէն սևագլուխ այլ յառաջ գայ որ ես յայս | կթ՛ղկսուե՛ յաստիճանս չհրամիրեմ„՝ որ թէ զայս գրեցե|լոցս | գառնամ այլ ինն մատաճեմ պատապարտիմ յԱ՛յ | և յա՛մ սրց Ն՛ր„ գրեցաւ ի Ո՛ի

ճՀԶ թուին. յօգոստոսի
Ի՛Ե„ իմով ձեռամբս
Սիմէօն կը՛ղկո Ազո՛անից:

Մեք ո՛ր և մեծի աթ՛ոյս | էջմիածնի մխոքան Աբք|եպս՛ունքս, զբուն հեղի նաին այսմ տաւտախս | տեսեալ կնքեցաք:

Քի-ծ՛ն արքահամ վարդ՛ապ. զաւազան՝ ը՛ քահ՛ն Ղազար հաճախեալ է՛ն:
Քի. ծ՛ն զ՛քր վր՛ղ ՒՃՂ.Ը, Զաւաքիա եպ՛ս աւաքն՛ըդ Ի՛ջեւանցի:
քի. ծո ան՛ո՛ղ վր՛ղ, 1194 պհոտակալ Անդրէաս եպ՛ս:
Քի. ծ՛ն պօղոս վրդ. Քամբրհնց Պօղոս եպ՛ս:
Թ՛ղ վր՛ղ, Թադէոս եպ՛ս:
զլատ վր՛ղ, Իսրա՛ել եպ՛ս:
Պարս վր՛ղ, 1201 Պետրոս եպ՛ս:
Ծոհան վր՛ղ, Յովհան եպ՛ս:
միկրտիչ վրդ՛ապ. 1210 Տէրտէրան Մկրտիչ եպ՛ս:
սարգիս վրդ՛ապ, Բաբգէն եպ՛ս:
քի ծո Զաքարիա վր՛դպ, ՌՄՊ Զաւաքիա եպ՛ս:
Տեղի կնքոյ. Սիմէօն կը՛ղկո Ազո՛անից:
Տեղի կնքոյ. Պետրոս եպ՛կո: *Տեղի կնքոյ. Ա՛բեղիս եպ՛կո*

Բ.

Ժողովածու. Դ. Թիւ. 2. Անուն. Թուղթ դաշնագրութեան Նիւթ. Թղթեայ (սպիտակ) Հանգամանք. խնամքով պահուած. լուսանցքները կարկատած: Մեծութիւն. 32×60 սմ. Տողք. 28. Գիր. խոշոր նօտրագիր: Սկզբնատառք. գլխագիր: Գրիչ. Ծովանէս Տուող.

հոգևոր և մարմնաւոր համայնք Աղուանից։ Ստացող. Աղուանից Երեմիա կաթուղիկոս։ Ժամանակ. Ռճկ (1140—1691)։ Տեղի. Արցախ նահանգում։ Կնիք. Աղուանից չորեքտասան եպիսկոպոսաց, երկու վարդապետաց, երկուտասան քահանայից, հինգ մելիքաց, եօթը տանուտերաց, քսան իշխանաց, վաճառականաց, վարպետաց ևն։ Տեղեկութիւնք. վաւերագիրս գրուած է երկու թերթի վերայ, որոնք կպցրած են իրար։ Ներքևի լուսանցքի պարապ տեղից կարուած է։ Կնիքներից տասներկուսը պարակերէն են փորագրուած, երկուսը՝ կէսը հայերէն կէսը թուրքերէն։ Բովանդակութիւնն. է այսպէս.

Է՛

Յուսալի անմահին հօր, Եւ կամաւն ամենակալին որդւոյ։ Եւ տուն տուողութեամբ հոգւոյն սրբոյ։ Առաջի ամենասուրբ երրորդութեան, և համայն սրբոց և հրեշտակաց նորին։ Մեք բոլոր երկրիս աղուանից, Առաջնորդք, վարդապետք, քահանայք, Մելիքք, Երեսփոխք, տանուտէ՛րք, վաճառականք, և հողագործք, և առհասարակ մեծ և փոքր ժողովուրդք, որք եմք սեփհական թէմ և վիճակ հայրապետական աթոռոյն սրբոյն Գրիգորի սր դանձասարայ։ Որոյ սակս գրեցաք այս թուղթ գաշնադրութեամբ, և նամակ ուխտի և միաբանութի՛ւն այսպէս. քանզի որ մերումն ժամանակի երկու կթո՛ղկք եղեն հակառակ միմեանց և աւերիցին զաթոռն մեր սր գանձասար, և մեք երբեմն ն՛ր կողմն լինելով և երբեմն ն՛ր, ոչ գիտելով թէ ով ի՛նոցանէ բարեկամ իցէ աթոռոյն մերոյ, և այժմ իմացաք ճշմարտութի՛ւնք որ երեմի՛ա կթո՛ղկան զոր ինչ ժողովուածն մ՛ան աթոռոյն է, և զոր ինչ սիմոնն հաւաքուած իւր հօր առունն է մնդում և այլ տեղ կորուսանում, մանաւանդ մինչև յայսօր խաբեաց զմեզ ասելով կերթամ գանձասար և ոչ գնաց ուխտազնից լինելով, և այժմ ամ տեղիս պարսաւէ զաթոռն մեր և արհամարէ զբերքութի՛ան ն՛ր։ Վասնորոյ գրեցաք պայման և սահման և հաստատեցաք կնքով և մօհրով, այսուհետև մեր հայրապետն Երեմիա կթո՛ղկան է, այլ սիմոնին հետ բան չունիմք, զկնի այսորիկ ով որ զսիմոնն ուզէ և կթո՛ղկի տեղ դնի՝ թէ վարդա՛պետ, թէ ե՛պս, թէ քահանայ և թէ աշխարհական սևերես լինի և պարտական առաջի այ՝ և սր գանձասարայ աթոռոյն և սր աջոյն Գրիգորիսի, և ով զսիմոնն չի ընդունէ, ամենայն լիցի յայ և ամ սրբոց ն՛ր տամբ և անէօք և զարմօք և զաւակօք, և յամէնից և զայից։ Ամէն։ այսուհետև միախօսք և միասիրտք կանգնեմք, երբ Երեմիա կթո՛ղկան գայ մեր մէջն իբր մեր հ՛այտ և կթո՛ղկս սիրով ընդունեմք և մեծարեմք, և զիւր կթո՛ղկական իրաւունքն տամք, իսկ եթէ սիմոնն գայ թակեմք ջուղայ առնեմք և գուրս անեմք մեր մէջէն ուր կամի գնայ, այլ և միաբանութի՛ւնք կանգնիմք և որչափ արծաթեղէն ոսկեղէն զառպաճ և այլ զարդ եկեղեց՛ական զոր կորուսեալ է ծախեալ տպրանս աթոռոյն մերոյ գանձասարայ, զամ մի ըստ միոջէ պահանջէմք սիմոնէն և վերէժխնդիր լինեմք վ՛ս մեր աթոռոյն, և այս թուղթ հաստատուն լիցի և ճնասգէ. կամօքն

Ա՛ծ Գրեցաւ ի թ՛վն, ռ՛ի, փետրվար ամսոյ ի տասն։

Ցիւրի ծռ. Պետր. եպս. ես Եւ պերքս վրդպտս յո՛ր յեՀաբռանիք և կամՀ ընկալայ և զպտալ աբի ինեալ հաստատեցի ա՛ն։
յի. բիւ. ծռ. Գրիգ. եպ՛ս բ. Ռճկ։ Ես Գրիգոր եպ՛սկ ատամն նորք ձեռն արանից նմով Հաղորդութեամբ հաւանեալ ինեցայս։
յիւ. ծռ. Մելիխէք եպսկպս. բ. Ռճկ։ Ես Մելիքեքն ե՛պսկ՛ս կնքեցի։
յիւ. ծռ. Դաւիթ ե՛պս բ. Ռճկ. ինչ ասենագրէն Դաւիթն եպ՛սկս գրեալ է։
յիւ. ծռ. Պետրոս եպսկ. բ. Ռճճ. Ես Բարսեղ եպ՛սկս Հաւանեալ ինեցի։
բարս եպկս թվ Ռճկ. ես Բարսեղ եպ՛ս ինեցի։
Ցի ծռ Միքիթար եպ՛ս Հաւանեմ քանի։
ցի. Ցի. ծռ. Սվնս եպս. թվ. Ռճի. ես սվան եպ՛սկ Հաւանեալ ինեցի։
ցի. Ցի. ծռ. Պետր եպ՛սկս. ինչ պերքս եպիս գպտալ է։
ցի. Ցի. ծռ. Բարսեղ եպ՛սկս։
յի. ծռ. Յովհաննէս եպ՛ս բ Ռճժ։

ին ծ՛ոյ ցովսկի վրդպտ. Սկբոնել եպ՛ս հայկենս հառաջնի քանիս:
ին ծո Դաւիթ եպ՛սկի. ինչ գրանվի եպիսկոպոսի կերպարանս ղպտալ է:
Քի ծո ցովսկի եպ՛սկս **ՌՃԼ.**
ին. ծո. ցովսկի վաղճան ՌՃԻԷ. ցովհէփ վր՛ դպ՛ր պ՛ շրջանք հայկենս անպատճառ հառաջնի քանիս:
ին. ծո. Ազարիա վր դպ. բ. ՌՃԼ. ես պղարկս վր՛ դպր գ՛րքիս ինչ ինչ՛ ցն:
ին. ծո մարկոս վրպես:
* *Տէր Յաքսէղ պղտզղ՛ն ձարս երչէրէ ղպ՛ղ արարէ: **
ին. ծո. Տր Անանիա. բ. ՌՃԼԶ. ինչ տէր անանկայիս դպտալ:
Քի ծո տ՛ր մովսես բ. ՌՃԺ. ինչ ո՛ր ծովսկոս դպտալ է:
ո՛ր գալուստ. տէր գալստոյ:
ին. ծո. տր Գ՛յուս բ. ՌՃ. տէր Գալստոյ:
ին. ծո տր ոհան բ ՌՃՒԳ. տէր յոհան ղպէ հաճելս ինէցի:
ին ծո տ՛ր նազարէթ. բվ ՌՃԼԳ. տէր Նազարէթի ղպ՛էն հաճելս ինէցի:
ին ծո. տ՛ր մկրտիչ բ. ՌՃԼԳ տէր Մկրտիչ ղպ՛էն հաճելս ինէցի:
ին ծո տր մարտրոս. տէր Մարտիրոս հաճելս ինէցի:
* *տէր պղարիս կինանցի:*
ին ծո տ՛ր Միխթար. ինչ տէր Միխիթարս գպտալ է:
Դերասրի որդ ովանիս. ինչ տէր յովանէսին գպտալ է:
ո՛ր եղբ ընօտն էեղե:
* *ես մելէ+ ընարշիս պարտս գպտալ արի և մնրեցի:*
Նոգ. Մ. Մելէ+ երկարս հաճելս ինէցի.
* *մելէ+ աչէճն չացաբերբիս ի՛նահանգով գպտալ ես:*
* *ես մելէ+ փերա՛ն էրեցի ի՛ր երչէրս ղպ՛ղ՛ս ողջս գպտալումի՛նովն:*
ին ծո. մկզ. միրզս. ես մելէ+ մէրզախան շահտոս երչէրէ գպտալ ես այս քանիս:
ին ծո յովսեփ. տանտարէր Ճ՛ղնէ:
ին ծո յակոբ. ես տարհագցի տանտարէր յակոբս գպտալ արէ:
ին ծո հնազ բ՛կ բ. ՌՃԼԹ ես տարձ աչէ տանտարէր Գեղացինս ղպ՛ղ արէ:
* *ինչ ճտանչէրս տն՛տէր ախրէ ղպ՛ղ ա:*
* *տավէս խախան կինանայ:*
* *ես տանտարէր Հաճնազար ղպ՛ղ արարէ:*
ին ծո քհար. պհաք տե՛ս ղպտալ:
ին. ծո. Գրիտւոր բ. ՌՃԼԷ. Խզյ Պարխատար:
ին. ծո. յոսեփ. ես մշրեաք երեսփոխան յովսէփս հաճելս ինէցի:
ին ծո յովսեփ. ճանչեցի:
ին ծո Սարգիս բ. ՌՃԼԵ. ճանչեցի Ասրքիս:
* *Ո՞ր Գանյատարայ ձ՛ոյ Սարտախանն դպ՛ղ արէ:*
ին. ծո. Էմիր. դալտ Էմէր:
ին ծո. Աղասի. Աղատ քէչ:
* *Պհարս. ինչ պէտրախս ղպտալ է:*
ին ծո ոհաննես ՌՃԼԶ.
* *ինչ հարտէրատ սրդէ Նպարիս գպ՛ղ է:*
ին. ծո. Պկնգր. պեղնադար:
* *Դամ՛ղ:*
ին. ծո փերդուս ՌՃԼ. ինչ խօզա գաղարէ սրդէ ճէրամնահս գպտալ է:
Յի Քի ծո եաւրի բվ. ՌՃԼԸ. ինչ ճարմանէ սրդէ եաարիս գպտալ է:
Քի ծո եսկար, ինչ եարճարէ ղպտալ է:
ին ծո պապուտ, ես ատաց պապո՛ խալղատղղչի գպ՛ղ արէ:
ին ծո յվ. բվ. ՌՃԼԶ, ինչ յովանէս ձրչ՛ս ղպտալ է:
* *ինչ Ասրքէ սրդէ եարքիս գպտալ է:*
ին ծո խալսում ՌՃԻ. ես պէրացս խալսո՛ն խալղատղչի ղպ՛ղ՛ արէ:
ին ծո գրիգոր. ես Գեղաքաղչի Գրէգորէ սրդէ Թումբաղ ղպ՛ղ արէ:
մարտիրոսի որդի խալսաե՛ր. ես Գոբէնցի խալտատարս ղպտալ արէ:
ատուս. ինչ ատո՛ս ղպտալ է:
Նազար. ՌՃԼ. ես խօզա Նազարս գպ՛ղ արէ:
*
ին ծո Ղազարպկ ՌՃԼԹ. Ոսկանապատցի ղպտալ պէտս է:
ես արճապղչի տանտարէր Թումբիս ի՛ր հանանախատ գպտալ ես այս քանիս:

---

* *Աստղանիշներդ պատկերեն կնիքների համար են. ստորագրութիւնները կնիքների գրից տարբերդու համար ձօտագրով են յառաջ բերած:*

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երիտասարդ Հայագէտ պրօֆ. Meyer-ն Revue critique d'histoire et de litterature 1900, Avril.-ի համարում հետևեալն է գրում իւր հայրենակից և պաշտօնակից հայագէտ պրօֆ. A. Carrière-ի Les huit Sanctuaires de l'Arménie payenne d'apres Agathange et Moïse de Khoren (Paris 1899 in 4°, 29 p. et une Carte). (*Հեթանոս Հայաստանի ութ սրբավայրերը՝ ըստ Ագաթանգեղոսի և Մ. Խորենացւոյ. Փարիզ. 1899. երկ. Ա. Կարրիէր*) շարադրութեան մասին:

Այս բրօշիւրը նուիրուած էր Ch. Schefer-ի (*Խ. Շէֆֆէր*) յիշատակին և ներկայացուած Հռոմի արևելագէտների ժողովին (1899-ին): Շարադրութեան նպատակն էր ցոյց տալ, որ *Մովսէս Խորենացին* Լուսաւորչի դից մեհեանները կործանելու համար յանձն առած 3 արշաւանքներն առել է Ագաթանգեղոսից և ի հարկէ զարգարել, պաճուճել զանազան մանրամասնութիւններով: Նա ցոյց է տալիս Խորենացու այս մասին պատմածների արուեստական լինելը և մանաւանդ է առնում, որ պատմահայրը իրեն աւելի մանուում է արուեստականութեան մէջ նրանով, որ նա բացատրէս Ագաթանգեղոսի յունարէն բնագրի յունական անուններն է գործածում հայոց տեղերի համար: Այս նկատողութիւնը ի հարկէ մեծ նշանակութիւն ունի Ագաթանգեղոսի բնագրի քննութեան համար. ի վերջոյ նա ծաղրում է այն հետևնակներին, որ այս նիւթի մասին վերջին տարիներս դրութիւններ են լոյս ընծայել:

Ց. Թ.

Ձանազան ծառերի տարբեր տարիքը.—Ինչպէս յայտնի է, ծառերի տարիքը կարելի է բաւականին ճշտօրէն որոշել, եթէ ի նկատի ունենալու լինիքն նրանց համակենդրոն շրջանակները, որոնք իսկոյն աչքի են ընկնում, երբ հորիզոնական ուղղութեամբ են կտրուած լինում ծառերի բները: Այս տեսակէտով կատարուած դիտողութիւնները զարմանալի հետևանքներ են ցոյց տալիս: Այստեղ առաջ ենք բերում դրանցից մի քանիսը: Բրազիլիայի յայտնի կոկոսի արմաւենիները 600—700 տարուայ ծառեր են համարւում: Երուսաղէմի Զիթենեաց լեռան վրայ գտնուող Զիթենու ութ ծառերը գոյութիւն ունէին, այդ մասին հաստատուն փաստեր կան, դեռ 1099 թուին, և ուրեմն 800 տարուայ են: Կալիֆորնիայի „Sequoia Gigantea"ն, որի բնի շրջապատը 27 ½, իսկ բարձրութիւնը 91 մետրի է հասնում, շատ հաւանական է, որ 1000 տարուց աւելի հասակ ունենայ: Ադանսոնը Ափրիկայի «Բաօբաբ» կոչուած ծառերից շատերի միջին տարիքը 5000 տարի է որոշում: իսկ Կանդոլն ենթադրում է, որ այն կիսալարիսը, որը Զապուլտեպեկի (Մեքսիկա) մօտն է գտնւում, դրանցից էլ աւելի մեծ հասակ պիտի ունենայ: Հսկայական փիլիկ (попортникъ) ծառը, որ Փլորումն է (Շարլոտենբուրգ) գտնւում, պէտք է առնուազն 8000 տարեկան լինի: Հումբոլդտն հաստատում է, որ Dracoena Draco-ն (վիշապածառ) երկրագնդիս ամենահին ծառանգն է:

* *
*

Ձանձեր կոտրելու դարձ.—Այդպիսի թուղթ ամէն մարդ կարող է պատրաստել. հարկաւոր է միայն մի քիչ մանր ծեծած սև պղպեղ վերցնել, մեղրի հետ խառնել և ապա ստացած շաղախը քսել վրձինով գորշ թղթի վրայ ու մի քանի օր թողնել, որ չորանայ: Իսկ երբ հարկ կլինի գործածել, պէտք է նորից քաղցր ջրով թրջել այդ թուղթն ու դնել մի երես պնակի մէջ, ճանճերն, ի հարկէ, շուտով վրայ կտան և ճաշակելով անուշ պղպեղը, անմիջապէս կատկոտեն: Այս միջոցը, որն իր պարզ կազմութեամբ ամէնքին մատչելի է, այն առաւելութիւնն ունի, որ դրա բաղադրութեան մէջ ոչ մի թունաւոր նիւթ չենք գործ դնում:

ԱՐԱՐԱՏ

1900

Ս· ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

Բաժանորդագին է՝ {Ռուսաստանում 4ր. / Արտասահմանում 5ր.

Խնդրում ենք բաժանորդներին յայտնել իրենց ճիշդ հասցէները։

Հասցէն՝ Св. Эчміадзинъ. Типографическому Комитету.

Արտասահմանի համար։ Rédaction du Journal „Ararat". Etchmiadzine (Caucase)

ՅՈՒՅԱԿ ՎԱՃԱՌԵԼԻ ԳՐԵԱՆՑ ՏՊԱՐԱՆԻ ՄԵՑՐ ԱԹՈՌԱՑ Ս· ԷՋՄԻԱԾՆԻ

	Ր·	Կ·
Ադաթանգեղոսի աղբիւրներից յիշատակ դատակնքացն Գորեա եւ Շմոնի·	—	50
Ադաւակք Գրիգորվի Գաբ· եպ· Ալվ·	—	80
Ատենի ճամագիրք, որ է մատեան հասարակաց աղօթից Ը—րդ տպագր· 1891 թ·	8	—
Աւետարան Տ· Մերոյ Յիսուսի Քրիստ· (ճաշու աւետարան) 1890 թ·	3	—
Աւետարան (փոքրագիր) 1891 թ·	—	70
Աւետարան Իւղաբերից 1892 թ·	1	50
Աստուածաբանական Գիտութիւններ (Ա· Տ· Մխիթարեան) 1895 թ·	—	50
Աստուածպաշտութիւն Հայոց եկեղ· (Ս· ա· քհ· Մանդինեան 1870 թ·	—	70
Ազանիա Նարեկացի գիրք խոստովանութեան (Մխ·բան) 1892 թ·	—	50
Աբրահամ Կաթուղիկոս Կրետացի	2	—
Աղանդաւորք եւ Մոլորութիւնք նոցա ի վարդապետութիւնս Հաւատոյ (Ա· եպս· Դաւթեան) 1890	—	20
Այրի վանք, կամ Նկարագրութիւն Գեղարդայ (վանից Վ· Մանկունի)	—	10
Աղբիւր Բացեալ (Գ· եպս· Բէրդուձեան) 1873 թ·	—	20
Ա· եւ Բ· մնացորդաց գրքերի նորագիւտ Հայ թարգմանութիւնք դր· իո ըԽալաթեան 1896	—	15
Համբակի մշակութիւնը Ս· Մերոչեան	—	20
Հռոմաքանութիւն (բժ· Գ· Տ· Գրիգորեան)	—	15
Հագրեւանդ եւ Ջրաբաշխ գաւառ (Ս· Հայկունի) 1894	1	50
Հաղդատական Աշխարհագրութիւն (Պետերբուրգի հայ ուսանողներ) 1872 թ·	—	50
Հիրք Հերձուածոց (Մխ·բան) 1892 թ·	—	50
Գիրք խոստովանութեան (Մխ·բան)	—	50
Գիրք Հանդիսակատարութեան կայսերական տօնից 1894 թ·	—	50
Դասագիրք Կրօնի Ա· տ· / » Նոյն Բ· տ· / » » Գ· տ·	—	15 / 20 / 30
Դաստիարակութիւն եւ ճարտասանականութիւն	—	60
Դասագիրք Քրիստ· վարդապետութեան (Աբել Արքեպիսկոպոսի) 1875 թ·	—	10
Դասագիրք Հայկական Գայնագրութեան (Ն· Թաշճեան) 1874 թ·	—	50
Դեօլինգերի Նամակները 1892 թ·	—	50
Եօթն խօսք առ տղայս	—	15
Երգք Գայնագրեալ ի ժամագրոց Հայաստանեայց եկեղ 1872 թ·	4	—
Երուսաղէմի Ցովհաննէս Եպիսկոպոսի Թուղթը առ Աբբաս Աղուանից կաթուղիկոս 1866·	—	15
Զաքարիա սարկաւագի պատ· 1870	2	—
Էմին Ռէկիւս· Ռուսական Հայաստ· Արաքսի աւազանը· Ուրմի լիճը եւ առաջաւոր Ասիա (Թարգ մխ·բան) 1892	—	30
Նոյնը Լազիստան· Հայաստան եւ Քիւրդիստան (Թարգ· Մխ·բան) 1893 թ·	—	50
Ընդհանուր պատմութիւն հին դարու (Գ· վրդ· Սուրենեան)	—	50
Նոյն միջին դարու	—	50
Ընդհանրական Ս· Ներսիսի Շնորհալւոյ	3	—
Ժամագիրք (Ձեռագ) 1892	2	—
Ժանտախտ (Բժ·ի· Վ· Արծրունի) 1897	—	20
Ինկվիզիցիա	—	30